



# 21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

5 (69)

ԵՐԵՎԱՆ

2016

# 21-ՐԴ ԴԱՐ

## տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

5 (69), 2016

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

#### **Ալեքսանդր Գասպարիշվիլի**

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ.  
(Մոսկվա, ՌԴ)

#### **Ալեքսանդր Կորնիլով**

Նիժնի Նովգորոդի Ն.Բ. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր  
(Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

#### **Աշոտ Թավադյան**

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

#### **Արամ Սաֆարյան**

Բանասիրական գիտությունների թեկնածու

#### **Արթուր Աթանեսյան**

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

#### **Բաբկեն Վարդանյան**

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական  
Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

#### **Զավեն Եկավյան**

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

#### **Էդուարդ Լ. Դանիելյան**

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

#### **Կարեն Վ. Կարապետյան**

ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

#### **Հրանուշ Հակոբյան**

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

#### **Միհրան Դաբաղ**

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

#### **Մուշեղ Լալայան**

ՀՀ Կ փոխնախագահ

#### **Մամվել Մանուկյան**

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

#### **Մելրան Օհանյան**

Գեներալ-գնդապետ

#### **Մերգեյ Գրիկյան**

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

#### **Վահագն Ազյան**

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար,

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

#### **Վարդան Աթոյան**

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

#### **Վարդան Հարությունյան**

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

# 21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 5 (69), 2016թ.

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Գլխավոր խմբագիր*  
**Գագիկ Հարությունյան**

*Գլխավոր խմբագրի տեղակալներ*  
**Վահագն Ազյան**  
**Վարդան Աթոյան**

*Պատասխանատու խմբագիր*  
**Խոնարհիկ Քարառուղանյան**

*Պատասխանատու քարտուղար*  
**Լուսինե Բաղդասյան**

**Արեստակես Միմավորյան**  
**Դիանա Գալստյան**  
**Կարեն Վերանյան**  
**Վահրամ Հովյան**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

*Գագիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան, Հրայրա Արզումանյան*

Արդի ժամանակաշրջանի տեղեկատվական պատերազմները ..... 4

*Արմեն Ղալեջյան*

Տեղեկատվական գործողություններ իրականացնող բանակային ստորաբաժանումների խնդիրները ..... 15

*Մամիկ Մանուկյան*

Հայաստանում արտագաղթի դիրքորոշումների դինամիկան 2012-2015թթ. .... 25

*Աշոտ Թավադյան*

ՀՀ տնտեսության զարգացման դրամավարկային քաղաքականության ռեզերվները ..... 40

*Վահե Օղաբաշյան*

Նորարարություն և ինովացիոն տեխնոլոգիաներ. խնդիրներ և լուծումներ ..... 47

*Արմեն Մանվելյան*

ՕՊԵԿ հիմնախնդիրները և նրա ազդեցության դինամիկան նավթի համաշխարհային շուկայում ..... 69

*Արեստակես Միմավորյան*

Գիտական սփյուռք-պետություն համագործակցության խնդիրների շուրջ ..... 81

*Գարիկ սարկավազ Ասրյան*

Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920-1933թթ. .... 97

*Վաչիկ Բրուտյան*

Մանկավարժությունը և կրթության փիլիսոփայությունը ..... 111

*Հուշագիր հեղինակին* ..... 119

## ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

### *Գազիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան, Հրայր Արզումանյան*<sup>\*\*\*</sup>

*Բանալի բառեր*<sup>†</sup> տեղեկատվական պատերազմներ, նոքադաքականություն, հաղթանակ, պարտություն:

Արդի զարգացումների դինամիզմը թելադրում է ռազմաքաղաքական ոլորտի պատասխանատուներին հնարավորինս արագ մշակել ռազմաքաղաքական նոր հայեցակարգեր և դրանց կիրառման մեթոդներ: Մակայն նոր մշակումները բնավ չեն ենթադրում նախորդ հայեցակարգերի մոռացություն. հարստացնելով նախորդները՝ դրանք նպաստում են համալիր և արդյունավետ ընդհանուր ռազմավարության ձևավորմանը: Այս օրինաչափությունը հատկապես դրսևորվում է տեղեկատվական պատերազմների (*ՏՊ*) վարման հայեցակարգերում, և այդ իսկ պատճառով *ՏՊ-ին* վերաբերող տեսական մոտեցումների էվոյուցիայի դիտարկումը պետք է ընդունել որպես ակտուալ խնդիր: Չանդրադառնալով Մարտին Լիբիկի՝ «առաջին սերնդի» *ՏՊ-ների* արդեն դասական դարձած ձևակերպումներին՝ որպես սկզբնակետ ընդունենք «ՌԵՆՆ» կորպորացիայի փորձագետների այն դրույթը, համաձայն որի՝ *ՏՊ-ն* դիտարկվում է որպես ինքնուրույն ուղղություն, որը կարող է ընթանալ անկախ այն բանից՝ ռազմական գործողություններ տեղի են ունենում, թե ոչ: Այս տրամաբանությանը ենթարկվող նոր հասարակարգի *ՏՊ* արդյունավետությունը հաճախ շատ ավելի բարձր է, քան անցյալի ավանդական պատերազմներինը:

**«Երկրորդ սերնդի պատերազմներ».** Ժամանակին ռազմարվեստի խոշոր տեսաբան Կառլ Ֆոն Կլաուզիցը տվել է պատերազմի հետևյալ դասական սահմանումը. «Պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով»: Արդի իրողություններն այնքան են տարբերվում Կլաուզիցի ժամանակաշրջանից, որ կարելի է պնդել, թե «քաղաքականությունն է հանդիսանում տեղե-

<sup>†</sup> «Նորավանք» ԳԿՀ տնօրեն:

<sup>\*\*</sup> Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի (Մոսկվա) գլխավոր տնօրեն:

<sup>\*\*\*</sup> Փորձագետ, Ստեփանակերտ:

կատվական պատերազմների շարունակությունն այլ միջոցներով»: Արդի *ՏՊ* հիմնական նպատակը հակառակորդի հասարակության հոգևոր և մտավոր ռեսուրսների նվազեցումն է մինչև կրիտիկական մակարդակի, ինչից հետո երկիրը կորցնում է ինքնուրույնությունն ու ի վիճակի չի լինում էական դիմադրություն ցույց տալ ներագոյի կողմի քաղաքական կամքին [1, 2]: Այս համատեքստում ուշադրություն դարձնենք այն խնդիրներին, որոնց հետևում է «երկրորդ սերնդի» *ՏՊ*-ն:

- Հակառակորդի հասարակությունում բարոյագուրկ մթնոլորտի և սեփական մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորում;
- Քաղաքական լարվածության և քառսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի հասարակական-քաղաքական գիտակցության և քաղաքակրթական կողմնորոշումների մանիպուլյացիա;
- Առճակատումների հրահրման, անվտանգության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական փոխհարաբերությունների ապակայունացում;
- Իշխանական կառույցների տեղեկատվական անվտանգության մակարդակի իջեցում, կառավարման ոլորտում սխալ որոշումներ ընդունելու սատարում;
- Պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն, նրանց հեղինակագրկում, ղեկավար մարմինների վարկաբեկում;
- Սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում;
- Պետության միջազգային հեղինակագրկում, այլ երկրների հետ նրա համագործակցության վնասում;
- Քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում;
- Սեփական մշակութային «կողի» ներմուծում հակառակորդի հասարակության գիտակցությունում՝ մանիպուլյացիոն տեխնոլոգիաների միջոցով:

Դժվար չէ նկատել, որ «երկրորդ սերնդի» *ՏՊ*-ների դրույթները հիշեցնում են Սուն Ցզիի առանձին ստրատագեմները [3]: Այս սերնդի *ՏՊ*-ներում, ինչպես տեսնում ենք, առավել թիրախավորվում է հոգևոր-գաղափարական ոլորտը, որը և պետք է ընդունել հասարակության անվտանգության կրիտիկական ենթակառուցվածք ու մշակել հատուկ մեթոդներ այդ ոլորտի անվտանգությունը պաշտպանելու նպատակով: Հատկանշական է նաև, որ նոր սերնդի *ՏՊ*-ի հայեցակարգերի հեղինակները նշում են, որ նման պատերազմներում կիրառվող տեխնոլո-

գիաները կարող են հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, և դրա վկայությունն են Մեծ Մերձավոր Արևելքում այսօր ընթացող զարգացումները:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով տեղեկատվական հոսքերի անվերահսկելիությունը, արգելող գործողությունների միջոցով գրեթե անհնար է պաշտպանվել ներքին տեղեկատվական դաշտում հայտնվող այնպիսի ինֆորմացիոն ապահովման ռիսկերից, ինչպիսին է, օրինակ, «*հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծումը*», ինչը հաճախ որակվում է որպես «*մշակութային պատերազմ*»: Այս ոլորտում արդյունավետ կարող են լինել միայն տվյալ երկրի հասարակությունում այդ նույն «մշակութային ժառանգության» հանդեպ ձևավորված հստակ պատկերացումները: Կարևոր է նաև նշել, որ վերոհիշյալ ցուցակի շատ կետեր իրենց արտացոլումն են գտել ներկայիս «գունավոր հեղափոխությունների» հետ կապված իրողություններում [4]:

**Նոոքաղաքականություն. «հաղթանակ» և «պարտություն».** «Երկրորդ սերնդի» ՏՊ ռազմավարության իրագործումը *նոոքաղաքականություն*<sup>1</sup> հասկացության բաղադրամաս է հանդիսանում: Այս մոտեցումն այսօր լայնորեն օգտագործվում է միջազգային պրակտիկայում՝ աստիճանաբար դուրս մղելով ավանդական քաղաքականության վարման շատ տարրեր: Նոոքաղաքականությունն արդի պատերազմների բազմակողմանիության («փափուկ ուժ», «հիբրիդային և տոտալ պատերազմներ» և այլն) իմաստային հենքն է, քանի որ դրանք բոլորն այս կամ այն չափով ենթադրում են ռազմական, քաղաքական և հասարակական գրեթե բոլոր տեխնոլոգիաների համակարգված, փոխլրացնող ու մտածված կիրառում: Մասնավորապես, *նոոքաղաքականությունը* թույլ է տալիս հասարակությունում ստեղծել ներազդող կողմի համար շահավետ վերաբերմունք այլ պետությունների հանդեպ, ձևավորել նոր արժեհամակարգ և այլն:

Նոր սերնդի ՏՊ-ում այլ բովանդակություն են ստանում պատերազմի «սկիզբ» և «վերջ», «հաղթանակ» և «պարտություն» հասկացությունները: Մասնավորապես, նման պատերազմները կրում են շարունակական բնույթ և չեն ավարտվում «հաղթանակից» հետո, քանի որ գործողությունները «պարտված» կողմի նկատմամբ շարունակվում են գրեթե նույն «պատերազմական» տեխնոլոգիաների միջոցով: Արմատապես փոխվել է նաև «պարտություն» հասկացությունը: Եթե ավանդական «տաք» պատերազմներում, օրինակ՝ Երկրորդ համաշխարհայինում, պարտված կողմը ստորագրում էր կապիտուլյացիա, հանձնում էր տարածքներ, կրճատում էր իր բանակը, փլուզվում էր նրա տնտեսությունը,

<sup>1</sup> *Նոոքաղաքականություն*՝ բառացի թարգմանվում է որպես գիտակցության, գիտելիքների վրա հիմնված կամ ուղղակի «խելոք» քաղաքականություն (հուն.՝ *նոո* - գիտակցություն):

երկրից դուրս էին տարվում գիտատար տեխնոլոգիաները և այլն, ապա արդի պատերազմներում պարտված կողմը միշտ չէ, որ անգամ ըմբռնում է սեփական պարտությունը: Այս համատեքստում, հենվելով Ս.Ռաստորգունի մոտեցումների վրա, կարելի է «պարտված երկրները» ներկայացնել, մասնավորապես, հետևյալ հատկանիշներով [5].

- Պարտված երկրում տեղի են ունենում գիտելիքների և տեղեկատվության կայուն կրճատում, պետական–ազգային–հասարակական համակարգի տարրերի և ենթակառուցվածքների ոչնչացում: Համակարգային բնույթ կրող հասարակության նման «պարզունակացումը» պարտված երկիրը դարձնում է անվտանգ հաղթողի համար:
- Պարտված երկրից դուրս են բերվում գիտատար տեխնոլոգիաները, բայց ոչ այնպես, ինչպես դա ընդունված էր անցյալում<sup>1</sup>: Սկզբունքային տարբերությունն այն է, որ «դրսից կառավարողները» կարող են փոխել պարտված պետության զարգացման առաջնահերթությունները՝ փոխարինելով դրանք այսպես կոչված «փակուղային գաղափարներով»: Օրինակ, որպես առաջնային խնդիր նպատակ է դրվում նախկինում տեխնոլոգիապես զարգացած երկիրը դարձնել «զբոսաշրջիկության կենտրոն»: Այս առիթով ակտիվ քարոզչություն է ընթանում ՋԼՄ-ում, կազմակերպվում են «հանրային քննարկումներ» և այլն: Ստեղծված «զբոսաշրջիկային» տնտեսական իրադրությունում պարտված կողմն ինքն է ձգտում «ազատվել» անցյալի՝ ակտուալությունը կորցրած տեխնոլոգիական ժառանգությունից և ինքն է դուրս բերում երկրից սարքավորումները, հնարավոր է՝ անգամ մետաղի ջարդոնի տեսքով: Ակնհայտ է նաև, որ «զբոսաշրջիկության կենտրոնում» իրենց տեղը չեն գտնի և կլքեն հայրենիքը բարձրակարգ գիտաշխատողները, տեխնոլոգները և այլ մասնագետներ: Երբեմն «զարգացման» նոր ծրագրերն իրագործվում են քողարկված տեսքով՝ շեշտը դնելով «ոչ առաջադեմ» «ինդուստրիալ» հասարակությունը «ծառայություններ մատուցող» հասարակության վերափոխելու վրա: Սակայն գիտատեխնոլոգիական և արդյունաբերական ներուժից զրկված հասարակությունը լավագույն դեպքում կարող է «ծառայություններ մատուցել» զբոսաշրջիկային բիզնեսին [7]: Վերոնշյալ ծրագրերի գլխավոր հետևանքներից մեկը երկրի բնակչության ժողովրդագրական պատկերի *որակական* փոփոխությունն է, քանի որ այդպիսով նվազում է գիտելիքներ և

<sup>1</sup> Օրինակ, Երկրորդ համաշխարհայինից հետո հաղթանակած երկրները Գերմանիայից դուրս կրեցին հազարավոր գործարանների և հետազոտական կենտրոնների սարքավորումներն ու տեխնոլոգիական փաստաթղթերը (միայն վերջինների ծավալը կազմեց հարյուրից ավելի շարժակազմ): Այդ երկրից, հաճախ հատուկ ծառայություններին բնորոշ միջոցներ կիրառելով, դուրս բերվեցին նաև բազմաթիվ բարձրակարգ մասնագետներ, որոնց հիմնական մասը սկսեց աշխատել ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ ռազմարդյունաբերական կառույցներում [6]:

հմտություն ունցողների տեսակարար կշիռը և աճում է առևտրային, ժամանցային ոլորտը սպասարկողների հատվածը [8]:

- Պարտված երկրում, գիտատեխնոլոգիական ներուժի նվազեցման համատեքստում, բացի վերոնշյալ տիպի մեխանիզմներ ստեղծելուց, կոնկրետ աշխատանք է տարվում նաև հետազոտական կառույցների հնարավորությունների սահմանափակման ուղղությամբ [1]: Օրինակ, հետխորհրդային որոշ երկրներում իրագործվել է «Արծաթե բանալի» («*Silver Key*») անվանումը կրող համալիր գործողություն, որի ընդհանրական նպատակն էր գիտական կառույցներին «հուշել» անարդյունավետ հետազոտական աշխատանքներ (այդ ծրագիրը կրում է «Կեղծ նպատակ» («*False aim*») անվանումը): Մեկ այլ միջոց է դրամաշնորհային քաղաքականությունը, ինչը հետազոտողներին դրդում է կատարել «իմիտացիոն» աշխատանք և լուծել ոչ հրատապ խնդիրներ: Հատկանշական է, որ այս ծրագիրը ստացել է «*Spoilt weapon*» անվանումը, որն իմաստային առումով կարելի է թարգմանել որպես «Փչացնող զենք»՝ նկատի ունենալով այն դրամաշնորհային գումարները, որոնցով հրապուրվում են հետազոտողները:
- Պարտված երկիրը սկսում է լուծել նախկինում իրեն ոչ բնորոշ խնդիրներ, որոնք իրականում բխում են հաղթողի շահերից: Այլ խոսքով՝ պարտված երկրի ընդհանրական ռեսուրսներն ի սպաս են դրվում ոչ թե զարգացման և սեփական շահերի պաշտպանման գործին, այլ հաղթող կողմի պահանջների կատարմանը:
- Պարտված երկրի հասարակությունում, համապատասխան քարոզչական տեխնոլոգիաների միջոցով, «օգնում» են ձևավորել նոր «ազգային հիշողություն», ստեղծվում են նոր «միֆոլոգեմներ»: Օրինակ, եթե պարտվող երկիրը հետխորհրդային հանրապետություն է, ապա բացասական վերաբերմունք է ձևավորվում խորհրդային պատմական և մշակութային անցյալի նկատմամբ, հերոսացվում են խորհրդային համակարգի դեմ պայքարի անգամ այն դրվագները, որոնք վերաբերում են պատերազմում նացիստների հետ համագործակցած խմբավորումներին: Նման սկզբունքով ձևավորվում և ներդրվում են նոր հասկացություններ և իդեոլոգեմներ, որոնք համապատասխանում են հաղթող կողմի աշխարհայացքային և արժեհամակարգային պատկերացումներին:

Նշված տեխնոլոգիաների իրագործումը հանգեցնում է նրան, որ պարտված երկիրն ընդգրկվում է հաղթողի ռազմավարության ալգորիթմում և այդպիսով վերածվում նրա արժեքային համակարգի բաղադրամասի: Նման իրավիճակում



պատահական չէ, որ երբեմն պարտված հասարակությունն ընդհանուր առմամբ ոչ միայն չի ընկալում սեփական պարտությունը, այլև ընդունում է այն որպես հաղթանակ կամ, նվազագույնը, որպես ինտեգրացիա «առաջավոր երկրների» հետ: Նման արձագանք հատկապես հստակ նկատվում է այն հասարակություններում, որոնք իրականացրել են այսպես կոչված «գունավոր հեղափոխություններ»:

**«Օվերթոնի պատուհան».** Վերոնշյալ իրողությունների համատեքստում «պարտված երկրները» նաև ավելի զգայուն են դառնում գլոբալ տեղեկատվական տարածքում կիրառվող տեխնոլոգիական ներգործությունների հանդեպ, որոնք նույնպես նպաստում են երկրների «ինտեգրմանը» հաղթողի ալգորիթմներում: Մասնավորապես, հայտնի է «Մաքկինակ կենտրոն» (*Mackinac Center*) Ու Կ աշխատակից Ջոզեֆ Օվերթոնի առաջարկած «համոզման» մեթոդը, (հայտնի է «Օվերթոնի պատուհան» անվանումով), որի միջոցով հնարավոր է կյանքի կոչել ցանկացած գաղափար և դրանք ընդունել անգամ օրենսդրորեն: Համաձայն այս մեթոդի՝ հասարակությունում յուրաքանչյուր գաղափարի համար գոյություն ունի այսպես կոչված «հնարավորությունների պատուհան»: Այդ «պատուհանի» սահմաններում, օրինակ, ինչ-որ գաղափար հնարավոր չէ քննարկել կամ առավել ևս բացահայտ սատարել: «Տեղաշարժելով» այդ «պատուհանը»՝ կարելի է այնպես փոխել «հնարավորությունների հովիհարը», որ նախկինում հանրության կողմից կտրականապես չընդունվող նշված գաղափարը, հետևողական և քողարկված տեղեկատվական գործողությունների արդյունքում, մտնի «ակտուալ քաղաքականության» օրակարգ: Իսկ երբ հասարակությունը դա սկսում է ընկալել որպես կարևոր խնդիր, այդ գաղափարին կարելի է տալ նաև օրենքի տեսք: Ինչպես տեսնում ենք, սա ոչ թե փոքր-ինչ պարզունակ «ուղեղների լվացում» է, այլ ավելի նուրբ տեխնոլոգիա: «Օվերթոնի պատուհանի» արդյունավետ գործելու օրինակ կարող է հանդիսանալ այսպես կոչված ԼԳՏԲ (համասեռամոլ) հարաբերությունների օրենսդրական ամրապնդումը, մասնավորապես՝ ԱՄՆ-ում և ԵՄ-ում: Նախկինում այս հարցին բացասական մոտեցում ուներ քրիստոնեական եկեղեցին: Սակայն ընդհանուր առմամբ հասարակությունում այդ խնդրին առանձնապես մեծ ուշադրություն չէր դարձվում, դա համարվում էր մարզինալներին բնորոշ վարքագիծ, ո՛չ ավելին: Սակայն սկիզբ առան տեղեկատվական հետևողական և սաստկացող գործողություններ, որոնցում շատ էին «գիտական» հիմնավորումները և համապատասխան բովանդակություն ունեցող գրականությունն ու կինոնկարները: Հատուկ շեշտադրում էր կատարվում այն հանգամանքի վրա, որ տոտալիտար Երրորդ ռեյխում և ԽՍՀՄ-ում համասեռամոլների նկատմամբ դրսևորվում էր անհանդուրժողականություն, նրանց հալածում էին: Արդյունքում՝ խնդիրը հասարակությունում ակ-

տուալացվեց, լեզալացվեց և տեղափոխվեց «մարդու իրավունքների» հարթություն: Դրանից հետո մնացածն, ինչպես ասում են, արդեն տեխնիկայի խնդիր էր. այսօր սովորական երևույթ են հիացական հեռուստակադրերը, երբ եկեղեցիներում կատարվում են ամուսնություններ տղամարդկանց կամ կանանց միջև: Ավելին, որպես մարզինալ են ընկալվում նրանք, ովքեր չեն ընդունում նման մոտեցումները: Գրեթե նույն սցենարով ընթացավ նաև «Թեթև թմրանյութերի» օրինականացումը, որոնք այսօր ազատ վաճառվում են մի շարք երկրներում և նույնպես դիտարկվում են մարդու իրավունքների համատեքստում:

Համաձայն փորձագիտական գնահատականների, և՛ ԼԳՏՊ-ի, և՛ թեթև թմրանյութերի լեզալացման հարցում կարևոր դերակատարում ունեն տրանսազգային խոշոր առևտրային կառույցները: Թմրանյութերի վաճառքի և սեռական ծառայությունների շրջանառությունն այսօր կազմում է տրիլիոնավոր դոլարներ, իսկ թեթև թմրանյութերի և համասեռամոլության տարածումը լայնացնում է համապատասխան բիզնես կառույցների շուկան, մեծացնում նրանց շահույթը: Միևնույն ժամանակ, այս ոլորտների զարգացումը կրում է նաև գաղափարախոսական երանգ, քանի որ նոր սպառողական հնարավորությունների ձևավորումը նպաստում է այդ հասարակությունների ավելի դյուրին և նպատակաուղղված կառավարմանը:

**«Երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներ».** ՏՊ տեսական և մեթոդական մշակումների շարքին պետք է դասել նաև այսպես կոչված «Էֆեկտների վրա հիմնված գործողությունների» (ԷՎՀԳ, *effects-based operations*) դոկտրինը: Այս կոնցեպտի նպատակն է հատուկ գործողությունների միջոցով այնպես ազդել հակառակորդի վրա, որպեսզի նա ներագրողի համար ցանկալի ձևով փոխի իր վարքագիծը: Այդ համատեքստում ինչպես առանձին «Էֆեկտը», այնպես էլ դրանց համախումբը կարելի է համարել յուրատեսակ տեղեկատվական-հոգեբանական զենք: Ուստի, փորձագիտական հանրություն ԷՎՀԳ-ն հաճախ բնորոշում են որպես «երրորդ սերնդի» ՏՊ [8]:

Համաձայն ԷՎՀԳ հայեցակարգի, ռազմական գործողությունների պլանավորման և իրականացման ժամանակ որպես կարևորագույն խնդիր պետք է ընդունել հետևյալ գործոնները.

- Իրականացվող գործողությունները պետք է առաջացնեն այնպիսի էֆեկտներ, որոնք գործողություններ նախաձեռնողի համար ցանկալի ազդեցություն են գործում հակառակորդի վարքագծի վրա, ինչն ավելի գերադասելի է, քան նրա զինված ուժերի ջախջախումը;
- Առաջացած էֆեկտները պետք է ազդեն ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, հասարակական, տնտեսական և այլ ոլորտների իրավիճակի վրա;

- Առաջացած էֆեկտները պետք է ազդեցություն թողնեն ոչ միայն հակառակորդի, այլև դաշնակիցների և չեզոք դիրք գրաված կողմերի վրա:

Այլ խոսքով՝ ԷՎՀԳ դոկտրինը կարելի է սահմանել որպես գործողությունների համախումբ՝ ուղղված հակառակորդների, դաշնակիցների և չեզոք ուժերի վարքագծի մոդելի ձևավորմանը խաղաղության, ճգնաժամի և պատերազմի պայմաններում:

ԷՎՀԳ հայեցակարգում հակառակորդի ֆիզիկական ոչնչացումը դառնում է պատերազմի նպատակին հասնելու հնարավոր մեթոդներից և գործիքներից ընդամենը մեկը՝ հարկադրել հակառակորդին հետևել գործողությունների որոշակի գծի՝ ավելի լայն իրականացվող քաղաքականության շրջանակում: Այդ տեսանկյունից ԷՎՀԳ-ն ավելի շուտ ռազմական մտածողության տեսակ կամ համակարգ է, քան թե պատերազմի նոր ձև, որը ենթադրում է ազգային անվտանգության ոլորտի կատեգորիաներով մտածելու կարողություն և, հետևաբար, պահանջում է դուրս գալ ռազմական ոլորտի սահմաններից:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում իտալացի ռազմական տեսաբան, գեներալ Ջուլիո Դուեն իր «Գերիշխանությունն օդում» հայտնի աշխատությունում ներկայացրել է մի շարք դատողություններ, որոնք համահունչ են արդի ԷՎՀԳ հայեցակարգային դրույթներին.

- Արդի պատերազմը թույլ չի տալիս տարբերություն դնել զինվորական և քաղաքացիական բնակչության միջև;
- Օդային պատերազմի արագության և բարձրության առավելությունները զրկում են հակառակորդին հարձակողական օդային ռազմավարության դեմ լիարժեք պաշտպանական միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից;
- Պետությունը և հասարակությունը պետք է պատրաստ լինեն սկսել հակառակորդի բնակավայրերի, կառավարական և արդյունաբերական կառույցների զանգվածային ուժեղացումը, առաջինը հարվածել և հարվածել ուժեղ կոտրելու համար հակառակորդի քաղաքացիական բնակչության ոգին, հակառակորդի կառավարությանը խաղաղություն խնդրելուց բացի որևէ այլ ընտրություն չթողնելով;
- Դրան հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է անկախ օդուժ զինված մշտական մարտական պատրաստվածության մեջ գտնվող՝ հեռահար գործողության ուժերով:

Պատահական չէ, որ նման հայացքներ ունեցող գեներալը դեռևս 1915թ. առաջարկում էր Ավստրիայի տոտալ ուժեղացման համար օգտագործել 500 ուժա-

կոծիչ: Ջ. Դուեի դոկտրինը մեծ ազդեցություն ունեցավ ռազմաօդային ուժերի զարգացման և դրանք որպես ինքնուրույն զորատեսակ կիրառելու ռազմավարության վրա: Այդ դոկտրինի կիրառման օրինակները բազմաթիվ էին Երկրորդ համաշխարհայինի տարիներին: Գերմանացիները, կատարելով Հիտլերի անձնական հրամանը և հետևելով Դուեի դեղատոմսերին, 1941թ. ուրբակոծեցին անգլիական Քոնվենթի քաղաքը, ինչը խլեց մոտ 600 խաղաղ բնակչի կյանք: Անգլո-ամերիկյան դաշնակիցների կողմից 1945թ. Դրեզդենի ուրբակոծության արդյունքում զոհվեց 25 հազար մարդ: Սակայն ԷՎԶԳ ամենատպալուրիչ օրինակն առայսօր շարունակում է մնալ 1945թ. ԱՄՆ ձեռնարկած ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ուրբակոծումը, որի հետևանքով զոհվեց շուրջ 240 հազար խաղաղ բնակիչ: Դա ստիպեց ճապոնական կառավարությանն օգոստոսի 15-ին հայտարարել կապիտուլյացիայի մասին, իսկ կարճաժամկետ հեռանկարում, որպես լրացուցիչ էֆեկտ, ազդեց նաև հակահիտլերյան կոալիցիայի մեկ այլ մասնակցի՝ ԽՍՀՄ քաղաքական վարքագծի վրա: Երկարաժամկետ հեռանկարում ատոմային զենքի օգտագործումից առաջացած էֆեկտը պայմանավորեց հետպատերազմյան համաշխարհային քաղաքականության ողջ տրամաբանությունը:

Տեղեկատվական տեսանկյունից դասական ԷՎԶԳ կարելի է համարել ՄԱԿ-ում ամերիկյան զորքերն Իրաք մտցնելը հիմնավորելու նպատակով ընթացող քննարկումների ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի կողմից «բակտերիոլոգիական զենքով» սրվակի ցուցադրումը, «որը ձեռք էր բերել ամերիկյան հետախուզությունն Իրաքում»: Դա, ինչպես հետո պարզվեց, անվնաս սպիտակ փոշի էր եղել, սակայն «էֆեկտն» «աշխատել էր»: Այս կոնկրետ օրինակին կարելի էր և չանդրադառնալ, քանի որ նման հնարքները դիվանագիտական պրակտիկայում հազվադեպ չեն, սակայն Փաուելի «էֆեկտը» հատկանշական է նրանով, որ Իրաք ներխուժումից հետո Մերձավոր Արևելքում սկսեց ձևավորվել այսպես կոչված «կառավարվող քաոսի» իրավիճակը, որն արդեն «էֆեկտ» էր գլոբալ մակարդակով: Այլ խոսքով՝ փոքր «էֆեկտը» ծնեց մեծը:

Ներկայումս ԷՎԶԳ-ի վերաբերյալ մոտեցումները սկսել են կիրառվել ռազմավարական պլանավորման գրեթե բոլոր ոլորտներում: Դա իր հերթին ստիպել է խոսել ոչ միայն պարզապես գործողությունների պլանավորման հայեցակարգի և մեթոդաբանության, այլ նաև *արդյունքների հասնելու վրա հենվող մտածողության* մասին, որում ներառված են հետևյալ կանխադրույթները.

- Օպերատիվ և ռազմավարական արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է միավորել ձեռնարկվող բոլոր գործողությունները և քայլերը (քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և ռազմական);

- Առաջացած էֆեկտներն անհրաժեշտ է մշտապես գնահատել և, անհրաժեշտության դեպքում, պլաններն ու գործողությունները հարմարեցնել փոփոխվող մարտական իրադրությանն ու հակամարտության իրողություններին;
- Անհրաժեշտ է վերլուծել և գնահատել էֆեկտները և դրանց հետևանքները երկարաժամկետ հեռանկարների տեսանկյունից:

Այսպիսով, *ԷՎՀԳ-ն* բնույթով պատերազմի վերլուծաբանական ձևն է հանդիսանում, որը ձգտում է ոչ միայն պլանավորել, իրականացնել և գնահատել գործողությունները, այլև կանխատեսել գործընթացները և հակառակորդի հնարավոր պատասխան գործողությունները: Նկատենք, որ կանխատեսումներ կատարելու մշակույթը (որն ընդգրկում է տասնյակ բավական մանրակրկիտ մշակված մեթոդներ) այսօր հանդիսանում է, մասնավորապես, ռազմական, քաղաքական և տեղեկատվական ոլորտներում իրականացվող ռազմավարության բաղադրամաս [2]: Այս համատեքստում պատահական չէ, որ չինացիները ռազմավարությունը սահմանում են որպես «ապագայի զավթում»:

*Հունիս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Гриняев С.*, Поле битвы – киберпространство, Минск, Харвест, 2004.
2. *Арутюнян Г.*, Распад «системы» и формирование будущего, Ер., НОФ «Нораванк», 2011.
3. Китайская военная стратегия (составитель В.В. Малявина), М., АСТ, 2002.
4. *Հարությունյան Գ., Գունավոր հեղափոխություններ*, «21-րդ ԴԱԸ», # 4(68), էջ 4, 2016թ.: (*Арутюнян Г.*, «Цветные революции», 21-й Век, #4(68), с. 16, 2016).
5. *Расторгуев С.*, Информационная война, М., Радио и связь, 1999.
6. Итоги Второй мировой войны (сборник статей), М., Изд-во иностранной литературы, 1957.
7. *Հարությունյան Գ., Տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակություններ*, «21-րդ ԴԱԸ», # 4(68), էջ 4, 2016թ. (*Арутюнян Г.*, «Информационные и деиндустриализованные общества», 21-й Век, #4(68), с. 16, 2016).
8. ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն. Երկրորդ հաշվետվություն (Ժողովրդագրություն, զարգացման ռազմավարություն և տեխնոլոգիաներ), «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2014թ. (Исследование факторов, влияющих на демографическую ситуацию в РА // Демография, стратегия и технологии развития, Ер., НОФ «Нораванк», 2014г., на арм. яз).
9. *Арзуманян Р.*, Сложное мышление и сеть. Парадигма нелинейности и среда безопасности 21 века, Ер., НОФ «Нораванк», 2011.

## ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

*Գագիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան, Հրաչյա Արզումանյան*

Ամփոփագիր

Հոդվածում համառոտ ներկայացված են երկրորդ և երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հիմնադրույթները: Ներկայացվել և մեկնաբանվել են «հաղթանակ» և «պարտություն» հասկացությունները «նոոքադաքականության» համատեքստում վարվող շարունակական և տոտալ բնույթ կրող պատերազմներում:

## СОВРЕМЕННЫЕ ИНФОРМАЦИОННЫЕ ВОЙНЫ

*Գագիկ Արուտյոնյան, Сергей Гриняев, Рачья Арзуманян*

Резюме

В статье вкратце представлены основные положения информационных войн второго и третьего поколений. Раскрыты изменившиеся понятия «победа» и «поражение» в ведущейся в контексте «ноополитики» перманентной и тотальной войны.

## INFORMATION WARFARE OF THE MODERN AGE

*Gagik Harutyunyan, Sergey Grinyaev, Hrachya Arzumanyan*

Resume

The article presents the main concepts of the second- and third-generation information warfare. The notions of “victory” and “defeat” are interpreted in the context of Noopolitik of permanent and total war.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱՆԱԿԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Արմեն Ղալեչյան՝*

*Բանալի բառեր՝* տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական տարածք, ղեկավարման համակարգեր, ռադիոէլեկտրոնային հետախուզություն, համակարգչային հետախուզություն, տեղեկատվական գործողություններ:

Բազմաթիվ աղբյուրներում (բաց, թե փակ) հանդիպում ենք տեղեկատվական գործողություններ իրականացնող կառույցներին նվիրված ոչ շատ, հաճախ իրարամերժ և կոնկրետ տեղեկատվություն չտրամադրող նյութեր և հոդվածներ: Այս ոլորտին նվիրված ամբողջական տեսական աշխատությունները սակավաթիվ են, ինչը հասկանալի է, քանի որ ոլորտը պարունակում է ռազմական և այլ բնույթի գաղտնիքներ:

ՀՀ ՁՈւ տեղեկատվական գործողությունների զարգացման և հնարավորությունների հեռանկարների տեսլականի պատկերացման համար այսպիսի աշխատանքներն ուղղակի անհրաժեշտություն են:

Հոդվածն ուղղված է մասնակիորեն լրացնելու այդ բացը, մասնավորապես՝ համապատասխան տեղեկատվություն տրամադրելով ՀՀ ՁՈւ սպայակազմին և ոլորտի պատասխանատուներին:

*Չինաստանի ժողովրդա-ազատագրական բանակում (ՉԺԱԲ)* տեղեկատվական գործողությունների վարման և գորքերի տեղեկատվահոգեբանական պաշտպանության ապահովման համար պատասխանատու է ՉԺԱԲ քաղաքականության գլխավոր վարչությունը: Սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը՝ պայմանավորված տեղեկատվական և տեղեկատվահաղորդակցային ենթակառուցվածքների գործունեության խաթարման գործառնությով, ՉԺՀ պետական մակարդակով դիտարկվում է որպես բացառապես տեղեկատվական պատերազմների բաղկացուցիչ մաս: Այդ տեխնոլոգիաների կիրառման գլխավոր նպատակը *«ղեկավարման համակարգերի դեմ պայքարն է»*, որը բովանդակում է

---

<sup>1</sup> ՀՀ ՁՈւ ԳՇ ռազմավարական պլանավորման վարչության տեղեկատվական հակապայքարի բաժնի պետ, գնդապետ:

հակառակորդի գորքերի և սպառազինության ղեկավարման համակարգերի համակարգված ներազդեցության միջոցառումների մի ամբողջ համախումբ՝ տարաբնույթ ծրագրային մեթոդներով, ռադիոէլեկտրոնային պայքարի իրականացմամբ և կրակային խոցման միջոցներով: Համացանցում տեղեկատվական հակապայքարի կազմակերպման գործողությունների համակարգումն իրականացնում է ՉԺԱԲ գլխավոր շտաբի ռադիոէլեկտրոնային պայքարի վարչությունը: Այդ կառույցին են ենթարկվում հակառակորդի տեղեկատվական համակարգերին միանալու հնարավորություններն ու սեփական ղեկավարման ցանցերի պաշտպանությունն ուսումնասիրող մասնագիտացված կենտրոնները, որոնք իրականացնում են նաև տեղեկատվական պատերազմների վարման հնարավորությունների վերլուծություն՝ կիրառելով ՉԺԱԲ կենտրոնական և կայագրային ենթակա գործառնների կողմից իրականացվող տեղեկատվահոգեբանական գործողությունները, ռադիոէլեկտրոնային պայքարի և կապի գործառնների տեխնիկական հնարավորությունները: Ներկայում ՉԺԱԲ-ում փոփոխվում է տեղեկատվական հակապայքար իրականացնող ստորաբաժանումների կազմհաստիքային կառուցվածքը: Չին մասնագետների կարծիքով՝ նրանք պետք է ավելացնեն *համակարգչային հետախուզական և հակահետախուզական, էլեկտրոնային վիրուսային հարձակումների, հակավիրուսային պաշտպանության և այլ տեխնիկական խոցման միջոցներից պաշտպանության ստորաբաժանումներ*: ՉԺԱԲ գլխավոր շտաբի կապի վարչությունում գործում է տեղեկատվական պատերազմի վարման ուսումնական (փորձարարական) կենտրոն: Նրա կազմի մեջ է մտնում Հոնկուի ուսումնական կենտրոնը, որը տեղեկատվական հակապայքարի իրականացման հիմնական ձևերի և մեթոդների մշակման հիմնական ուսումնական մարզադաշտն է: Այդ նպատակով ուսումնական կենտրոնում հիմնվել է տեղեկատվական պատերազմի վարման լաբորատորիա, որտեղ իրականացվում են հետազոտություններ հետախուզության վարման, ՌԷՊ-ի, համակարգչային ցանցերում հակապայքարի կազմակերպման, հոգեբանական պատերազմների իրականացման ոլորտներում: Լաբորատորիան հետազոտում է նաև տեղեկատվության անվտանգության հարցերը, մասնավորապես՝ հատուկ տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցները:

Տեղեկատվական հակապայքարին վերաբերող չինաստանյան հայացքները մեծ մասամբ ձևակերպվում են ամերիկյան տեղեկատվական գործողությունների հայեցակարգերի ներազդեցությամբ (մեկնաբանմամբ): Չին ռազմական մասնագետները կարծում են, որ ապագայի պատերազմներում մարտական գործողությունների հաջողություններն անմիջականորեն կախված կլինեն մարտադաշտում տեղեկատվական առավելությունից, որն իր հերթին նշանակում է ստանալ,



վերլուծել և կիրառել տեղեկատվությունը հակառակորդի վրա ներագդելու նպատակով: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որը ձգտում է համաշխարհային գլոբալ տիրապետության, չինական հայեցակարգը կրում է պաշտպանողական բնույթ, և նրա գլխավոր նպատակը ԱՄՆ-ի կողմից հնարավոր ռազմական վտանգներին հակազդումն է:

Կախված մասշտաբներից և լուծվող խնդիրների բնույթից, ներգրավվող ուժերից և միջոցներից՝ Չինաստանում տարբերակվում է տեղեկատվական հակապայքարի երկու ձև.

- *Հայն իմաստով* տեղեկատվական հակապայքարը կազմակերպվում է պետական բոլոր մակարդակներով: Այն լինում է գաղտնի կամ բաց, իրականացվում է ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակաշրջաններում: Տեղեկատվական հակապայքարի այս ձևը հսկողություն է հաստատում ՉԺՀ ազգային անվտանգությանը վտանգներ ներկայացնող պետությունների տեղեկատվական տարածքի վրա, ինչպես նաև ապահովում է սեփական տեղեկատվական անվտանգությունը:
- *Նեղ իմաստով* տեղեկատվական հակապայքարն իրականացվում է հենց պատերազմի և ռազմական ընդհարումների ժամանակ, սահմանափակ ռազմաթատերաբեմում: Այս տեսակը ստացել է «Ռազմական ոլորտի տեղեկատվական հակապայքար» անվանումը: Նրա հիմնական իմաստը հակառակորդի գործին և սպառազինության ղեկավարման համակարգերին զգալի կորուստ հասցնելն է կամ գերձգրիտ զինատեսակների և բոլոր տեսակի հետախուզության իրականացման համակարգերի կիրառման դժվարացումը:

*Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունում (ՄԹ)* տեղեկատվական հակապայքար հասկացությունը մեկնաբանվում է որպես ապատեղեկատվություն, հակառակորդի պետական ու ռազմական ղեկավարման համակարգերի վրա տեղեկատվատեխնիկական և տեղեկատվահոգեբանական ներագդեցության միջոցառումների իրականացում (մասնավորապես՝ այն անձանց նկատմամբ, ովքեր ղեկավարման ոլորտներում ընդունում են առավել կարևոր որոշումներ), ինչպես նաև սեփական տեղեկատվական անվտանգության ապահովում: Բրիտանական մինիստրների պալատում տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերի համար պատասխանատու է *համատեղ կառավարման գործադիր խումբը*: Խաղաղ պայմաններում խմբի ղեկավարումն իրականացնում է արտաքին գործերի նախարարը: Իրավիճակի սրման դեպքում ղեկավարումն անցնում է պաշտպանության նախարարի իրավասության տակ, որին ենթակա է նաև *ռազմական տեղեկատվական գործողությունների կորորդինացիոն խումբը*: Այս խումբն ապահովում է տեղե-

կատվական գործողությունների վարման համար պատասխանատու բոլոր շտաբների և ղեկավարման մարմինների միջև համագործակցությունն ու գործողությունների համակարգումը, որտեղ կարևոր դեր ունի տեղեկատվական գործողությունների հետախուզական ապահովումն իրականացնող ռազմական հետախուզության շտաբը, որը միջոցառումներ է իրականացնում նաև տեղեկատվական գործողությունների աջակցության խմբի հետ: Խումբն իր գործունեությունն իրականացնում է սոցիալական հետազոտությունների և ենթակառուցվածքների գնահատման բաժնի տրամադրած վերլուծությունների հիման վրա:

Տեղեկատվական գործողությունների ապահովմանը վերաբերող վերջնական փաստաթղթերն ուղարկվում են պաշտպանության նախարարություն և ՄԹ զինված ուժերի միացյալ օպերատիվ շտաբ, որտեղ ոլորտի մասնագետները կանխորոշում են տեղեկատվական գործողությունների նպատակներն ու խնդիրները, մշակում են բարաված ղեկավարման մարմիններին ուղղված կարգադրություններ: Այդ գործունեության մեջ կարևոր դերակատարություն ունի միացյալ օպերատիվ շտաբը (ՄՕՇ), իսկ մարտական գործողությունների թատերաբեմում՝ միացյալ զորքերի (ուժերի) խմբավորման շտաբը: ՄՕՇ-ն իրականացնում է *տեղեկատվական գործողությունների ռազմավարական պլանավորումն ու իրականացումը*: Մարտական գործողությունների թատերաբեմում միացյալ զորքերի խմբավորման (ուժերի) շտաբը (ՄԶԽՈՒՇ) պատասխանատու է պետության սահմաններից դուրս իրականացվող տեղեկատվական գործողությունների անցկացման և ղեկավարման համար: ՄԶԽՈՒՇ-ում առկա են *տեղեկատվական գործողությունների իրականացման խմբեր*, որոնք ուղղակի ենթարկվում են շտաբի հետախուզական վարչությանը:

Ռազմական ստորաբաժանումներում տեղեկատվական հակապայքարի գործողություններն ուրվագծվում են «Կռիվ ղեկավարման համակարգերի դեմ» հայեցակարգի շրջանակներում: Վերջինիս հիմնական խնդիրներն են.

- հակազդել հակառակորդի հետախուզությանը և ապահովել սեփական զորքերի գործողությունների անվտանգությունը,
- մոլորության մեջ գցել հակառակորդին,
- վարել ռադիոէլեկտրոնային պայքար,
- իրականացնել հոգեբանական գործողություններ,
- ֆիզիկապես ոչնչացնել հակառակորդին:

Տեղեկատվական գործողությունները լինում են հարձակողական և պաշտպանողական: Հարձակողական տեղեկատվական գործողությունները զլխավորապես անց են կացվում հետևյալ նպատակներին հասնելու համար. հակառակորդի

ղեկավարության կողմից իրավիճակի ոչ ադեկվատ գնահատում և նրանց կամքի ու ճիշտ որոշումներ ընդունելու հնարավորությունների խափանում: Հակառակորդը պետք է գործի և մտածի այնպես, ինչպես ձեռնտու է բրիտանական կողմին:

*Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունում* (ՌԴ ՊՆ) կազմավորվել է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների, նորարարության, հետազոտությունների և ռոբոտատեխնիկայի համար պատասխանատու ռազմական ղեկավարման մարմին: Համաձայն ՌԴ ՊՆ պլանների՝ այդ վարչության գործունեության ընթացքում մշակվում են սպառազինության և ռազմական հատուկ տեխնիկայի հեռանկարային նմուշներ, կազմակերպվում են հայրենական և համաշխարհային առաջատար հետազոտությունների մշակումներ և վերլուծություններ, տեխնոլոգիաների հավաք: Բացի այդ, վարչությունը պլանավորում է ստեղծել ռազմական, հատուկ, երկակի նշանակության տեխնոլոգիաների միասնական տեղեկատվական ռեսուրս:

*Ռուսաստանի Դաշնության գլխավոր շտաբի գլխավոր օպերատիվ վարչության* կազմում գործում է տեղեկատվական հակապայքարի վարչությունը: Այս վարչության գործունեության նպատակը համագործակցության գործողությունների ժամանակ տեղեկատվական հարվածների և հարձակումների, հոգեբանական և տեղեկատվատեխնիկական գործողությունների, քողարկման միջոցառումների, բարոյահոգեբանական ապահովման, ՌԷՊ-ի, կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանության, գորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների համակցված պլանավորված կիրառումն է: ՌԴ ՁՈՒ տեղեկատվական հակապայքարը հակառակորդի մարդկային և նյութական ռեսուրսների վրա ներգործող միջոցառումների համալիր է՝ ուղղված հակառակորդի կողմից ճիշտ որոշումներ կայացնելու դժվարացմանը, ինչպես նաև սեփական տեղեկատվական համակարգերի պաշտպանությանը:

*Իսրայելի պետության ղեկավարությունն* արաբական աշխարհի դեմ հակամարտության պայմաններում տեղեկատվական հակապայքարի կազմակերպմանը հատկացնում է անհամեմատ մեծ ուշադրություն: Իսրայելում այլ երկրների տեղեկատվական օբյեկտների և հեռահաղորդակցման ենթակառուցվածքների գործունեության խափանման միջոցառումների համար պատասխանատու են ազգային զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության, կապի և համակարգչային համակարգերի վարչությունները: Իսրայելական պետությունների ազգայնականների կողմից համացանցում հաճախակի դարձած կիբեռհարձակումներն Իսրայելին ստիպեցին 2010թ. որոշում ընդունել ստեղծելու այնպիսի ստորաբաժանում, որը կմասնագիտանա կիբեռահաբեկչության դեմ հակապայքարում՝ ինչպես հավանական հակառակորդի դեմ գլոբալ տեղեկատվական ցանցերում, այնպես էլ կառա-

վարական, ուժային կառույցների, ֆինանսական և այլ տեղեկատվական ցանցերում: Դրանց կառավարումն իրականացնում է *գլխավոր շտաբի հետախուզության վարչության ռադիոէլեկտրոնային հետախուզության հատուկ ստորաբաժանումը*: Իսրայելի ՁՈՒ հրամանատարությունը հարակից պետությունների տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի գործունեության խափանման նպատակով կիրառում է իսրայելական ռազմաօդային ուժերի մարտական ինքնաթիռներն ու անօդաչու թռչող սարքերը՝ համալրված իսրայելական և ամերիկյան արտադրության ռադիոէլեկտրոնային ճնշման ժամանակակից կայաններով: Իսրայելի պաշտպանության նախարարության պատվերով շարունակվում են «Սյուտեր» ՌԷՊ տեխնիկական-ծրագրային համակարգային հեռանկարային միջոցի ստեղծման աշխատանքները, որը նախատեսված է հակառակորդի ռադիոէլեկտրոնային հսկողության հաղթահարման, հակառակորդի ՀՕՊ համակարգերի ռադիոկապերով հաղորդվող տեղեկատվության հափշտակման և դրանցում նշանակետերի կեղծ տվյալների և չափորոշիչների ներդրման համար:

Իսրայելի ՁՈՒ ԳՇ հետախուզական վարչությունն ակտիվ համագործակցում է տեղական «Էլրիտ սիստեմս» կորպորացիայի մեջ մտնող գիտահետազոտական և արտադրական ընկերությունների հետ: Իսրայելում կարծում են, որ միջազգային իրավական մեխանիզմների բացակայությունը թույլ է տալիս առանց միջազգային կազմակերպությունների և արտասահմանյան պետությունների հետ համաձայնեցման խոցել ծրագրային-տեխնիկական միջոցների կիրառմանն ուղղված համակարգչային ցանցերը:

Հնդկաստանի Հանրապետությունում տեղեկատվական անվտանգության ապահովման պատասխանատուներն են (կախված առաջադրված խնդիրներից) կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ներքին գործերի և պաշտպանության նախարարությունները: Հնդկաստանի Հանրապետության զինված ուժերի միացյալ շտաբի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունում ստեղծվել է համակարգչային ցանցերի խոցելիության գնահատման ձեռնարկ, որը կիրառվում է ազգային ռազմածովային ուժերում (ԱՌԾՈՒ): Համաձայն այդ փաստաթղթի՝ միավորումներում և զորամասերում ներգրավված քաղաքացիական մասնագետները եռամսյակը մեկ իրականացնում են ստուգումներ: Մասնավորապես, այդ ստուգման խնդիրներն են.

- վերլուծել հեռահար (գաղտնի, ոչ քայքայիչ) ԱՌԾՈՒ-ում ապահովվող համակարգչային ցանցերի տեխնիկական, ծրագրային վարչարարական առկա թերությունները,
- իրականացնել սահմանափակ տեղեկատվության պաշտպանող համակարգերի գաղտնաբառերի ջարդում, *DDOS*, *DOS* և այլ ձևերի կիրառարձակումներ,

- փնտրել և հայտնաբերել բրաուզերներում, փոստային ազենտներում, սերվերների և շլուզների ծրագրերում «թույլ սողանցքներ»:

Հնդկաստանի Հանրապետության զինված ուժերում գորատեսակների միջև տեղեկատվական գործունեության համակարգման, ինչպես նաև այլ ուժային կառույցների հետ համագործակցելու նպատակով միացյալ պաշտպանության շտաբի կազմում ստեղծվել է *տեղեկատվական պատերազմի գործակալություն*: Այդ կառույցի հիմնական գործառույթներն են.

- տեղեկատվական պատերազմի վարման հիմնական ձևերի ու մեթոդների ընտրությունը,
- գորքերի տեղեկատվական անվտանգության ապահովման վերահսկողությունը,
- Հնդկաստանի ԶՈւ գորատեսակների տեղեկատվական պատերազմի մարմինների գործունեության համակարգումը և դրանց կողմից համատեղ գործողությունների կազմակերպումն ու անցկացումը,
- պետության տարածքում ներքին գործերի նախարարության հետ համատեղ տեղեկատվահոգեբանական գործողությունների իրականացումը:

Հնդկաստանի Հանրապետության մասնագետների կողմից մշակվող նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս եզրակացնել, որ դրանց հաջող կիրառման դեպքում կխաթարվեն հակառակորդ պետությունների տեղեկատվական օբյեկտները և հեռահաղորդակցման ուղիները:

*Թուրքիայի Հանրապետությունում* ներկայում ԱՄՆ-ը մշակել է ծրագիր Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարությանը *կից Թուրքական տեղեկատվական գորքերի* պատրաստման նպատակով: Այն իր վրա է վերցրել Թուրքիայի «տեղեկատվական գորքերի» մասնակի ֆինանսավորումը, իսկ մասնագիտացումն ու հմտացումն այդ «ենիչերիներն» անցնելու են Մերձբալթիկայում և Ուկրաինայում, քանի որ այնտեղ ամերիկացիներին հաջողվել է ստեղծել «ստացված տեղեկատվական նախագծեր՝ ուղղված Ռուսաստանի ագրեսիայի հետմղմանը»: Թուրքիայի ազգային պաշտպանության նոր նախարարի համար Պենտագոնի հետ նրա փոխգործակցության նախագիծն այս պաշտոնում առաջինն է: Թուրքիայի Գլխավոր շտաբի պետը նախագիծն իր ապագա մասնակիցներին ներկայացնելիս ասել է, որ Անկարայի ուշադրությունն այս աշխատանքի հանդեպ չափազանց մեծ է, իսկ ծրագիրը փակ է հանրային լուսաբանման համար: Ստեղծված «տեղեկատվական գորքերը» հաշվետու են թուրքական Գլխավոր շտաբին և պաշտոնապես համարվում են Թուրքիայի ազգային պաշտպանու-

թյան նախարարության զինված ուժերին կից «քաղաքացիական անձնակազմ»:  
*Կանխատեսելի է, որ դրանից կօգտվի նաև Ադրբեջանը:*

*Ճապոնիայի պաշտպանության նախարարությունում ստեղծվել է* առաջին հատուկ մասնագիտական ստորաբաժանումը: Նրա նպատակը հաքերների դեմ պայքարն է, ովքեր գնալով հաճախակի են դարձնում հարձակումները պետության ռազմական ենթակառուցվածքների վրա: Ստորաբաժանումը Պենտագոնի մասնագետների հետ իրականացրել է փակ համատեղ վարժանքներ: Նախկինում Ճապոնիայի զինված ուժերի համակարգչային ցանցի պաշտպանությունն իրականացրել են առանձին շտաբներ գործուղված մասնագետները: Նոր կազմավորված ստորաբաժանումը պետք է սերտորեն համակարգի նրանց գործունեությունը, ամրագրի և թույլ չտա բանակի և նավատորմի տեղեկատվական համակարգերի ներթափանցման կամ ճնշման բոլոր փորձերը: Այդ ստորաբաժանման մեջ մտնող համակարգչային ցանցերի ծրագրավորողները և փորձագետները հետագայում պետք է տարածեն իրենց վերահսկողությունն ամբողջ պետական համակարգչային ցանցի վրա: 2015թ. կառավարությանը կից ստեղծվել է կիբեռանվտանգության կենտրոն: Այն կոորդինացնում է այդ ոլորտի ամբողջ քաղաքականությունը, ներառյալ մասնագետների պատրաստումը:

*Հայաստանի Հանրապետության զինված ուժերի* ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում այս ոլորտի զարգացմանը, դրա տեսական և գործնական հմտությունների կատարելագործմանը, մասնավորապես՝ ՀՀ ՁՈՒ-ում մշակված ղեկավար փաստաթղթերով հստակեցված են տեղեկատվական հակամարտության նպատակները, խնդիրներն ու հիմնական սկզբունքները, ինչպես նաև պաշտոնատար անձանց պարտականությունները նման գործողությունների նախապատրաստման և իրականացման ժամանակ՝ թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակաշրջաններում: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմում արդեն մի քանի տարի գործում է *տեղեկատվական հակապայքարի ստորաբաժանումը*, որը ռազմական գործողությունների պլանավորման ալգորիթմում իր առանցքային դերն ու նշանակությունն ունի: Կարճաժամկետ գործունեության ընթացքում տեղեկատվական հակապայքարի ստորաբաժանումը հաջողությամբ իրականացրել և իրականացնում է բազմաթիվ տեղեկատվական գործողություններ (ակցիաներ), միաժամանակ սեփական տեղեկատվական համակարգերը պաշտպանում է հակառակորդի համանման գործողություններից:

Ամփոփելով ժամանակակից բանակում տեղեկատվական գործողություններ իրականացնող կառույցների կառուցվածքներն ու խնդիրները՝ մեկ անգամ ևս նշենք, որ տեղեկատվական պատերազմները ծավալվում են նույն նպատակով ու սկզբունքներով, ինչ որ համագորային պատերազմները, միայն թե՛ տեղեկատ-

վական դարաշրջանում: Տեղեկատվական պատերազմն, առհասարակ, պատերազմի բաղկացուցիչ մաս է, նպատակը այն ռեսուրսներն են, որոնք բաժին են հասնում հաղթողին և թույլ են տալիս առաջ բերել անհրաժեշտ տեսակետներ, գաղափարներ, տարածել և ներդնել դրանք հասարակության շրջանում: Հետևաբար, աշխարհի ժամանակակից բանակների պատասխանատուները գիտակցում են, որ ապագայի պատերազմներում տեղեկատվական «հնարավորություններին» տիրելն ու դրանք կիրառելը դառնում են այնպիսի անհրաժեշտ բաղկացուցիչ, ինչպիսին էր սպառազինությանը, ռազմամթերքին, ռազմական տեխնիկային և այլնին տիրելն անցյալի պատերազմներում:

Մենք ապրում ենք նոր տեղեկատվական դարաշրջանում, որին բնորոշ է պետությունների զինված ուժերի տեղեկատվական պատերազմների վարումը միմյանց դեմ: Միևնույն ժամանակ, տեղեկատվական պատերազմները միշտ չէ, որ պետք է իրականացվեն զինված ուժերի կողմից և ուղղվեն ռազմական օբյեկտների դեմ: Պետությունը, նրա կազմակերպություններն ու կառույցները, արտադրական և կոմերցիոն կառուցվածքները նույնպես պետք է մասնակցություն ունենան և ինքնուրույն իրականացնեն տեղեկատվական գործողություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ցանկացած հակամարտության ընթացքի և արդյունքի վրա: Հետևաբար, այս ոլորտն առաջիկա տասնամյակներում զերակա է համարվելու նաև պետությունների անվտանգային համակարգերի արդիականացման և զարգացման մեջ:

*Օգոստոս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. Информационные войны в киберпространстве - Китай и Индия, <https://interaffairs.ru/news/show/614>
2. Минобороны РФ сформировало хай-тек-подразделения и нанимает кибер-бойцов, [http://www.cnews.ru/news/top/minoborony\\_rf\\_sformirovalo\\_hajtekpodrazdeleniya](http://www.cnews.ru/news/top/minoborony_rf_sformirovalo_hajtekpodrazdeleniya)
3. <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/958509>
4. Информационно-психологическое противоборство в современной войне, [http://armyus.ru/index.php?option=com\\_content&task=view&id=739&Itemid=1148](http://armyus.ru/index.php?option=com_content&task=view&id=739&Itemid=1148).
5. Аппарат психологической борьбы Вооруженных сил Румынии //« Зарубежное военное обозрение», М., № 9, 2007.
6. <http://pentagonus.ru/>
7. Гриняев С.Н., Арзуманян Р.В., Акопян А.А., Хлюстов М.В., Информационная война в Сирии. Анализ, оценки, тенденции, М., АНО ЦСОиП, 2016.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ԲԱՆԱԿԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Արմեն Ղալեյան*

Ամփոփագիր

Հոդվածի առանցքում աշխարհի տարբեր երկրների բանակների տեղեկատվական գործողությունների իրականացման տեսլականն է և այդ խնդիրների լուծման նպատակով ստեղծված ստորաբաժանումները: Ելնելով զինված ուժերի տեղեկատվական գործողությունների նպատակներից՝ ստեղծվում և գործադրվում են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք պետության ընդհանուր տեղեկատվական քաղաքականության ծիրում մշակում և կյանքի են կոչում զինված ուժերի բնույթից բխող տեղեկատվական գործողություններ: Հոդվածում ներկայացված են մի շարք պետությունների, այդ թվում և ՀՀ ԶՈՒ տեղեկատվական գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումների կառուցվածքը և խնդիրները:

**ЗАДАЧИ АРМЕЙСКИХ ПОДРАЗДЕЛЕНИЙ,  
ОСУЩЕСТВЛЯЮЩИХ ИНФОРМАЦИОННЫЕ ОПЕРАЦИИ**

*Армен Галечян*

Резюме

В статье представлены спецподразделения армий разных стран мира, занимающиеся вопросами проведения информационных операций. Исходя из целей информационных операций ВС, создаются и применяются подразделения, которые из общего спектра информационных целей государства разрабатывают соответствующие информационные действия и претворяют их в жизнь. В статье раскрыты структура и задачи подразделений, ответственных за информационные действия некоторых государств, в том числе и Армении.

**THE TASKS OF MILITARY INFORMATION OPERATIONS UNITS**

*Armen Ghalechyan*

Resume

The article is focused on the vision of the information operations in armed forces of different countries around the world and the units established to implement the respective tasks. Considering the objectives of information operations in the armed forces, respective units are established and put into function, which develop and implement information operations stemming from the nature of the armed forces within the framework of the overall information policy of the State. The article presents the structure and tasks of units responsible for conducting information operations in the armed forces of various countries around the world, including those in Armed Forces of the Republic of Armenia.



# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2012-2015ԹԹ.

## *Մամվել Մանուկյան՝*

*Բանալի բառեր՝ արտագաղթ, ռազմավարություն, արտագաղթը պայմանավորող գործոններ, արտագաղթը նվազեցնող ռազմավարություն:*

### *Իրավիճակը և հիմնախնդիրը*

2000-ական թթ. սկզբին, թվում էր, թե սոցիալիզմից կապիտալիզմին անցման տնտեսության կազմալուծման, Ղարաբաղյան պատերազմի և Սպիտակի երկրաշարժի հետևանքով Հայաստանում առաջացած բնակչության արտահոսքի խնդիրը հաղթահարված է: 2001-2007թթ. տնտեսական գլոբալ վերելքի փուլում Հայաստանի ՀՆԱ-ն աճում էր տարեկան միջինը 13%-ով: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում սահմանահատումների սալդոն<sup>1</sup> սկսեց աստիճանաբար բարելավվել: Եթե 2001թ. այն կազմել էր -60.4 հազար, ապա 2002թ. դարձավ՝ -2.7 հազար, իսկ 2006-ին մուտք գործածների թվաքանակը գերազանցեց մեկնածների թվաքանակին 21.7 հազարով (Գծապատկեր 1):

Սակայն միգրացիայի իրավիճակը 2007-2009թթ. կտրուկ վատթարացավ. եթե 2007-ին միգրացիոն սալդոն -3.2 հազար էր, 2009-ին՝ -25 հազար, ապա սկսած 2010-ից մինչև 2015թ. կազմել է տարեկան միջինը 41.3 հազար մարդ: Ընդհանուր հաշվով 2010-2015թթ. ընթացքում Հայաստանից մեկնել և չի վերադարձել 250 հազար մարդ, իսկ 2000-2015թթ. ընթացքում՝ 395 հազար:


2012-2015թթ. Հայաստանում կյանքի որակի հետազոտությունների շրջանակում գնահատվել է Հայաստանի հասարակությունում երկրից ընդմիջտ մեկնելու դիրքորոշումների մակարդակը [1-4]: Դրա համար կիրառվել են հետևյալ հարցերը. «Հնարավորության դեպքում ընդմիջտ կմեկնե՞ի՞ք Հայաստանից դուրս բնակվելու», և դրական պատասխան ստանալու դեպքում հարց էր տրվում. «Ինչ-

<sup>1</sup> Սոց. գ. թ., IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ:


<sup>1</sup> Հայաստան մուտք գործած և մեկնած անձանց տարբերությունը: Հռոլվածում այս տարբերությունն անվանված է միգրացիոն սալդո: Չնայած պետական մարմիններն այդ ցուցանիշը հաշվարկում են հաշվառման կանգնած և հաշվառումից դուրս գրված պաշտոնական տվյալների հիման վրա, այնուամենայնիվ, սահմանահատումների վիճակագրությունն ավելի լավ է արտահայտում միգրացիոն պրոցեսը, քանի որ ներկայում շատերը մեկնում են առանց հաշվառումից դուրս գալու:

որ քայլեր կատարո՞ւմ եք այդ ուղղությամբ»: Այդ հարցերին տրված պատասխանները ներկայացված են Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2




Ըստ գծապատկերի տվյալների, չնայած 2012-2015թթ. Հայաստանում արտագաղթի դիրքորոշումները նվազել են, այնուամենայնիվ, դրանք մնում են շատ բարձր: Եթե 2012թ. Հայաստանից ընդմիջտ մեկնելու դիրքորոշում ունեւ չափա-

հաս բնակչության 50%-ը, ապա 2015թ.՝ 43%-ը: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Վրաստանում 2015թ. ընդմիջտ երկրից մեկնելու դիրքորոշում ունեւ չափահաս բնակչության 11%-ը, իսկ Ադրբեջանում՝ 2013թ.՝ 20%-ը [5]:

2012-2015թթ. Հայաստանից ընդմիջտ մեկնելու ուղղությամբ ինչ-որ բան ձեռնարկող անձանց թվաքանակը նույնպես նվազել է՝ 2012թ. 14%-ից՝ մինչև 10% 2015թ. (տոկոսները հաշվարկված են չափահաս բնակչության ամբողջ քանակից): Այնուամենայնիվ, այդ ցուցանիշը նույնպես շատ բարձր է. ըստ էության, չափահաս բնակչության յուրաքանչյուր տասներորդն ինչ-որ բան է ձեռնարկում երկրից ընդմիջտ մեկնելու ուղղությամբ:

Հայաստանից ընդմիջտ մեկնելու պատճառներն ընդհանրացվել են երեք խմբում՝ տնտեսական, սոցիալ-հոգեբանական և «այլ» պատճառներ: Այդ պատճառների տարածվածության դինամիկան 2012-2015թթ. ընթացքում ներկայացված է Գծապատկեր 3-Ա-ում: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ դիտարկված տարիների ընթացքում երկրից ընդմիջտ արտագաղթելու դիրքորոշում ունեցող մարդկանց շրջանում տնտեսական պատճառներ նշած անձանց քանակը համարյա չի փոխվել՝ մնալով շատ բարձր՝ 82-88%-ի միջակայքում, սակայն սոցիալ-հոգեբանական պատճառներ նշած անձանց քանակը 2015թ. կտրուկ աճել է: Եթե 2012-ին այդպիսի որևէ պատճառ նշել էր արտագաղթելու դիրքորոշում ունեցողների 45%-ը, 2016-ին՝ 57%-ը, 2014-ին՝ 23%-ը, ապա 2015-ին արդեն՝ 82%-ը:

Գծապատկեր 3



Արտագաղթելու սոցիալ-հոգեբանական կոնկրետ պատճառների շարքում առավել տարածված է «Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար»

պատճառը, որը նշել է արտագաղթելու դիրքորոշում ունեցողների 66%-ը (Գծապատկեր 3-Բ):

- Ակնհայտ է, որ այդ պատճառը ցույց է տալիս, որ Հայաստանի հասարակությունում չկա լավատեսական ապագայի ձևավորված կերպար:

Արտագաղթելու պատճառների տարածվածությունը տարիքային խմբերում տարբերվում է: Եթե «*Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար*» և «*Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար*» պատճառները համեմատաբար ավելի տարածված են 18-29 տարեկանների շրջանում, ապա 30-45 և 46-60 տարեկանների շրջանում համեմատաբար ավելի է տարածված «*Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար*» պատճառը (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Ընդմիջտ մեկնելու պատճառ	Տարիքային խումբ				Ընդ.
	18-29	30-45	46-60	60+	
Լավ աշխատանք ու բարեկեցիկ կյանք ունենալու համար	90%	83%	80%	76%	84%
Իմ կամ երեխաներիս ավելի լավ ապագայի համար	54%	75%	68%	55%	66%
Բարեկիրթ և կարգ ու կանոն ունեցող երկրում ապրելու համար	53%	43%	49%	48%	48%
Հայաստանի իշխանությունների ու վատ կառավարման պատճառով	46%	41%	41%	43%	42%
Միավորվելու ընտանիքիս անդամների հետ կամ ամուսնանալու	12%	9%	15%	20%	12%
Այլ պատճառ	2%	3%	4%	4%	3%


2015թ. Հայաստանից արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր կատարող անձանց հարաբերական քանակն ավելի մեծ էր հետևյալ խմբերում.

- գործատուներ (բոլոր գործատուների 18%-ը),
- գործազուրկներ (15%),
- սովերային տնտեսությունում վարձու աշխատողներ (14%),
- ինքնազբաղված մասնագետներ իրավաբան, բժիշկ, ճարտարապետ (14%),
- 18-29 տարեկաններ (13%),
- ուսանողներ (13%) և
- ընտանիքում արտագնա աշխատող ունեցողներ (Գծապատկեր 4):

Նշենք, որ 2012թ. արտագաղթելու ուղղությամբ ինչ-որ քայլեր կատարողների քանակը համեմատաբար ավելի մեծ էր *ոչ գյուղատնտեսական ոլորտներ*

րում ինքնազբաղվածների, գործազուրկների, գործատուների, 30-45 և 18-29 տարեկանների շրջանում:

Գծապատկեր 4



Այսինքն.

- Հայաստանից մեկնելու ուղղությամբ համեմատաբար ավելի ինտենսիվ են քայլեր կատարում տնտեսապես առավել ակտիվ բնակչությունը, երիտասարդները, բարձրակարգ մասնագետները, ապագա մասնագետները և նաև նրանք, ովքեր ընտանիքում ունեն արտագնա աշխատող:

Վերջինը բացատրում է այն փաստը, որ չնայած 2015թ. ընդմիջտ մեկնելու դիրքորոշում ունեցողների քանակը նվազել է, սակայն նրանց բացարձակ քանակը նույնիսկ աճել է՝ 2015թ. հասնելով 43.4 հազար մարդու (Գծապատկեր 1):

- Այսպիսով, Հայաստանի համար արտագաղթի նվազեցման հիմնախնդիրը մնում է հրատապ:

Այս համատեքստում կարևոր է գնահատել՝ արդյո՞ք ներկայում (2015թ.), 2012թ. համեմատ, փոխվել է այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ցանկը և ազդեցության ուժը, որոնք մարդկանց մեջ ձևավորում են արտագաղթելու դիրքորոշումները՝ *նացիոնալացվելով*՝ որպես արտագաղթի պատճառներ, բացահայ-


տել դրանց բովանդակությունը և սահմանել այն ռազմավարական դրույթները, որոնք կնպաստեն արտագաղթի նվազեցմանը:

**Արտագաղթը պայմանավորող գործոնները և դրանց ազդեցության ուժը**

Հայաստանի հասարակության շրջանում արտագաղթի դիրքորոշումները կազմավորող առավել հզոր գործոնների ցանկը և դրանց ազդեցության ուժը գնահատելու համար իրականացվել է Կյանքի որակը Հայաստանում 2015թ. տվյալների շտեմարանի 600-ից ավելի փոփոխականների բազմաչափ վերլուծություն: Այն իրականացվել է նույն մեթոդաբանությամբ, ինչ 2012թ. շտեմարանը վերլուծելիս [6]:

Ակնհայտ է, որ բոլոր 600 փոփոխականների ազդեցության ամբողջական ընկալումը դժվար է: Բացի դրանից, այդ փոփոխականները, մի կողմից, ունեն իրենց բովանդակությունների վերաձածկումներ և պատճառահետևանքային կամ միջնորդավորված կապեր: Այդ դժվարությունների հաղթահարման համար կիրառվել է նոր բաղադրյալ փոփոխականների կազմավորում ինչպես գործոնային վերլուծության, այնպես էլ գումարային ինդեքսների կազմավորման մեթոդներով:

Գծապատկեր 5



Գծապատկեր 5-ում ներկայացված են այն գործոններն ու ինդեքսները, որոնք կազմավորվել են 2012 և 2015թթ. տվյալների մշակման արդյունքում: Ներկայացված են միայն այն գործոններն ու ինդեքսները, որոնք ունեն Հայաստանի հասարակության ամբողջ չափահաս բնակչության շրջանում արտագաղթելու դիրքորոշման նվազեցման վիճակագրորեն հավաստի և բավական նշանակալի ազդեցություն: Նշանակալի է համարվել այն ազդեցությունը, երբ գործոնի կամ ինդեքսի առավելագույն և նվազագույն արժեքների դեպքում Հայաստանից ընդմիջտ արտագաղթելու դիրքորոշման փոփոխությունը եղել է մեծ կամ հավասար 10%-ի:

- *Այս գործոնները ներկայացնում են այն ռազմավարական ուղղությունները, որոնք առավելագույն ունակ են նվազեցնելու արտագաղթի դիրքորոշումները Հայաստանում:*

2015թ. հետազոտության արդյունքներով հնարավոր է եղել բացահայտել և գնահատել երկու նոր և յուրահատուկ՝ *դասական մշակույթում ընդգրկվածության, ինչպես նաև քաղաքական լարվածության* գործոնների ազդեցությունն արտագաղթի դիրքորոշման վրա:

Ստորև նկարագրված է Գծապատկեր 5-ում ներկայացված գործոնների բովանդակությունը:

*Ընտանիքի տնտեսական վիճակի գործոն.* Այս գործոնը պարունակում է անձի բավարարվածությունն իր ընտանեկան պայմաններից՝ ֆինանսական բարեկեցությունից, կենցաղային և անշարժ գույքի առկայությունից, բնակարանային պայմաններից և ընդհանուր կենսամակարդակից:

Հետազոտությունում *«Որո՞նք են Հայաստանից մեկնելու Ձեր պատճառները»* հարցը տրվել է միայն նրանց, ովքեր *«Հնարավորության դեպքում ընդմիջտ կմեկնե՞ի՞ք Հայաստանից դուրս բնակվելու»* հարցին տվել են դրական պատասխան: Իսկ հետո, երբ հարց է տրվել, թե ինչ պատճառով են ցանկանում ընդմիջտ մեկնել՝ պատասխանել են. *«Ավելի բարեկեցիկ կյանք ունենալու»* նպատակով: Սակայն հարցվածների 57%-ը չունի Հայաստանից ընդմիջտ մեկնելու դիրքորոշում, և նրանց շարքում, ակնհայտորեն, նույնպես կան մարդիկ, ովքեր դժգոհ են իրենց բարեկեցությունից: Այսպիսով, բարեկեցիկ կամ անբարեկեցիկ կյանքն ամբողջությամբ չի բացատրում արտագաղթելու դիրքորոշումը:

Ընտանիքի տնտեսական վիճակի գործոնը (բաղադրյալ փոփոխականը) այն մաթեմատիկական գործիքն է, որը թույլ է տալիս գնահատել *բարեկեցության «մաքուր»* ազդեցությունն արտագաղթի վրա: Հասարակության ամենաանբարեկեցիկ շերտում արտագաղթի դիրքորոշում ունի 52%-ը, իսկ ամենաբարեկեցիկ

շերտում՝ 33%-ը<sup>1</sup>: *Տարբերությունը կազմում է 19%, որը և այդ գործոնի ազդեցության ուժն է:*

Գծապատկերից երևում է, որ այդ գործոնի ազդեցությունը 2015թ. ուներ մոտավորապես նույն ուժը, ինչ 2012թ. (18%):

*Երկրի վիճակից ընդհանուր բավարարվածություն (գործոն).* Հետազոտության ընթացքում 34 առանձին հարց է տրվել, թե որքանով է անձը բավարարված երկրում՝ Հայաստանում այս կամ այն ոլորտից: Այդ թվում տնտեսական ոլորտի առանձին հարցերից՝ աշխատավարձերի մակարդակ, թոշակների և այլն, սոցիալական մակարդակ ոլորտից՝ առողջապահության մատչելիություն, կրթության որակ, սպասարկման որակ և այլն, ենթակառուցվածքներից՝ ինտերնետ, տրանսպորտ, բանկային ծառայություններ և այլն, կառավարման ոլորտից՝ կառավարության գործունեություն, կոռուպցիայի դեմ պայքար, ընտրությունների արդարություն և այլն: Այս 34 փոփոխականների միջոցով կառուցվել է «Երկրի ընդհանուր վիճակից բավարարվածության գործոնը»: Հարկ է հատուկ նշել, որ «Երկրի իրավիճակից բավարարվածությունը» և «սեփական [ընտանիքի] վիճակից բավարարվածությունը» նույնական չեն: Մարդիկ, որպես կանոն, «սեփական վիճակը» գնահատում են ավելի բարվոք, քան վիճակն ամբողջ երկրում ընդհանրապես:

Այսպիսով, այս գործոնը ներկայացնում է Հայաստանի «ընդհանուր կերպարը» հասարակության աչքերով: Հետևաբար, գնահատվում է, թե որքանով է այդ կերպարի դրական կամ բացասական լինելն ազդում արտագաղթի դիրքորոշման վրա:

Նշենք, որ, երկրի կերպարի կոնկրետ բաղադրիչի նկատմամբ մարդու պատկերացումը կարող է ինչպես համապատասխանել, այնպես էլ չհամապատասխանել իրականությանը: Այնուամենայնիվ, դրանք շաղկապված են մոտավորապես՝ «առանց ծուխ կրակ չկա» սկզբունքով:

*Քաղաքական լարվածություն (գործոն).* Այս գործոնը բաղադրյալ փոփոխական է, որը ցույց է տալիս, թե որքան ինտենսիվ է հասարակությունը զգում, որ գոյություն ունի լարվածություն պետության և հասարակության, ինչպես նաև իշխանության և ընդդիմության միջև: Այս գործոնի ազդեցության բնույթը հետևյալն է՝ ներքին քաղաքականության ոլորտում լարվածությունը և դրա զգացողությունը հասարակության կողմից խթանում են արտագաղթի դիրքորոշումների աճը:

Այդ գործոնի ազդեցության ուժը 2015թ. կազմել է 18%:

<sup>1</sup>Նման գնահատումներ կատարվել են բոլոր գործոնների, ինդեքսների և առանձին փոփոխականների համար 2012 և 2015թթ. տվյալների հիման վրա: Չճանրացնելու համար շարադրանքը՝ այդ հաշվարկների արդյունքները հոդվածում ներկայացված չեն:



*Դասակարգային լարվածություն (գործոն)*. Այս գործոնի բովանդակությունն այն է, թե որքանով է հասարակությունն ընկալում այն լարվածությունը, որն առկա է հարուստների և աղքատների միջև, աշխատավոր մարդկանց և ձեռնարկությունների տերերի միջև, աշխատողների և նրանց վերակացուների միջև: Հասարակությունում դասակարգային լարվածության ընկալման աճը խթանում է արտագաղթի դիրքորոշումների աճը:

Այս գործոնի ազդեցության ուժը 2015թ. եղել է 10%, այն 2012թ. համեմատ նվազել է 14%-ով<sup>1</sup>:

*Իրավական դեպրիվացիա (գործոն)*. Այս գործոնը ներկայացնում է մարդկանց անպաշտպանության զգացողությունն իրավական ոլորտում, օրինակ՝ հավանականությունը, որ նրանից կարող են կաշառք պահանջել իրեն հասանելիքի համար, որ պետությունը կամ որևէ հզոր անձ կարող է խլել նրա սեփականությունը, որ կհանդիպի անարդար վերաբերմունքի ոստիկանության կամ դատարանի կողմից: Իրավական անպաշտպանության աճը խթանում է արտագաղթի դիրքորոշման աճը:

Գործոնի ազդեցության ուժը 2015թ. կազմել է 16% և նշանակալիորեն նվազել է 2014թ. համեմատ՝ 9%-ով:

*Քաղաքացիական մշակույթ (ինդեքս)*. Քաղաքացիական մշակույթի դասական սահմանումներից մեկն ասում է. որքան ավելի բարձր է հասարակությունում հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ, զգացողությունը, որ քաղաքական ոլորտում սովորական քաղաքացուց ինչ-որ բան է կախված, որ սովորական քաղաքացին հասկանում է, թե ինչ է տեղի ունենում քաղաքական ոլորտում և մասնակցում է քաղաքական իրադարձություններին (օրինակ՝ ընտրություններին), այնքան այդ հասարակությունում ավելի զարգացած է *քաղաքացիական մշակույթը*:

Հետազոտությունում կազմավորված քաղաքացիական մշակույթի ինդեքսն արտապատկերում է այդ սահմանումը: Քաղաքացիական մշակույթի զարգացումը նվազեցնում է հասարակությունում արտագաղթի դիրքորոշումները: Ինդեքսի ազդեցության ուժը՝ 16%:

*Քաղաքական/քաղաքացիական անդամություն (ինդեքս)*. Այս ինդեքսը ցույց է տալիս, թե արդյոք անձը կուսակցական է կամ հասարակական կազմակերպության անդամ, կամ աջակցում է որևէ քաղաքացիական նախաձեռնության: Որքան աճում է քաղաքացիական անդամության ինդեքսը, այնքան հասարակությունում նվազում է արտագաղթի դիրքորոշումների մակարդակը:

<sup>1</sup> Թե ինչի հետ է կապված այդ նվազումը՝ դուրս է տվյալ հոդվածի բովանդակության շրջանակներից և այլ հետազոտության առարկա է:

Ինդեքսի ազդեցությունը՝ 30%: Բոլոր դիտարկված գործոնների և ինդեքսների շարքում այս ինդեքսի ազդեցությունն ամենամեծն է:

*Հայ դասական մշակույթում ընդգրկվածություն (ինդեքս)*. Հետազոտությունում կազմավորվել է ինդեքս, որը ցույց է տալիս, թե ծանոթ է արդյոք անձը հայ դասական մշակույթի մի քանի բավական հանրահայտ դեմքերի (Պարույր Սևակ, Վահան Թոթովենց, Վահան Տերյան, Վլադիմիր Աբաջյան): Պարզվել է, որ ինդեքսի աճը նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումների մակարդակը:

Գործոնի ազդեցության ուժը՝ 12%:

*Համաշխարհային դասական մշակույթում ընդգրկվածություն (ինդեքս)*. Կազմավորվել է հայ դասական մշակույթում ընդգրկվածության ինդեքսին համանման: Կիրառվել են համաշխարհային դասական մշակույթի հետևյալ դեմքերը՝ Բերթրան Ռասել, Ուիլյամ Թեքերեյ, Յան Սիբելիուս, Ջորջ Գերշվին, Ջերոմ Սելինջեր և Ակիրա Կուրոսավա: Պարզվել է, որ ինդեքսի աճը նվազեցնում է արտագաղթի դիրքորոշումների մակարդակը:

Ինդեքսի ազդեցության ուժը՝ 21%:

*Դասական մշակույթում ընդգրկվածություն (ինդեքս)*. Նշված երկու ինդեքսների միավորմամբ կազմավորվել է դասական մշակույթում ընդգրկվածության ինդեքս: Այս ինդեքսի ազդեցության ուժն ավելի մեծ է եղել, քան առանձին ինդեքսների ազդեցությունները և կազմել է 26%:

- *Այսպիսով, վերը հիմնավորվել և գնահատվել է մշակութային դաստիարակության ազդեցությունն արտագաղթի դիրքորոշումների կառավարման ոլորտում:*
- *Որքան ավելի մեծ է հասարակության «ընկղմվածությունը» հայ և համաշխարհային դասական մշակույթում, այնքան հասարակությունում ավելի ցածր է արտագաղթի դիրքորոշումների մակարդակը:*


### **Արտագաղթի նվազեցման կոնկրետ ռազմավարական դրույթները**

Արտագաղթի դիրքորոշումները պայմանավորող գործոնները նախանշում են արտագաղթի նվազեցման ռազմավարական ուղղությունները: Դրանց շարքում առավել ընդհանուր գործոնն էր.

- *Երկրի վիճակից ընդհանուր բավարարվածության գործոնը:*

Այս գործոնն ունի լայն բովանդակություն և ընդգրկում է Հայաստանի մասին հասարակությունում առկա պատկերացումների մի քանի տասնյակ դրույթներ: Դրանց մի մասն ունի ուժեղ, իսկ մյուս մասը՝ թույլ ազդեցություն արտագաղթի դիրքորոշումների վրա:

Գծապատկեր 6



- Ուժեղ ազդեցություն ունեցող դրույթները ներկայացնում են այն կոնկրետ հարցերը, որոնք պետք է լուծել վերը նույնականացված ռազմավարական ուղղությունների շրջանակում՝ համակարգային ձևով նվազեցնելու համար արտագաղթի դիրքորոշումները Հայաստանի հասարակությունում:

Գործոնը կազմավորող դրույթները և դրանց ազդեցության ուժը ներկայացված են Գծապատկեր 6-ում:

- Արտագաղթի դիրքորոշումների վրա ուժեղ ազդեցություն ունեցող դրույթների առատությունը և բազմաբնույթությունն արտացոլում է այն փաստը, որ Հայաստանից արտագաղթն ունի համակարգային բնույթ:

Գծապատկերում կոնկրետ դրույթները խմբավորված են հետևյալ տիպերում.

- Ապագայի լավատեսություն
- Քաղաքական օտարվածություն
- Երկրի տնտեսական կերպարը
- Երկրի սոցիալական կերպարը
- Երկրում կառավարման որակը:

Գծապատկերի տվյալները մենաբանվում են նույն կերպ, ինչ գործոնների ազդեցության ուժի դեպքում: Ազդեցության ուժի դրական նշանը նշանակում է, որ երբ աճում է տվյալ դրույթի հետ համաձայնության [կամ իրավիճակից բավարարվածության] աստիճանը, ապա դա նպաստում է արտագաղթի դիրքորոշումների նվազմանը, հակառակ դեպքում՝ աճին: Թվային արժեքը ցույց է տալիս դրույթի նկատմամբ լիովին համաձայնության և լիովին անհամաձայնության [լիովին բավարարվածության և լիովին անբավարարվածության] դեպքում արտագաղթի դիրքորոշումների տարբերությունը:

- Գծապատկերում տրված ռազմավարական դրույթների բովանդակությունն ակնհայտ է: Ռազմավարություն մշակելիս դրանք կարող են առանց փոփոխության ընդգրկվել որպես ռազմավարությամբ լուծվելիք խնդիրներ, որոնք արդեն օպերացիոնալացված են [հասցված են ինդիկատորների մակարդակի]:

Այնուամենայնիվ, արժե մեկնաբանել դրանցից մի քանիսը:

Արտագաղթը նվազեցնելու ամենամեծ ներուժն ունի «Երկրի տնտեսական զարգացման տեմպերը» դրույթը: Ազդեցության ուժը՝ 27%: Սա կարելի է անվանել

արտագաղթը նվազեցնելու ռազմավարության հիմնարար գործոն: Այս գործոնն ուղղակիորեն չէ, որ ազդում է մարդկանց դիրքորոշումների վրա, իր մեջ խտացնում է այն, որ Հայաստանի ներկայիս տնտեսությունը, դրա կառուցվածքն ու բովանդակությունն աննպաստ են երկրի զարգացման բավարար տեմպեր ապահովելու համար՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Տնտեսական զարգացման բավարար տեմպեր ապահովելու համար անհրաժեշտ է Հայաստանում զարգացնել բարձր տեխնոլոգիական արտադրությունը [7]: Ակնհայտ է, որ Հայաստանի «տնտեսական կերպարի» մնացած բաղադրիչները՝ «ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը», «թոշակների չափերը» և «գների մակարդակը» խնդիրների լուծումներն ածանցվում են «Երկրի տնտեսական զարգացման տեմպերից»:

*«Աշխատողների իրավունքների պաշտպանվածությունը».* Գծապատկեր 1-ի տվյալներով՝ Հայաստանում վերջին 16 տարիներին գործազրկության մակարդակը շատ բարձր է: Երբ 2007թ. Աշխատանքի միջազգային կազմակերպությունը խստացրեց գործազուրկի կարգավիճակի նույնականացման պայմանները, այդ մեթոդաբանական փոփոխության արդյունքում Հայաստանում գործազրկության մակարդակը մոտ 29%-ից իջավ մինչև մոտ 16%: Իսկ դրանից հետո մնացել է մոտավորապես նույն շատ բարձր մակարդակում: *Հայտնի է, որ գործազրկության շատ բարձր մակարդակի դեպքում բարձրանում է վարձու աշխատանքի շահագործման ինտենսիվությունը և նվազում է իրենց իրավունքները պաշտպանելու վարձու աշխատողների հնարավորությունը:* Հատկապես սովերային (առանց աշխատանքային պայմանագրի) աշխատատեղերի մեծ քանակի, արհմիությունների աշխատանքի աննշմարելիության, գործազրկության նպաստների բացակայության պայմաններում: Իսկ Հայաստանում հենց այդպիսի իրավիճակ է:

*«Հայաստանի պաշտպանվածությունն արտաքին վտանգից».* Այս դրույթը հույժ կարևոր է այն պատճառով, որ վերջին 27 տարիների ընթացքում հայաստանյան տեղեկատվական դաշտում առկա է չղադարող հզոր հակառուսաստանյան քարոզչական պրոցես: Այն ուժեղացավ 2016թ. ապրիլի 2-4-ի ընթացքում Ադրբեջանի ռազմական ագրեսիայից հետո:

Հայտնի է, որ Հայաստանի բնակչությունը Ռուսաստանի հետ դաշնակցումը համարում է թուրքական (ոչ ադրբեջանական) վտանգից Հայաստանի և հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության կարևորագույն երաշխիքը: Հետևաբար, հակառուսական [մեր կարծիքով, որպես կանոն, անհիմն] քարոզչությունը, որը խարխլում է Ռուսաստանի՝ որպես Հայաստանի հիմնական դաշնակցի կերպարը, խարխլելու է հասարակությունում նաև *«Հայաստանի պաշտպանվածության [աստիճանը] պատերազմի վտանգից»* դիրքորոշումը, որն էլ խթանելու է արտագաղթը:

Կյանքի որակի 2011-2015թթ. հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանում առկա է հասարակության համընդհանուր օտարվածություն Հայաստանի քաղաքական, կուսակցական և տնտեսական վերնախավերից: Օրինակ, ըստ 2015թ. հետազոտության տվյալների, հասարակության միայն 30%-ն է համարում, որ Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է իրենց նման մարդկանց շահերը, 84%-ը համարում է, որ կուսակցությունները պաշտպանում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց ղեկավարների շահերը, 72%-ը համարում է, որ Հայաստանի մեծահարուստներն առավելապես խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը, միայն 23%-ն է համարում, որ Հայաստանում փոքր բիզնեսով զբաղվելու պայմանները բարենպաստ են: Իսկ դա, ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 6-ի «Քաղաքական օտարվածություն» խմբում ընդգրկված դրույթների բովանդակությունը, Հայաստանից արտագաղթի բազմաբնույթ գործոն է:

Այս գործոնի հակառակ կողմն է «Երկրում կառավարման որակը» խմբում ընդգրկված դրույթների ազդեցությունը: Ըստ 2015թ. հետազոտության տվյալների, հասարակության 13%-ն է բավարարված երկրում ընտրությունների արդարության աստիճանից, միայն 14%-ը՝ կաշառակերության դեմ պայքարից, միայն 18%-ը՝ երկրում օրենքների կիրառելիությունից, միայն 19%-ը՝ դատավորների արդարության աստիճանից: Իսկ այդ դիրքորոշումները նույնպես խթանում են արտագաղթը Հայաստանից:

*Հուլիս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Մանուկյան Մ.Ս.*, «Կյանքի որակը Հայաստանում 2012», IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Երևան 2013 (ձեռագիր), 139 էջ:
2. *Մանուկյան Մ.Ս.*, «Կյանքի որակը Հայաստանում 2013», IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Երևան 2014 (ձեռագիր), 178 էջ:
3. *Մանուկյան Մ.Ս.*, «Կյանքի որակը Հայաստանում 2014», IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Երևան 2018 (ձեռագիր), 177 էջ:
4. *Մանուկյան Մ.Ս.*, «Կյանքի որակը Հայաստանում 2015», IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, Երևան 2016 (ձեռագիր), 155 էջ:
5. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, տվյալների շտեմարան 2015, <http://www.crc.am/caucasusbarometer/documentation?lang=en>
6. *Մանուկյան Մ.Ս.*, Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում / «Արտագաղթի հոգեբանությունը. գաղթականի կյանքը իջեցված սոցիալական կարգավիճակի պայմաններում», գիտաժողով, Երևան, 2013թ., 32 էջ, [http://www.noravank.am/upload/pdf/2013\\_Migration\\_Control\\_Factors.pdf](http://www.noravank.am/upload/pdf/2013_Migration_Control_Factors.pdf)
7. *Манукян С.А.*, Технологическое развитие и демографические проблемы Армении / 21-ый ВЕК, N2 (39) / 2016, ст. 7-18.
8. *Almond G., Verba S.*, The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, N.J.: Princeton University Press, 1963.

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԳԱՂԹԻ  
ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2012-2015ԹԹ.**

*Մամվել Մանուկյան*

Ամփոփագիր

Հոդվածում նկարագրված է Հայաստանից արտագաղթի դիրքորոշումների դինամիկան 2012-2015թթ. ընթացքում: Ջանգվածային հետազոտությունների 600-ից ավելի փոփոխականների բազմաչափ մաթեմատիկական վերլուծությամբ դուրս են բերվել Հայաստանում արտագաղթի դիրքորոշումները կազմավորող գործոնները, գնահատվել է դրանց ազդեցության ուժը: Կազմավորվել են արտագաղթի դիրքորոշումները նվազեցնող ռազմավարության շրջանակը և կոնկրետ գործողությունների ցանկը:

**ДИНАМИКА МИГРАЦИОННЫХ НАСТРОЕНИЙ  
В АРМЕНИИ НА 2012-2015 ГГ.**

*Самвел Манукян*

Резюме

В статье представлена динамика миграционных настроений в Армении в течение 2012-2015 гг. С помощью многомерного математического анализа более 600 переменных в ходе масштабных исследований были выведены факторы, образующие миграционные настроения в Армении, и была оценена сила их воздействия. Обозначены рамки стратегии и список конкретных действий, сокращающих миграционные настроения.

**THE PATTERNS OF EMIGRATION VIEWPOINTS IN ARMENIA IN 2012-2015**

*Samvel Manukyan*

Resume

The article describes patterns of viewpoints on emigration in Armenia in 2012-2015. A massive research of over 600 variables through multidimensional mathematical analysis was performed to identify factors that contribute to forming an inclination towards emigration, and the strength of their influence was assessed. A strategic framework and a list of specific actions to reduce such inclination were compiled.

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ  
(ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համատեքստում)**

***Աշոտ Թավադյան\****

*Բանալի բառեր՝ դրամավարկային քաղաքականություն, գնաճ, վերաֆինանսավորման տոկոսադրույք, փողայնացման մակարդակ, փոխարժեք:*

*Դրամավարկային քաղաքականության ռեզերվներն այժմ փաստացի ունեն առաջնային ազդեցություն ինչպես մակրոտնտեսական կայունության ապահովման, այնպես էլ ՀՆԱ-ի, արտահանման աճի և ՀՀ պետական բյուջեի կատարման վրա: ՀՀ նախագահի՝ Սահմանադրության փոփոխությունների կենսագործմանը նվիրված 12.02.2016թ. ծրագրային ելույթում ընդգծվեց, որ «խիստ կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների խելամիտ և էլավելի կոորդինացված իրականացումը»<sup>1</sup>:*

Հայաստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությունը (իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը) էապես բարձր է, քան ԵՄ-ում, ԵԱՀԿ-ում և տարածաշրջանի այլ երկրներում: Վարվում է թանկ փողերի քաղաքականություն, և արդյունքում՝ ներդրումների, բիզնեսի համար Հայաստանում իրական տոկոսադրույքները նպաստավոր չեն: Փաստացի, այդ առումով Հայաստանը զիջում է իր բոլոր հիմնական գործընկերներին:

Այդ պայմաններում ունենք փողայնացման շատ ցածր մակարդակ (մոտ 35%)<sup>2</sup>, իսկ ցածր փողայնացման և բարձր իրական տոկոսադրույքների պարագայում առաջանում է փողի սով, դոլարիզացիայի մակարդակի կրճատման հնարավորություններն էապես նվազում են: Նշենք, որ Ռուսաստանում փողայնացման մակարդակը 50%-ի, իսկ Եվրամիության առաջատար երկրներում՝ 100%-ի շրջանակներում է, Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում այն էապես զերազանցում է 100%-ը:

ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստում է հնարավորինս նվազագույն

\* ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր:

<sup>1</sup> <http://www.president.am/hy/press-release/item/2016/02/12/President-Serzh-Sargsyan-meeting-Constitution/>

<sup>2</sup> <http://data.worldbank.org/indicator/FM.LBL.MQMY.GD.ZS>



գնաճը, թե՛ որոշակի ցուցանիշը չգերազանցող ոչ բարձր գնաճը: Ոչ ավելի, քան 5.5%, ինչը և պահանջում է «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի չորրորդ հոդվածը. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ 2016 թվականի ընթացքում օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս առաջնորդվել 12-ամսյա գնաճի  $4+/-1.5$  տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում նպատակային ցուցանիշով» [1]: Ի դեպ, օրենքում փաստացի նվազագույն թույլատրելի ցուցանիշ է նշված 2.5% գնաճը, սակայն 12-ամսյա կտրվածքով գնաճն օգոստոսին կազմել է -1.9%: Հայաստանում արդեն կես տարուց ավելի արձանագրվում է գնանկում<sup>1</sup>:

Հնարավորինս նվազագույն գնաճի քաղաքականությունն անվերապահորեն ընդունելի է միայն այն դեպքում, երբ առևտրային հաշվեկշիռը հիմնականում հավասարակշռված է, իսկ փողայնացման մակարդակն ակնհայտ ցածր չէ: Դա է ցույց տալիս նաև զարգացած երկրների փորձը: Հետաքրքիր է, որ Գերմանիայում, որտեղ գնաճն այժմ 1%-ի շրջանակներում է, 1970-1974թթ. տնտեսական աճի ժամանակ եղել է մոտ 6%, իսկ 1973թ.՝ նույնիսկ 7.9%<sup>2</sup>: Այդ տարի տնտեսական աճը կազմել է մոտ 5%:

Անդրադառնանք նաև այն մոլորությանը, թե բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ զսպում է գնաճը, իսկ ցածրը՝ հակառակը: Բարձր տոկոսադրույքի ժամանակ հաճախ աշխատում է հետևյալ շղթան՝ բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք – ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ – սուղ սեփական միջոցների պարագայում ինքնարժեքի աճ – ծախքերի գնաճ: Հետևաբար, այդ գործիքը կարելի է կիրառել միայն ճգնաժամային իրավիճակում, կարճաժամկետ հատվածում:

Հայաստանի զարգացման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության էական կրճատում, տարբերությունը՝ ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետ: Զարգացած կամ զարգացման էական աճի տեմպ ունեցող ոչ մի երկիր չունի նշված ցուցանիշների ավելի մեծ տարբերություն: Իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքն այդ երկրներում չի գերազանցում 2-3%-ը<sup>3</sup>: Բարձր իրական տոկոսադրույքը շահույթ հետապնդող կազմակերպության

<sup>1</sup> <http://www.tradingeconomics.com/armenia/inflation-cpi>

<sup>2</sup> Historic inflation Germany - CPI inflation, <http://www.inflation.eu/inflation-rates/germany/historic-inflation/cpi-inflation-germany.aspx>

<sup>3</sup> Եվրոգոտում առանցքային վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0% է, իսկ գնաճը 0.2% է, տարբերությունը՝ -0.2: Ռուսաստանում այդ ցուցանիշները հետևյալն են՝ 10%, 7%, տարբերությունը՝ 3: ԱՄՆ-ում՝ 0.5%, 0.8%, տարբերությունը՝ -0.3: Հայաստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2016թ. սեպտեմբերի 27-ին իջեցվել է, կազմում է 6.75% է (լուսբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 8.25%), 12-ամսյա գնաճը կազմել է -1.9%, տարբերությունը՝ 8.65:

<http://www.cbrates.com/>; <http://www.tradingeconomics.com/country-list/inflation-rate>

վարքագիծ է, իսկ երկիրը չի ունենում զարգացման բարձր տեմպ, եթե վճարում է ավելի մեծ գին նվազագույն գնաճի համար: Ինչպես ցույց է տալիս փորձը, այլապես ստիպված են լինում ունենալ ներդրումների, արտահանման, միջազգային պահուստների տեսանկյունից զարգացման համար ոչ նպաստավոր իրավիճակ:

Հակառակ դեպքում մենք կընկնենք նույն ծուղակը՝ գնաճը նվազագույն ցածր մակարդակին պահելու համար անհրաժեշտ կլինի ունենալ չարդարացված բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք, փոխարժեքը պահել հնարավորինս անփոփոխ՝ վճարելով դրա համար միջազգային պահուստների նվազմամբ, վճարային և առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: Իսկ իրական փոխարժեքն այն է, որի դեպքում այդ բացասական գործոնները տեղի չեն ունենում: Իջեցնելով իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը և էապես մեծացնելով արտահանումը՝ մենք կարող ենք հետագայում ապահովել փոխարժեքի ոչ էական տատանում և ոչ բարձր գնաճ:

Իհարկե, այժմ վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության նվազման, ինչպես նաև պահուստավորման նորմի իջեցման քաղաքականությունը կարող է բերել դրամի փոխարժեքի որոշակի արժեզրկման և, համապատասխանաբար, ներմուծվող ապրանքների գնաճի, բայց միայն այս ձևով մենք կարող ենք դրամավարկային քաղաքականությամբ դրական ազդեցություն ունենալ վճարային և առևտրային հաշվեկշռի, տնտեսության զարգացման վրա:

*Ուղեցույցն այստեղ հետևյալն է՝ անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքը և պահուստավորման նորմը նվազեցնել այնպես, որ դրամավարկային քաղաքականությունը, նպաստելով տնտեսության զարգացմանը, դրա հետ մեկտեղ թույլ չտա, որ գնաճը գերազանցի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով հաստատված 5.5%-ը: Սա է դրամավարկային քաղաքականության իրականացման առանցքային արվեստը:*

Փոխարժեքի սահուն նվազումը նպաստավոր է ՀՀ տնտեսության համար<sup>1</sup>: «Դրամի շատ դանդաղ ու կայուն արժեզրկում՝ առանց որևէ նկատելի թոփչքների ողջ տարվա ընթացքում... շատ նորմալ էմ համարում և բարենպաստ մեր տնտեսվարողների և, առաջին հերթին, արտահանողների համար»<sup>2</sup>: Դրամի փոխարժեքի սահուն նվազումը նպաստում է նաև պետական բյուջեի կատարմանը: Սակայն նշենք, որ փոխարժեքի նվազումը չի կարող լինել ինքնանպատակ: Դրա հետ մեկտեղ ընդգծենք, որ իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը նպաստում է փողայնացման մակարդակի աճին, այն պայմա-

<sup>1</sup> Նշենք, որ 2015թ. դրամն արժեզրկվել է դոլարի նկատմամբ 1.5%-ով, իսկ եվրոն՝ 11.3%, <http://bankir.ru/kurs>

<sup>2</sup> <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/03/11/news-88/>

նով, որ գնաճը չգերազանցի 5.5%-ը և չկրի տատանողական բնույթ, ինչը կարևոր է: Այդ պարագայում, եթե որպես հետևանք սահուն նվազում է փոխարժեքը, ապա դա բացասական երևույթ չէ: Եթե առաջին հայացքից կայուն փոխարժեքը չի համապատասխանում տնտեսության աճին, ապա չափազանց բարձր է փոխարժեքի կտրուկ փոփոխության հավանականությունը: Այստեղ տեղին է հետևյալ օրինակը. ավելի ապահով է տարեկան 24 անգամ ցատկել կես մետրի՞ց, թե՞ ունենալ 1 անգամ ընկնելու բարձր հավանականություն, բայց 10 մետրից: Կարծես թե առաջին դեպքում գումարային առումով ավելի շատ ես ցատկում՝ 12 մետր, իսկ երկրորդում՝ 10, սակայն հետևանքներն անհամեմատելի են՝ առաջին դեպքում գրեթե անվտանգ է, իսկ երկրորդում մեծ հավանականությամբ կունենանք լուրջ բացասական, նույնիսկ աղետալի հետևանքներ: Ակնհայտ է, որ իրականում տնտեսական աճի և, ընդգծենք, կայունության համար նպաստավոր է ունենալ ամսական 0.5-1 տոկոսային կետի փոխարժեքի փոփոխություն, քան 10 տոկոսային կետի և, ավելին, կտրուկ նվազման բարձր հավանականություն, ինչը տեղի ունեցավ 2014թ. վերջին: Նորից նշեմ, որ փոխարժեքի նույնիսկ սահուն նվազումն ինքնանպատակ չէ, դա կարող է լինել միայն իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքի, պահուստավորման նորմի նվազման և փողայնացման մակարդակի աճի հետևանք:

Կենտրոնական բանկը պետք է վարի ոչ միայն, առաջին հայացքից թվացող՝ գների կայունության քաղաքականություն, այլ նաև տնտեսության աճը խթանող և ֆինանսական կայունություն ապահովող քաղաքականություն, ինչը փաստացի պահանջում է ՀՀ Սահմանադրությունը: Կենտրոնական բանկն իր գործառույթներն իրականացնելիս անկախ է, սակայն իր կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը, սերտորեն փոխկապված լինելով հարկաբյուջետային քաղաքականության հետ, ակնհայտ է, որ գտնվում է ընդհանուր տնտեսական քաղաքականության համակարգում:

Անհրաժեշտ է ոչ միայն հետևել միջազգային կարգավիճակ ունեցող ԵԱՏՄ պայմանագրի դրույթներին, մասնավորապես 64-րդ հոդվածին՝ «Համաձայնեցված արժութային քաղաքականության նպատակները և սկզբունքները» [2], այլ նաև ձգտել կոնկրետացնել այդ դրույթները՝ ելնելով մեր տնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորություններ ապահովելուց:

Ճշգրտման կարիք ունի ոչ միայն դրամավարկային, հատկապես վերաֆինանսավորման տոկոսադրույքի քաղաքականությունը, այլ նաև ՀՀ ԿԲ օրենքը, մասնավորապես 4-րդ, 14-րդ, 16-րդ, 26-րդ հոդվածները՝ հաշվի առնելով փոփոխված Սահմանադրության 200-րդ հոդվածը:

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 4-րդ հոդվածում նշված է, որ

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է [3]: Այդ դրույթը նպատակահարմար է հնարավորինս արագ համապատասխանեցնել փոփոխված Սահմանադրության 200-րդ հոդվածին, որտեղ նշված է, որ Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը [4], իսկ Կենտրոնական բանկի օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ», պետք է հանել: Եթե լուծված չեն Կենտրոնական բանկի այլ խնդիրներ, ապա նպատակահարմար է, որ Ազգային ժողովը գնահատի, թե որքանով է դա արդարացված:

ՀՀ ԿԲ-ի մասին օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետում նշված է. «Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի մյուս անդամների վարձատրության չափը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը»: Անարդյունավետ է, որ խորհրդի անդամների աշխատավարձը սահմանեն հենց իրենք՝ խորհրդի անդամները: 16-րդ հոդվածում նշվում է, որ արտաքին աուդիտորական կազմակերպությունը կամ կազմակերպությունները մինչև երեք տարի ժամկետով ընտրվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից: Փաստացի փոքր տնտեսություն ունեցող երկրի Կենտրոնական բանկն ինքն է ընտրում իր վերահսկողին: Այդ կարգի երկրներում արդյունավետ է, երբ անկախ արտաքին աուդիտորի ընտրությանը մասնակցում է կամ կառավարությունը, կամ Ազգային ժողովը: Կարծում եմ, Հայաստանում Կենտրոնական բանկի անկախ արտաքին աուդիտորի կառավարության ընտրությունը մեզ համար նպատակահարմար է քանզի այն ԿԲ առանցքային գործընկերն է:

Իհարկե, Կենտրոնական բանկի օրենքի փոփոխությունները, նրա համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրությանը և դրամավարկային քաղաքականության ճշգրտումը պետք է միտված լինեն իր հիմնական նպատակների, ընդգծեն՝ համակարգված (ոչ իրավիճակային) իրականացմանը և հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության կոորդինացմանը:

*Հոկտեմբեր, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:
2. Договор о Евразийском экономическом союзе.
3. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքը:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ:

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ  
(ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համատեքստում)**

***Աշոտ Թավադյան***

**Ամփոփագիր**

Դրամավարկային քաղաքականության ռեզերվներն այժմ փաստացի ունեն առաջնային ազդեցություն ինչպես մակրոտնտեսական կայունության ապահովման, այնպես էլ ՀՆԱ-ի, արտահանման աճի և ՀՀ պետական բյուջեի կատարման վրա:

Բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի ժամանակ հաճախ աշխատում է հետևյալ շղթան՝ բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք – ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ – սուղ սեփական միջոցների պարագայում ինքնարժեքի աճ – ծախսերի գնաճ: Հետևաբար, այդ գործիքը կարելի է կիրառել միայն ճգնաժամային իրավիճակում, կարճաժամկետ հատվածում: Հայաստանի զարգացման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության էական կրճատում, տարբերությունը՝ ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետ:

Դրամավարկային քաղաքականության ուղեցույցը հետևյալն է. անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքը և պահուստավորման նորմը նվազեցնել այնպես, որ դրամավարկային քաղաքականությունը, նպաստելով տնտեսության զարգացմանը, դրա հետ մեկտեղ թույլ չտա, որ գնաճը գերազանցի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով հաստատված 5.5%-ը: Սա է դրամավարկային քաղաքականության իրականացման առանցքային արվեստը:

Կենտրոնական բանկի օրենքի փոփոխությունները, նրա համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրությանը և դրամավարկային քաղաքականության ճշգրտումը պետք է միտված լինեն իր հիմնական նպատակների համակարգված (ոչ իրավիճակային) իրականացմանը և հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության կոորդինացմանը:

**РЕЗЕРВЫ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА  
(в контексте изменений Конституции РА)**

***Ашот Тавадян***

**Резюме**

Резервы денежно-кредитной политики сейчас имеют ключевое значение как с точки зрения обеспечения макроэкономической стабильности, так и роста ВВП, экспорта, исполнения государственного бюджета РА. При высокой ставке рефинансирования часто срабатывает следующая цепь: высокая реальная ставка рефинансирования – бо-

лее высокие банковские ставки – рост себестоимости при острой нехватке собственных средств – инфляция издержек. Следовательно, этот инструмент можно использовать только краткосрочно, в кризисных ситуациях. Для развития экономики РА необходимо существенное сокращение разницы между ставкой рефинансирования и инфляции. Разница должна составлять не более 2-3 процентных пункта.

Вектор денежно-кредитной политики следующий: необходимо такое снижение ставки рефинансирования и нормы резервирования, чтобы денежно-кредитная политика, способствуя экономическому росту, при этом не допускала перехода инфляции за рубеж 5.5%, установленный законом о Государственном бюджете РА. Это является ключевым фактором денежно-кредитной политики.

Изменение закона о ЦБ, приведение его в соответствие с Конституцией РА и корректировка денежно-кредитной политики должны быть направлены для системного выполнения основных целей ЦБ, а также координации денежно-кредитной и налогово-бюджетной политики.

## THE RESERVES OF MONETARY POLICY FOR ECONOMIC DEVELOPMENT (*In the Context of the Change of the Constitution*)

*Ashot Tavadyan*

### Resume

The reserves of monetary policy currently have the key influence in terms of ensuring macroeconomic stability, as well as GDP, export growth and in the execution of the state budget of Armenia. With the high refinancing rate, the following chain is usually triggered: high real refinancing rate – higher bank rates – cost growth with acute shortage of funds – cost-push inflation. Therefore, this tool can only be used in short term and in crises. For the development of the Armenian economy, the difference between the refinancing rate and inflation must be significantly reduced to achieve no more than 2-3 percentage points.

The vector of monetary policy is as follows: there must be such a reduction in the refinancing rate and in reserve requirement that the monetary policy with the boost of economy the inflation does not exceed the limit of 5.5%, which is established by the law on the Republic of Armenia State Budget. This is a key factor for monetary policy.

Amending the Law on Central Bank and bringing it in line with the Constitution and the adjustment of monetary policy must be directed to the system performance of the main objectives of the Central Bank, as well as coordination of monetary and fiscal policies.

# ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

## *Վահե Օդաբաշյան\**

*Բանալի բառեր*՝ նորարարություն, ինովացիոն տեխնոլոգիաներ, տեխնոլոգիաների ստեղծում, կառավարման խնդիրներ:

Նորարարական գործունեությունը և ինովացիոն տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում տնտեսական բարգավաճման հիմնական շարժիչ ուժն են: Դրանք ոչ միայն հնարավորություն են ընձեռում ապահովելու բնակչության կենսամակարդակի բարձրացումը, լուծելու սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրները, այլև հանդիսանում են երկրների աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական հզորության ու անկախության կարևորագույն հիմնաքարեր: Նորարարության զարգացման և ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծման գործընթացների, դրանց վրա ազդող գործոնների, դրանցում առկա հիմնախնդիրների իմացությունն անհրաժեշտ է հիմնավորված պետական քաղաքականության ձևավորման համար, որով կարելի է խուսափել այդ գուծունեության ընթացքում առաջացող խոչընդոտներից և ապահովել ինովացիոն գործունեության լայն տարածումը: Ինովացիոն գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների համար կարևոր է հստակ ընկալել նորագույն տեխնոլոգիաների մշակման գործընթացի յուրահատկությունները և կառավարման հիմնախնդիրները, վերջիններիս արդյունավետ լուծումներ տալու մոտեցումներն ու եղանակները: Իրենց հերթին, գիտակրթական հաստատությունների խնդիրն է հանդես գալ որպես նորարարական գաղափարների, տեխնոլոգիաների և ձեռնարկությունների սկզբնավորման, նորարարության և տեխնոլոգիական զարգացման կենտրոններ, համալրելով աշխատանքի շուկան բարձրակարգ մասնագետներով և նպաստելով գիտելիքահենք տնտեսության զարգացմանը:

Վերը նշվածի առումով փորձ կատարենք բացահայտել նորարարության զարգացման և ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծման հետ կապված Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակն ու խնդիրները և վերլուծելով միջազգային փորձը, ուղենշել այդ խնդիրների հնարավոր լուծումները:

\* Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս, «Նորավանք» ԳԿՀ ավագ խմբագիր-թարգմանիչ:

**Գիտատեխնոլոգիական ինովացիան Հայաստանում.  
ներկայիս իրավիճակը**

Խորհրդային տարիներին ԽՍՀՄ հանրապետությունների շարքում և անգամ համաշխարհային մասշտաբով Հայաստանն աչքի էր ընկնում գիտատեխնիկական ու արդյունաբերական զարգացածության բարձր աստիճանով և նորարարական հետազոտությունների ու տեխնոլոգիաների առատությամբ: Արտասահմանյան մամուլում և այլ աղբյուրներում Հայաստանը հաճախ անվանվում է «Խորհրդային Միության սիլիկոնյան հովիտ»<sup>1</sup>: Ժամանակին կուտակված այդ ներուժը, ցավոք, աստիճանաբար անհետանում է «ուղեղների արտահոսքի», գիտության և որոշ չափով նաև կրթության ոլորտների պետական ֆինանսավորման ցածր մակարդակի և մի շարք այլ հիմնախնդիրների պատճառով: Մասնավորապես, ինչպես հետևում է *Աղյուսակ 1*-ից, գիտատեխնիկական և ինովացիոն զարգացման ոլորտի ֆինանսավորումը վերջին տարիներին չի գերազանցում ՀՆԱ 0,24-0,26%-ը [1]: Սյուս կողմից, 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի 9,2%-ը կատարվել է կրթության ոլորտում (2014թ. այն կազմել է 9,7%), ինչը ցածր ցուցանիշ չէ, սակայն ակնհայտորեն բնութագրում է կրթության և գիտության ոլորտների տարանջատվածությունը և պետական քաղաքականության տարբեր մոտեցումներն այս հարցում:

*Աղյուսակ 1*

*Գիտության ֆինանսավորման կառուցվածքը ՀՀ-ում*

Առանձին ֆինանսավորումները գիտության ֆինանսավորման ընդհանուր ծավալում	Թվականներ				
	2012	2013	2014	2015	2016
Բազային ֆինանսավորում, %	70,6	73,0	71,1	70,6	71,7
Պայմանագրային / թեմատիկ ֆինանսավորում, %	9,7	9,7	12,0	12,8	12,2
Նպատակային ծրագրեր, %	14,2	13,4	13,3	13,3	13,1
Գիտական աստիճանի լրավճարներ, %	5,5	3,9	3,6	3,3	3,0
Բաժինը ՀՆԱ-ում, %	0,24	0,25	0,26	0,26	Տվյալ չկա

*Աղյուսակ 2*-ում տրված են Հայաստանի Հանրապետությունում գիտական հետազոտությունների և մշակումների վերաբերյալ որոշ ցուցանիշներ 2010-2014թթ. ժամանակաշրջանի համար: Մասնավորապես, հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը տատանվում են մոտ 8-11 մլրդ

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, *Raymond Bonner*, BUSINESS TECHNOLOGY; Thriving in What Was the Soviet Silicon Valley, The New York Times, April 27, 1994. from <http://www.nytimes.com/1994/04/27/business/business-technology-thriving-in-what-was-the-soviet-silicon-valley.html>



դրամի սահմաններում: Ծախսերի տարեկան զգալի աճը (բացառությամբ 2013թ.) դրական երևույթ է, սակայն ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ տոկոսային համամասնությամբ գիտական հետազոտություններին և մշակումներին հատկացվող ֆինանսավորումը շարունակում է մնալ ցածր մակարդակում: Այսպես, ՀՆԱ-ի համեմատ տոկոսաչափով Հայաստանն այդ ցուցանիշով համեմատելի է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Մոնղոլիան, Տոգոն, Զամբիան և Սեյշելյան կղզիները, ընդ որում, զիջելով ցածր-միջին եկամուտով աշխարհի երկրների (որոնց թվին Համաշխարհային բանկի դասակարգմամբ պատկանում է նաև Հայաստանը) միջինացված ցուցանիշին 2 անգամ, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների միջինացված ցուցանիշին՝ 3 անգամ, Հարավային Ասիայի՝ 3 անգամ, Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսային տարածաշրջանի՝ 10 անգամ և այլն<sup>1</sup>:

Աղյուսակ 2

Գիտական հետազոտությունների և մշակումների ցուցանիշներ

Ցուցանիշը	Տարեթիվը				
	2010	2011	2012	2013	2014
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսեր, միլիոն դրամ	7987,9	9276,6	9713,2	9355,7	10912,0
Հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը	81	72	72	62	66
Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների (գիտ. աստիճան ունեցողների) թվաքանակը, մարդ	6558 (2179)	5718 (1966)	5598 (2017)	5230 (1951)	5627 (2076)
Աշխատողների (գիտ. աստիճան ունեցողների) միջին մոտավոր թվաքանակը, մարդ	81 (27)	79 (27)	78 (28)	84 (31)	85 (31)

Հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը ՀՀ-ում մեծ չէ և 2010-2014թթ. ժամանակաշրջանում տատանվել է 62-81-ի սահմաններում՝ նվազման միտումով (բացառությամբ 2014թ.): Դրանցում աշխատակիցների քանակը միջինը կազմում է 78-85 մարդ, որոնց միայն մոտ մեկ երրորդ մասն ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան: Այս ցուցանիշները մտահոգիչ են, և ցանկալի է ոչ միայն այդպիսի կազմա-

<sup>1</sup> World Development Indicators. States and Markets. 5.13. World Development Indicators: Science and technology. <http://wdi.worldbank.org/table/5.13>

կերպությունների քանակի, այլ նաև դրանցում աշխատող գիտական աստիճան ունեցող աշխատակիցների թվի էական ավելացում:

Գիտական կադրերի պատրաստումը ՀՀ-ում ունի իր առանձնահատկությունները: Մասնավորապես, *Աղյուսակ 3*-ում տրված են 2010-2014թթ. ընթացքում Հայաստանում ասպիրանտների պատրաստման որոշ տվյալներ: Հարկ է նշել, որ Հայաստանում ասպիրանտների թվաքանակը մեծ չէ և կազմում է ընդհանուր բնակչության մոտ 0,04%-ը (հաշվի չի առնված հայցորդների թվաքանակը): Ընդ որում, բուհերում պատրաստվող ասպիրանտները թվաքանակով 3-4 անգամ ավելին են գիտական հաստատություններում պատրաստվող ասպիրանտների թվաքանակից: Գրեթե նույն հարաբերակցությունն առկա է նաև ասպիրանտուրա ընդունված և թեկնածուական ատենախոսություն պաշտպանած ասպիրանտների միջև:

*Աղյուսակ 3*

*Ասպիրանտների պատրաստումը*

Ընդհանուր ցուցանիշը (գիտական հաստատություններում / բուհերում)	Տարեթիվը				
	2010	2011	2012	2013	2014
Ասպիրանտների թվաքանակը, մարդ	1232 (321/911)	1054 (196/858)	1104 (190/914)	1241 (212/1029)	1223 (234/989)
Ասպիրանտների ընդունելությունը, մարդ	275 (65/210)	368 (52/316)	373 (55/318)	395 (82/313)	321 (69/252)
Թեկնածուական ատենա- խոսություն պաշտպանած ասպիրանտների թվաքա- նակը, մարդ	167 (38/129)	144 (31/113)	203 (32/171)	139 (40/99)	138 (29/109)

Հարկ է նշել, որ նորարարական հետազոտությունների, հետազոտողների քանակը և անգամ ֆինանսավորման չափը, թերևս, ամենախնդրահարույց խոչընդոտները չեն նորարարության զարգացման և ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծման հարցում: Համաշխարհային բանկը 2007թ. հանգել է այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է «չափազանց թույլ և մասնատված ինովացիոն համակարգ», ուր «բացակայում է փոխկապակցվածությունը արտադրության հատվածի, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև» [2]: Ընդ որում, գիտության և արտադրության միջև կապերի զարգացած չլինելը հենց ազգային ինովացիոն համակարգի կառուցվածքային առավել թույլ օղակներից մեկն է: Դրա հետևանքով Հայաստանում ինովացիոն ապրանքների արտադրությունն ու արտահանումը բավական սահմանա-

փակ են. ըստ «Համաշխարհային զարգացման ցուցիչներ»-ի, 2015թ. ՀՀ-ից արտահանվել է լոկ \$11 մլն-ի բարձր տեխնոլոգիական արտադրանք, ինչը կազմում է ընդհանուր արտահանված արտադրանքի 5,3%-ը<sup>1</sup>: Մյուս կողմից, կարևոր շուկաներից երկրի հեռացվածությունն ազդում է բիզնես հատվածի ներուժի և, մասնավորապես, ինովացիոն գործունեության վրա: Բիզնես, Հայաստանում գործում են կառույցներ, որոնք զգալի նպաստ են բերում երկրում նորարարական տեխնոլոգիաների ստեղծմանը և, ընդհանրապես, ինովացիայի խթանմանը: Դրանցից կարելի է նշել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում գործող «Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաներ»-ը և «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան»-ը, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, Գյումրու SS կենտրոնը, «Վիսաֆեր Տեխնոպարկ»-ը, «Մարս» գործարանի և ԵրՄՄԳՀԻ-ի (Մերգելյան ինստիտուտի) տարածքներում ստեղծված «Ալյանս» ազատ տնտեսական գոտին և այլն: Մակայն երկրի տնտեսությունը գիտելիքահենք, ինովացիոն ուղղվածությամբ հիմքի վրա տեղափոխելու գործում դեռևս երկար ճանապարհ կա անցնելու:

### ***Նորարարությանը և ինովացիոն գործունեությանն առնչվող ՀՀ իրավաօրենսդրական դաշտը***

Հայաստանում գիտատեխնոլոգիական և ինովացիոն ոլորտների ներկայիս վիճակը շատ բանով պայմանավորված է նաև գործող օրենսդրությամբ: Ստորև համառոտ դիտարկված են այդ ոլորտները կարգավորող հիմնական օրենքները և իրավական այլ ակտերը:

*Հայաստանի Հանրապետության օրենքը «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին»* [3]: ՀՕ-63-Ն օրենքն ընդունված է 2006թ. մայիսի 23-ին: Այս օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեության պետական աջակցության ձևերը:

Օրենքում սահմանված են ինովացիա, ինովացիոն նախագիծ, պետական ինովացիոն քաղաքականություն, վենչուրային հիմնադրամ, ինովացիոն ենթակառուցվածք, գիտաինովացիոն կենտրոն, տեխնոպարկ, բիզնեսի ինկուբատոր և պետական ինովացիոն ծրագիր հասկացությունները (հոդված 2):

Օրենքում ներկայացված են ինովացիոն գործունեության իրավական հիմքերը (հոդված 3), դրա տեսակները (հոդված 4) և սուբյեկտները (հոդված 5), ին-

<sup>1</sup> World Development Indicators. States and Markets. 5.13. World Development Indicators: Science and technology. <http://wdi.worldbank.org/table/5.13>

վացիոն գործունեությանը պետական աջակցության նպատակը, խնդիրները (հոդված 6) և հիմնական ուղղությունները (հոդված 7): Պետական ինովացիոն քաղաքականության իրականացման հոդվածում (հոդված 8) առանձնահատուկ նշված է, որ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով, որի իրականացման ֆինանսավորումն արտացոլվում է պետական բյուջեում առանձին տողով»: Այնուհետև օրենքում տրված են լիազոր մարմնի իրավասությունները (հոդված 9), ինովացիոն գործունեության ֆինանսական աղբյուրները (հոդված 10) և այս ոլորտում միջազգային համագործակցությունը (հոդված 11):

Օրենքը հիմք է ծառայում ինովացիոն քաղաքականության իրականացման համար և որոշում է ինովացիոն գործունեության ասպարեզում պետական աջակցության եղանակներն ու միջոցները: Սակայն այն հենված է գլխավորապես մի մոտեցման վրա, որն ուղղված է գրեթե բացառապես «գիտության առաջխաղացմանը», և կարիք ունի վերանայման: Մինչդեռ, ինչպես նշվեց, ՀՀ-ում դեռևս թույլ է կապը կրթության, գիտության, գիտահետազոտական և փորձնական ստրուկտուրական աշխատանքների ու արտադրության միջև: Բավական թույլ են զարգացած երկրում ինովացիաների միջնորդության և զորակցության ֆունկցիաներ իրականացնող ինստիտուտները, գործնականորեն բացակայում է նախնական շրջանի ֆինանսավորումը: Արդյունքում՝ Հայաստանում ձևավորված պայմանները չեն նպաստում ինովացիոն ձեռնարկումներին:

Վերը քննարկված «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՕ-63-Ն օրենքին հետևել է *Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» թիվ 1466-Ն որոշումը* [4], որով հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի զարգացման ընդհանուր բնույթի չորս գերակայություններ՝

- ա) ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում ու զարգացում,
- բ) էներգիայի այլընտրանքային աղբյուրներ,
- գ) բարձր տեխնոլոգիական մշակումներ,
- դ) էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրում ու զարգացում:

Այնուհետև այս որոշմանը հետևել է Հայաստանի Հանրապետության կառավարության *2014թ. դեկտեմբերի 25-ի թիվ 54 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունները»* արձանագրային որոշումը [5], որով սահմանված է «Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություն» հասկացությունը՝ որպես միջճյուղային նշանակության ընդհանուր ուղղություն,

որը գիտության և գիտատար արտադրությունների զարգացման հիման վրա կարող է առավելագույն ներդրումն ունենալ երկրի անվտանգության ապահովման, տնտեսական աճի, գիտատեխնիկական զարգացման, հասարակական առաջընթացի և մրցունակության բարձրացման մեջ: Սույն փաստաթղթում թվարկված են 2015-2019թթ. համար առավել կոնկրետացված հետևյալ գերակայությունները.

- հայագիտություն,
- գիտություններ կյանքի մասին,
- արդյունավետ և անվտանգ էներգետիկա,
- հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ,
- տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում,
- գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար հետազոտություններ:

Ակնհայտ է, որ այս գերակայություններից էլ պետք է բխեն երկրի գիտատեխնոլոգիական ու ինովացիոն ոլորտների զարգացման առաջնահերթությունները և հեռանկարային պլանները:

Եզրաբանությամբ և էությամբ ինովացիային անմիջականորեն առնչվող իրավաօրենսդրական վերոնշյալ փաստաթղթերից բացի, ՀՀ-ում գործում են նաև մի շարք այլ, փոքր-ինչ պակաս առնչվող, սակայն նույնքան կարևոր օրենքներ, կառավարության որոշումներ և ռազմավարական բնույթի փաստաթղթեր: Դրանցից կարելի է նշել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագիր»-ը (ընթացքի մեջ են 2016-2020թթ. համապատասխան ծրագրի մշակումն ու ընդունումը) և այլն:

Կարելի է եզրակացնել, որ ինովացիային և նորարարական տեխնոլոգիաներին առնչվող իրավաօրենսդրական դաշտը ՀՀ-ում հիմնականում ձևավորված է, սակայն թարմացման և արդի խնդիրներին, պայմաններին ու գլոբալ մարտահրավերներին համապատասխանեցման կարիք ունի:

**Ինովացիայի զարգացման և նորարարական տեխնոլոգիաների  
ստեղծման ճանապարհին ընկած հիմնախնդիրները  
և դրանց լուծման տարբերակները**

Ինովացիայի զարգացման և նորարարական տեխնոլոգիաների ստեղծման ճանապարհին կան բազմաթիվ հիմնախնդիրներ: Միննույն ժամանակ, երկրի տնտեսությունը դեպի այդ ճանապարհը մղելու մեջ շահագրգռված կողմերի գործողությունները պետք է բխեն երկրում գիտատեխնոլոգիական և ինովացիոն գործունեության առկա վիճակից և հիմնվեն օրենսդրական, կարգավորող և ծրագրային փաստաթղթերով սահմանված հետազոտական ու նորարարական ոլորտների զարգացման թիրախային նպատակների ու խնդիրների վրա: Այստեղ անհրաժեշտ է նաև հաշվի առնել ժամանակակից աշխարհում առկա միտումները, ընդունված լավագույն գործելակերպերը, միջազգային արժեքավոր փորձառությունը և գիտահետազոտական ու ինովացիոն գործունեության խթանման ժամանակակից մեթոդները: Առկա կարևորագույն հիմնախնդիրների բացահայտման և դրանց հնարավոր լուծումների նախանշման նպատակով ուսումնասիրվել են նորարարության ասպարեզում նշանակալի հաջողությունների հասած երկրների փորձը, հետազոտական և ինովացիոն կողմնորոշմամբ գիտակրթական հաստատությունների, մասնավոր ընկերությունների հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերը և համապատասխան ուղղվածությամբ հետազոտական գրականությունը: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփ կերպով բերվում են ստորև:

Ինչպես ցույց է տալիս համաաշխարհային փորձը, գիտատեխնիկական առաջընթացին և ինովացիոն գործունեությանն առավել նպաստող առանցքային գործոններից են կազմակերպություններում ձևավորված նորարարական մշակույթը և միջավայրը: Այսպես, կատարված յոթնամյա ուսումնասիրության արդյունքում *Booz & Co.* խորհրդատվական ընկերությունը (ներկայում՝ *Strategy&*, որը պատկանում է *PricewaterhouseCoopers*-ին) դեռևս 2011թ. հրապարակած իր *Global Innovation 1000* զեկույցում հանգել է եզրակացության, որ նորարարության հարցում առավել հաջողակ են այն կազմակերպությունները, որտեղ գերիշխում է ինովացիոն մշակույթը, ռազմավարությունը համահունչ է վերջինիս, իսկ աշխատակիցները և ղեկավարությունը նորարարության նվիրյալներ են [6]: Ընդ որում, զեկույցի համաձայն, գիտական և կիրառական հետազոտությունների վրա ծախսվող գումարները թեև որոշակի դեր խաղում են, սակայն զգալիորեն ավելի պակաս նշանակություն ունեն: Հետևապես, զարմանալի չէ, որ տարբեր երկրների թե՛ մասնավոր հատվածի ձեռնարկություններում, թե՛ գիտակրթական առաջատար հաստատություններում մեծ նշանակություն է տրվում

ինովացիոն մշակույթի ձևավորման և պահպանման խնդրին: Օրինակ, Դե Մոնտֆորտի համալսարանի (Մեծ Բրիտանիա) հետազոտական և ինովացիոն ռազմավարությունը նախատեսում է «դինամիկ միջավայր և հետազոտական համատարած մշակույթ, որը խրախուսում է ակադեմիական կադրերին ձեռնարկել նպատակասլաց, ինովացիոն և խստապահանջ հետազոտություններ» [7]: Նորթ-Վեսթ համալսարանը (Հվ. Աֆրիկա), որն ունի ինովացիայի համար պատասխանատու հատուկ գրասենյակ, իր հետազոտական և ինովացիոն ինստիտուցիոնալ ռազմավարությունում նշում է ինովացիոն մշակույթի բարելավումը որպես գլխավոր նպատակներից մեկը [8]: Ավելին, Իսրայելի հաջողություններն ինովացիոն և բարձր տեխնոլոգիաների բնագավառում բազմաթիվ հեղինակներ կապում են այդ երկրում տիրող նորարարական մշակույթի հետ: «Ֆորբս» ամսագրում 2013թ. հրատարակած հոդվածում նշվում է, որ թշնամաբար տրամադրված հարևանների միջավայրում գտնվելն Իսրայելին ամեննին չի խանգարում ունենալ ստեղծագործ և նորարար մշակույթ, որը խրախուսում է գաղափարների ազատ հոսքը և համագործակցությունը տարբեր տեսակետներ ունեցող անհատների միջև: Այդ մշակույթի կարևոր բաղադրիչներից է նաև ռիսկի գնալու հանդեպ հանգիստ վերաբերմունքը և հնարավոր ձախողման ընկալումը որպես դասեր քաղելու աղբյուր և ոչ թե անպատվության պիտակ: Հեղինակի պնդմամբ, Իսրայելի ինովացիոն մշակույթի այդ տարրերը նման են ամերիկյանին, ընդ որում, մեկ շնչին ընկնող բաց բաժնետիրական նորարարական ընկերությունների թվով Իսրայելը նույնիսկ գերազանցում է ԱՄՆ-ին [9]:

Ինովացիոն տեխնոլոգիական հետազոտությունների և նախագծերի պարագայում դժվար է երաշխավորել դրանց հաջողությունը, իսկ հաջող ավարտի դեպքում անգամ՝ դրանց արդյունքի կիրառական ներդրումն ու առևտրայնացումը: Որոշ տվյալներով, հաջողության գործակիցն ինովացիոն ոլորտում կազմում է 30-50% [10]: Հավանականության պարզ տրամաբանությամբ, ներդրման և առևտրայնացման առումով հաջողությամբ պսակված ինովացիոն հետազոտությունների և նախագծերի բացարձակ թվաքանակի մեծացման համար հարկավոր է ավելացնել նմանօրինակ ձեռնարկումների ընդհանուր քանակը: Վերջինիս գնահատման չափանիշ կարող է հանդիսանալ արտոնագրման (պատենտավորման) հայտերի թիվը: Հայաստանում 2000-2015թթ. այն տատանվել է տարեկան 127-ից 208-ի սահմաններում, մասնավորապես, 2015թ. ստացվել է 170 նման հայտ [11]: Անշուշտ, այս ցուցանիշը չի կարող գոհացնել: Մյուս կողմից, նորարարական հետազոտությունների թվաքանակից զատ, անհրաժեշտ է ապահովել նաև դրանց իրականացման պատշաճ որակը, քանի որ հակառակ դեպքում ձախողումների մասնաբաժինը կարող է նույնիսկ ավելանալ: Հետազոտություն-

ների որակը կամ հետազոտական գերազանցությունը և դրան հասնելուն ուղղված համապատասխան կարողությունների ապահովումը հատկապես կարևորվում է գիտահետազոտական և գիտակրթական հաստատությունների համար:

Ինովացիայի միջոցով երկրի տնտեսական զարգացմանը նպաստ բերելու ամենաանմիջական եղանակներն են հետազոտական ու նորարարական արդյունքների ներդրումը, առևտրայնացումը և տեխնոլոգիաների փոխանցումը տնտեսվարողներին: Ուսումնասիրությունները վկայում են, որ, օրինակ, այսպես կոչված գիտելիքի փոխանցման գործընկերությունները (*Knowledge transfer partnerships, KPI*) կայուն հնարավորություններ են ստեղծում բիզնեսի նորարարության համար, ինչի շնորհիվ բարձրանում են Մեծ Բրիտանիայի ինովացիոն կարողությունները [12]: Կրթություն–գիտություն–տնտեսություն կապն իր տարաբնույթ դրսևորումներով առաջնային տեղ է գրավում աշխարհի առաջատար գիտակրթական հաստատությունների առաքելություններում և ռազմավարություններում, քանի որ դա է համարվում նրանց գոյության հիմնական նպատակներից մեկը: Այսպես, Տեխնիոն ինստիտուտը (Իսրայելի տեխնոլոգիական ինստիտուտ), որն աշխարհին տվել է մի շարք Նոբելյան մրցանակակիրներ և համարվում է Իսրայելի գիտատեխնիկական առաջընթացի շարժիչ ուժը, մինչև 2045թ. ռազմավարության իր նախագծում նախատեսում է մասնավոր ընկերությունների էլ՝ ավելի մեծամասշտաբ ներգրավում նոր կառուցվելիք տարածքների միջոցով, վերածելով դրանք ինովացիոն հանգույցների (*innovation hubs*) [13]: Ինովացիան խթանելու և այն տնտեսական զարգացմանը ծառայեցնելու հարցում մեծ դերակատարում ունեն տեխնոպարկերը, բարձր տեխնոլոգիաների ինկուբատորները, ակսելերացիոն ծրագրերը, ձեռներեցության աջակցման կենտրոնները և նմանատիպ այլ կառուցվածքները: Օրինակ, մեկնարկային (*startup*), համալսարանից «անջատվող» (*spin-out* կամ *spin-off*) ընկերությունների ու ինովացիոն ՓՄՁ-ների աջակցությունը համարելով ռազմավարական նպատակ՝ Ստրեթքլայդի համալսարանը (Մեծ Բրիտանիա) իրականացնում է մի շարք ծրագրեր: Նախամեկնարկային (*pre-startup*) գործողություններին աջակցություն է ցուցաբերվում նախատիպերի արագացված ստեղծմանը հարմարեցված համակարգչային լաբորատորիաների, հավելվածների մշակման *AppCity* կոչվող ծրագրի և ձեռնարկատիրական նախաձեռնությունների արտաքին ֆինանսավորումն ավելի հասանելի դարձնելու միջոցով: Մեկնարկային, փոքր և միջին ձեռնարկություններն օգտվում են Ստրեթքլայդի համալսարանի ակսելերացիոն ծրագրից, ձեռնարկության ղեկավարների վերապատրաստման հնարավորություններից, ձեռներեցության կենտրոնի խորհրդատվական ծառայություններից և այլն [14]: Իսկ Տեխասի համալսարանի Օսթինի մասնաճյուղում (ԱՄՆ) գործում



են տեխնոլոգիական ինկուբատոր, մեկնարկային ընկերությունների գրադարան և մեկնարկային ընկերությունների գլոբալ ծրագիր [15]:

Թեև ինովացիան սովորաբար սկսվում է անհատ նորարարի կամ հետազոտողների փոքր խմբի հղացած գաղափարից, սակայն այդ գաղափարի հետագա մշակման, զարգացման, դրա շուրջ գիտահետազոտական և փորձարարանախագծային աշխատանքների իրականացման և գործնականում ներդրման համար պահանջվում են բազմազան շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերը: Ավելին, նորարարական գաղափարները հաճախ առաջանում են տարբեր տեսանկյուններից խնդիրը դիտարկող, տարբերակված մոտեցումներ, պահանջներ, կարիքներ և նպատակներ ունեցող կազմակերպությունների և անհատների շփման, փոխգործողության ու համագործակցության արդյունքում: Ժամանակակից գլոբալացված աշխարհում նման համագործակցության համար առկա են լայն հնարավորություններ, այդ թվում՝ միջազգային մակարդակով: ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության նորարարական զարգացման ակնարկ»-ում բազմիցս շեշտվում է, որ ազգային ինովացիոն համակարգի շրջանակում նորարարության շղթայում ընդգրկված տարբեր կազմակերպությունների համագործակցության, հատկապես՝ գիտություն-արդյունաբերություն կապերի զարգացման կարիք կա, ընդ որում, այդ գործընթացում պետք է ներգրավել ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում գործող տարաբնույթ կազմակերպությունների [16]: Այսպիսով, մերօրյա գլոբալ աշխարհում ինովացիայի ճանապարհն անցնում է նորարարության շղթայում գործող շահագրգիռ տարբեր կողմերի միջև համագործակցության կամրջով: Այս հանգամանքի կարևորությունն ընդգծելու համար *Thomson Reuters* ընկերությունը «Ինովացիայի վիճակը 2016թ.» հաշվետվությունում նույնիսկ կիրառում է «*collabovation*» («համագործանովացիա») նորաբանությունը, ըստ էության ակնարկելով, թե համագործակցությունը և ինովացիան այսօր այնքան միահյուսված են մեկ գործընթացում, որ առանց առաջինի վերջինս անհնար է: Ինչպես նշվում է հաշվետվությունում, ինովացիայի կենսափուլերը՝ հայտնագործությունից մինչև առևտրայնացում, ընդգրկում են բազմաթիվ գործողություններ, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանք, նախատիպի ստեղծում, մտավոր սեփականության պաշտպանություն, ապրանքայնացում ու մոնետիզացում, իսկ գիտության և տեխնոլոգիայի սրբնթաց զարգացող արդի աշխարհում այդ բոլոր փուլերի միջով անցնելով հաջողության հասնելը հնարավոր է միայն «համագործանովացիայի» միջոցով [17]:

Պետության, պետական մարմնի, գիտահետազոտական և կրթական հաստատության, կայացած կամ մեկնարկային մասնավոր ձեռնարկության, հետազո-

տական խմբի կամ լաբորատորիայի մակարդակներով ինովացիայի և նորարարական տեխնոլոգիաների ստեղծման հարցում, անկասկած, կան նաև այլ տարաբնույթ խնդիրներ, սակայն վերը նշվածները կարծես թե առավել հաճախ քննարկվող և բոլորի համար ընդհանուր հիմնահարցերն են: Օրինակ՝ կատարված խոր և բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում ամերիկյան հետազոտողները նորարարության աղբյուրներ են համարել կազմակերպությունների ստեղծարարությունը, գիտահետազոտական և մշակման աշխատանքները, դաշինքներն ու համագործակցությունները, առևտրայնացման հանգեցնող ինովացման «շարժիչները» (համալսարաններ, լաբորատորիաներ, ինկուբատորներ և այլն) և տեխնոլոգիական կլաստերները, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների ու դրանցից բխող գիտելիքների տարածումը (այսպես կոչված, «տեխնոլոգիայի արտանետումը»՝ *technology spillover*) [18]:

Ամփոփելով և խմբավորելով վերոնշյալը՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

1. Նորարարության մշակույթի ձևավորման և ինովացիոն հետազոտությունները խթանող միջավայրի ապահովման հարցը:
2. Ինովացիոն հետազոտությունների ծավալի ընդլայնման, դրանց որակի ապահովման ու համապատասխան կարողությունների կատարելագործման հիմնախնդիրը:
3. Կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցվածության ապահովումը (հատկապես գիտելիքի փոխանցման և առևտրայնացման տեսանկյունից):
4. Համագործակցային ու գործընկերային ցանցի մշտական զարգացման կարիքը:

Ինչպես տեսնում ենք, թվարկված հիմնախնդիրները հիմնականում կապված են կառավարման հետ: Հիմնվելով հայաստանյան և միջազգային համադրելի փորձի վրա՝ այս հիմնախնդիրների համար կարելի է առաջ քաշել լուծումների հետևյալ հնարավոր տարբերակները:

*Նորարարության մշակույթը և ինովացիոն հետազոտությունները խթանող միջավայրը* ձևավորվում են այնպիսի հարթություններում, ինչպիսիք են՝ համապատասխան նյութատեխնիկական, ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հնարավորությունների զարգացումը, ժամանակակից տեղեկատվական ենթակառուցվածքների, հրապարակայնության ու իրազեկվածության ապահովման մեխանիզմների ստեղծումը, նորարարության տարածմանը նպաստող զանազան միջոցառումների կազմակերպումը: Նույնքան կարևոր են դեռևս ուսանողական

(անգամ դպրոցական) նստարանից ինովացիայի արժեքավորության գաղափարի ու նորարարական ոգու հաղորդումը երիտասարդ սերնդին, իսկ հետագայում՝ նորարարության պահանջվածությունն ապացուցող և այն նյութապես ու բարոյապես խրախուսող քայլերի ձեռնարկումը: Հայաստանում նորարարական մշակույթի և միջավայրի ձևավորման խնդրին լուծում տալու համար առաջարկվում են հետևյալ գործողությունները.

- Վերոհիշյալ իրավասթենսդրական և ռազմավարական փաստաթղթերում նշված ոլորտներից բացի ընտրել ինովացիոն, հատկապես՝ միջմասնագիտական հետազոտությունների այն բնագավառները, որոնք առավել խոստումնալից հեռանկարներ ու դրանք զարգացնելու հիմքեր ունեն երկրում, և պետական մակարդակով զարկ տալ այդ բնագավառներում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը:
- Իրականացնել գիտահետազոտական ոլորտի նյութատեխնիկական հնարավորությունների և ենթակառուցվածքների առկա վիճակի հաշվառում, վերլուծություն, ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան ու ապահովել դրա հասանելիությունը երկրի հետազոտողներին և գիտական հանրությանը:
- ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում մշակել և իրականացնել նյութատեխնիկական հնարավորությունների արդիականացման ու համալրման ծրագրեր, ապահովել առկա ենթակառուցվածքների հասանելիությունը, նպատակային և արդյունավետ շահագործումը: Մշակել ու կիրառել հատուկ սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման ծրագիր, որի ներքին ռեսուրսների և արտաքին աղբյուրներից հայթայթվող միջոցների հաշվին ֆինանսավորմանը տալ առաջնահերթություն:
- Ստեղծել ինովացիոն խորհուրդներ ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում, ինչպես նաև պետական բարձր մակարդակով՝ Հայաստանի գիտակրթական ու գործարար ոլորտների առաջադեմ, ստեղծարար, փորձառու մասնագետների ներգրավմամբ, նշված հաստատություններում, ինչպես նաև ամբողջ երկրում նորարարական գործունեության առաջնահերթությունները սահմանելու և համակարգելու, կրթություն-գիտություն-արդյունաբերություն/գործարար ոլորտ կապն ապահովելու նպատակով:
- Ջարկ տալ ինովացիոն ուղղվածությամբ գիտաժողովների, միջդիսցիպլինար գիտահետազոտական աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպմանը՝ դրանցում ներգրավելով ինչպես հայաստանցի, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների, մասնագետների և հատկապես ինովա-

ցիոն տեխնոլոգիաներով զբաղվող ձեռնարկությունների ներկայացուցիչներին: Նման միջոցառումները կարևորվում են թե՛ փորձի փոխանակման, թե՛ կատարվող նորարարական հետազոտությունների աշխատանքների պատշաճ քննարկման, ներկայացման և դրանց հրապարակայնացման ու հասանելիության համար:

- Ստեղծել «ուղեղային կենտրոններ» (*think tank*), որոնց հիմնական նպատակը կհանդիսանա գիտատեխնիկական, տեխնոլոգիական և ինովացիոն խնդիրներում ՀՀ կառավարությանը մասնագիտական և փորձագիտական տեղեկատվության, վերլուծությունների և խորհրդատվության տրամադրումը, բնագավառը խթանող օրենսդրության, ինովացիոն քաղաքականության ձևավորման և պետական մակարդակի որոշումների կայացման աջակցումը:
- Ձևավորել նորարարության բնագավառում հաջողությունների հասած հետազոտողների, ձեռներեցների, ուսանողների և աշակերտների ճանաչման, դրվատման և հնարավորության դեպքում՝ պարգևատրման ծրագրեր ու մեխանիզմներ, հստակ ազդակներ հաղորդելով առ այն, որ ինովացիան խրախուսվում և բարձր է գնահատվում Հայաստանում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակը լավ օրինակ է այս հարցում:
- ՀՀ կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ընդգրկել ինովացիայի էությունը և կարևորությունը բացահայտող, դրա գործընթացը և արդյունքների առևտրայնացման մեխանիզմներն ուսումնասիրող առարկաներ: Ապահովել ինովացիոն բնույթի աշխատանքների, ծրագրերի, նախագծերի, դրանց շրջանակներում ձեռք բերված արդյունքների և նվաճումների մասին տեղեկությունների ու նյութերի օգտագործումն ուսումնական գործընթացում:

*Ինովացիոն հետազոտությունների ծավալի ընդլայնման, դրանց որակի ապահովման և համապատասխան կարողությունների կատարելագործման տեսանկյունից կարևորվում են հետևյալ ձեռնարկումները.*

- ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում մշակել, համապատասխան ընթացակարգով հաստատել և կիրարկել ինովացիոն գործունեության երկարաժամկետ պլաններ՝ որոշակի պարբերականությամբ թարմացնելով և համապատասխանեցնելով այն Հայաստանի գիտական և նորարարական ոլորտների զարգացման միտումներին, տեղական, տարածաշրջանային և համաշխարհային շուկաների իրողություններին ու պահանջարկին:

- Մշակել և ներդնել մեխանիզմներ երիտասարդ գիտնականներին գիտակրթական և գիտահետազոտական գործունեության մեջ ներգրավման ուղղությամբ, ստեղծել պայմաններ գիտական աշխատանքի գրավչության բարձրացման, երիտասարդների խրախուսման ու շահագրգռման համար:
- Մշակել հետազոտությունների որակի, դրանց արդյունքների գնահատման միջազգային չափանիշների վրա հիմնված համակարգ: Նշված համակարգը ներդնել ՀՀ-ում գործող գիտահետազոտական և կրթագիտական հաստատություններում որակի գնահատման համակարգերի շրջանակներում և դրանով իրականացվող գնահատման արդյունքները հաշվի առնել աշխատակիցների առաջընթացման, վարձատրության և խրախուսման գործընթացներում:
- Խրախուսել գիտական հոդվածների հրատարակումը բարձր վարկանիշ և ազդեցության գործոն (*Impact Factor*) ունեցող միջազգային հեղինակավոր պարբերականներում: Այդ նկատառումով միջոցներ ձեռնարկել հետազոտողների շրջանում օտար լեզուների (հատկապես անգլերենի) իմացության կատարելագործման ուղղությամբ:
- Բարձրացնել երկրում հրատարակվող գիտական հանդեսների, ժողովածուների որակը, ինչպես նաև դրանցում ընդգրկվող նյութերի գրախոսման մակարդակը՝ առավելագույնս նպաստելով գիտության ինովացիոն վերակողմնորոշմանն ու միջազգային հեղինակության բարձրացմանը, ներկայացնելով նաև այլ գիտական կենտրոնների մասնագետների աշխատանքներն ու առաջատար տեխնոլոգիական հետազոտական համալսարանների փորձը:
- Կատարելագործել և ընդլայնել գիտատեղեկատվական հնարավորություններն ու միջոցները՝ ապահովելով գիտական ու նորարարական հետազոտությունների համար արդյունավետ և արդիական տեղեկատվական հենք: Ընդլայնել գիտական աշխատությունների միջազգային էլեկտրոնային շտեմարանների և առցանց գրադարանների հասանելիությունը Հայաստանում գործունեություն ծավալող հետազոտողների համար:

*Կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցվածության ապահովումը և ինովացիոն գաղափարների ու տեխնոլոգիաների առևտրայնացման նպաստումը* մեծապես պայմանավորվում են գիտակրթական համակարգի և տնտեսության ինովացիոն հատվածի միջև կապերի ու համագործակցության ամրապնդմամբ: Աշխարհի տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ գործնական տեսանկյունից դա կայանում է միմյանց չբացառող մի քանի ուղիներով, որոնք հետևյալն են.

ա. Գործող տեխնոլոգիական ձեռնարկությունները նախաձեռնում են գիտական ոլորտից նորարարական գիտելիքի փոխանցումը և կիրառումը սեփական կարիքների ու նպատակների համար: Այս նպատակով մասնավոր հատվածը ձեռք է բերում ստեղծված գյուտերի և նորարարությունների օգտագործման իրավունքը կամ կնքում գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագրեր (պատվերներ): Խոսքը հիմնականում վերաբերում է կիրառական նշանակություն ունեցող հետազոտություններին, թեև որոշ բացառիկ դեպքերում հնարավոր է նաև հիմնարար գիտության բնագավառի հետազոտությունների ընդգրկում: Հարկ է նշել, որ մասնավոր հատվածի ձեռնարկությունները երբեմն պարզապես աշխատանքի են հրավիրում իրենց համար հետաքրքրություն ներկայացնող բնագավառում աշխատանքներ իրականացնող և արդյունքների հասած հետազոտողին, ինչը պետք է ընկալել ոչ թե որպես գիտական մարդկային ռեսուրսի կորուստ, այլ ինովացիոն ցանցի ընդլայնում և նոր կապերի ստեղծում:

բ. Գիտահետազոտական կամ կրթագիտական հաստատությունում կիրառական նշանակություն ունեցող նորույթ ստեղծած գիտաաշխատողը կամ հետազոտական խումբը հիմնադրում է մայր հաստատությունից առանձնացված (թեև հաճախ վերջինիս հավանությամբ և աջակցությամբ սկզբնավորված) փոքր մասնավոր ձեռնարկություն («անջատվող» ընկերություն, *spin-out* կամ *spin-off*) [19]: Վերջինս տարբեր աղբյուրներից ներդրումների ներգրավմամբ իրականացնում է ինովացիոն արդյունքի առևտրայնացման գործընթաց: Այս միտումը հատկապես ակնառու է ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում բարձրագույն մակարդակի և հսկայական հաջողությունների հասած այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը և Իսրայելը:

գ. Գիտակրթական կամ հետազոտական հաստատությունն իր մոտ գրավիչ պայմաններ է ստեղծում՝ մասնավոր ընկերություններին շահագրգռելով իրենց տնտեսական և ինովացիոն գործունեությունը կամ դրա մի մասը հաստատության տարածքում իրականացնելու համար: Դրա բազմաթիվ օրինակներից են տարբեր երկրներում համալսարաններին և գիտահետազոտական կենտրոններին կից գործող տեխնոլոգիական ինկուբատորները, տեխնոպարկերը, «ինովացիոն գոտիները» և նմանատիպ այլ կառույցները:

դ. Կիրառվում են մշտական կապի պահպանման և ամրապնդման, տվյալների, տեղեկությունների, գիտելիքի և փորձի փոխանակման բազմաթիվ մեխանիզմներ և միջոցներ՝ խթանելով թե՛ անմիջական ու ոչ ֆորմալ, թե՛ պաշտոնական ու գործարար շփումները: Դրանցից են կրթության, գիտության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ տարաբնույթ հանդիպումները,

ժողովները և փոխադարձ այցերը, պայմանագրային հիմունքներով համալսարանների փորձագիտական և նյութատեխնիկական հնարավորությունների օգտագործումը ձեռնարկությունների կողմից և այլն:

Այս համատեքստում մեծապես կարևորվում են գիտելիքների փոխանակման և առևտրայնացման գործընթացի մասնակիցների իրավատնտեսական հարաբերությունների հստակեցումը և փոխշահավետության սկզբունքի պահպանումը, այդ գործընթացի նրբությունների մասին իրազեկվածության ապահովումը:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները և ժամանակի հրամայականները՝ առաջարկվում են հետևյալ քայլերը.

- Գիտակրթական հաստություններին կից ստեղծել ինովացիոն և հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացումը և ներդրումը, տեխնոլոգիաների փոխանցումը, արտոնագրումը կազմակերպող և համակարգող, մարքեթինգային ուսումնասիրություններ կատարող, որոշ դեպքերում գուցե նաև տեխնոլոգիական ինկուբատորի գործառույթներ իրականացնող վերլուծական-խորհրդատվական ենթակառուցվածքներ:
- Ստեղծել գիտական և գործարար ոլորտների կազմակերպությունների նորարարական ու հետազոտական խմբերին փորձագիտական-չափագիտական-փորձարարական և փորձանմուշների պատրաստման համար տեխնիկական, տեխնոլոգիական և այլ ծառայություններ մատուցող կառույցներ, հատկապես գործող գիտահետազոտական հաստատությունների շրջանակներում:
- Կատարելագործել մտավոր սեփականության առևտրայնացմանը վերաբերող օրենսդրությունը, պետական քաղաքականությունը և դրանց համապատասխան՝ ստեղծել գիտահետազոտական և կրթագիտական հաստատությունների համար արտոնագրման, մտավոր սեփականության վաճառքի, ձեռնարկության հիմնման և այլ տարբերակներով առևտրայնացման մարտավարություններ:
- Վերոնշյալի շրջանակում շահագրգիռ կազմակերպություններում մշակել ստեղծված մտավոր սեփականության գրանցման (արտոնագրման) և օգտագործման պայմանները, ինչպես նաև այդ սեփականության նկատմամբ ստեղծողի և օգտագործողի իրավունքները սահմանող ընթացակարգեր:
- Կազմակերպել մտավոր սեփականության պաշտպանության և առևտրայնացման, ինովացիայի և գյուտերի վավերացման, ինքնատիպության և նորամուծության որոշման վերաբերյալ դասընթացներ և տեղեկատվական հանդիպումներ՝ ներգրավելով համապատասխան մասնագետների:

- Ինովացիան խթանելու նպատակով ձևավորել գործարար ոլորտի հետ գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակման, հետազոտողների կողմից իրենց ստեղծած արդյունքների շուկայական հնարավորությունների քննարկման պայմաններ, ուղիներ և հարթակներ:
- Համալսարաններում ստեղծել պայմաններ մեկնարկային ընկերությունների (*startup*) ձևավորման և գործունեության համար՝ դասախոսների, ուսանողների, մասնագետների ներգրավումով: Փոխշահավետ հիմունքներով աշխատանքային տարածք ու գիտատեխնոլոգիական պայմաններ տրամադրել տարաբնույթ հետազոտական-տեխնոլոգիական-նորարարական ընկերություններին ու ձեռնարկություններին՝ լավագույն ուսանողներին, շրջանավարտներին, մասնագետներին աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելով: Նպաստել համալսարաններից «անջատվող» ինովացիոն տեխնոլոգիական ձեռնարկությունների (*spin-out/spin-off*) ստեղծմանը:

*Համագործակցային ու գործընկերային ցանցի մշտական զարգացման* համատեքստում անհրաժեշտ է բազմազանեցնել համագործակցության գիտական, կրթական, առևտրային և այլ ձևերը՝ դրանցում ակտիվորեն ներգրավվելով տեղական ու միջազգային կազմակերպությունների: Հայաստանի պարագայում այս առումով լրացուցիչ ներուժ է ներկայացնում նաև աշխարհասփյուռ հայությունը: Սակայն հարկ է նշել, որ արտերկրում գործող հազարավոր հայազգի մասնագետների միայն փոքր մասի հետ են հաստատվել համագործակցային կապեր, իսկ տվյալների ստեղծված բազայում հաջողվել է ընդգրկել նրանցից ընդամենը մոտ 500-ի մասին տեղեկություններ [20]: Հաշվի առնելով ինովացիայի և գիտահետազոտական գործունեության խթանման, նոր տեխնոլոգիաների մշակման և գիտելիքահենք տնտեսության ձևավորման հարցում համագործակցության կարևորությունը՝ առաջարկվում է իրականացնել միջազգային և ներհայաստանյան մակարդակներով գիտակրթական հաստատությունների, պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնմանը, առկա գործընկերային կապերի խորացմանն ու ամրապնդմանը և նորերի հաստատմանն ու զարգացմանն ուղղված քայլեր, այդ թվում.

- Աջակցել միջմասնագիտական գիտական համագործակցությանը, համատեղ նախագծերի ձևավորմանն ու իրականացմանը: Խրախուսել գիտական համագործակցության ձևերի բազմազանեցումը ՀՀ գիտահետազոտական և կրթագիտական հաստատությունների գործընկերային ցանցի ընդլայնման ճանապարհով, շարունակել խթանել միջազգային գիտական համագործակ-



ցությունն արտասահմանյան առաջատար համալսարանների, գիտական կենտրոնների և մասնավոր ձեռնարկությունների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնումն ու իրականացումը՝ երկկողմ ու բազմակողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:

- Ընդլայնել միջազգային փոխանակման և ակադեմիական շարժունության ծրագրերը, նախաձեռնողաբար ձեռնարկել նորերը, հատկապես ինովացիոն կողմնորոշմամբ հայտնի արտասահմանյան համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների հետ:
- ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում խրախուսել արտասահմանցի հետազոտողների հետ համատեղ ինովացիոն գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և դրանց արդյունքներով համահեղինակած գիտական հոդվածների և աշխատությունների հրատարակումը:
- Մշակել և իրականացնել արտերկրում աշխատող հայազգի գիտնականների ներգրավմամբ ծրագրեր, միջոցներ ձեռնարկել գիտական, հետազոտական և ինովացիոն գործունեությամբ զբաղվող սփյուռքահայերի և արտերկրի հայկական համայնքների ստեղծած կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ընդլայնման ուղղությամբ: Գիտահետազոտական, վերլուծական և ինովացիոն աշխատանքի բնագավառում Հայրենիք-Սփյուռք համակարգված փոխգործակցության ապահովման տեսակետից կարևորագույն նշանակություն կարող է ունենալ Հայաստանի և Սփյուռքի գիտական և փորձագիտական հանրությունները միավորող համազգային ցանցային կառույցի ստեղծումը:
- Նշանակալիորեն ավելացնել գիտատեխնիկական, տեխնոլոգիական և նորարարական գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների կառավարիչների և մասնագետների կողմից համալսարաններում և ավագ դպրոցներում անցկացվող առանձին ազատ դասախոսությունների և էլույթ-գեկուցումների թվաքանակը, ինչպես նաև հրավիրել նրանց պլանային դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամերին՝ կոնկրետ թեմաներով ուսուցողական-կիրառական նյութերի ներկայացման համար:
- Ձևավորել Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրի հետ գիտահետազոտական, կրթագիտական հաստատությունների, ինովացիոն գործունեությամբ զբաղվող մասնավոր ձեռնարկությունների կապի արդյունավետ մեխանիզմներ:

Ինովացիոն կողմնորոշմամբ մրցունակ տնտեսություն ունենալու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կառավարման խնդիրներ: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում դրանց շարքում կարևորվել են նորարարության մշակույթի ձևավորումը, ինովացիոն հետազոտությունների ծավալի ընդլայնումն ու որակի բարձրացումը, կրթություն–գիտություն–տնտեսություն փոխկապակցվածության ապահովումը և համագործակցային ու գործընկերային ցանցի զարգացումը:

*Օգոստոս, 2016թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2015, 576 էջ:
2. *S.Mitra, D.Andrew, G.Gyulumyan, P.Holden, B.Kaminski, Y.Kuznetsov, E.Vashakmadze*, The Caucasian Tiger, Sustaining Economic Growth in Armenia, World Bank, p. 134, Washington, DC, 2007.
3. ՀՀ օրենքը «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» (ՀՕ-63-Ն, ընդունված է 2006թ. մայիսի 23-ին):
4. ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» թիվ 1466-Ն որոշում:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի թիվ 54 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունները» արձանագրային որոշում:
6. *B.Jaruzelski, J.Loehr, and R.Holman*, The Global Innovation 1000: Why Culture Is Key. Strategy + Business, No. 65, 2011.
7. *De Montfort University*, RESEARCH AND INNOVATION STRATEGY 2013-17, from <http://www.dmu.ac.uk/documents/research-documents/research-strategy/research-and-innovation-strategy-digital-2013-17.pdf>
8. *North-West University*, Institutional Strategy for Research and Innovation 2008-2010, from <http://www.nwu.ac.za/sites/www.nwu.ac.za/files/files/i-research-support/ResearchLinkdocs/SetswanaPDFs/ResearchandInnovationStrategy.pdf>
9. *G.Shapiro*, What Are The Secrets Behind Israel's Growing Innovative Edge? Forbes, November 13, 2013, <http://www.forbes.com/sites/realspin/2013/11/07/what-are-the-secrets-behind-israels-growing-innovative-edge/#2687d75a1172>
10. *H.K. Tang*, An Integrative Model of Innovation in Organizations. *Technovation*, No. 18 (5), pp. 297-309, 2000.
11. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-մարտին. տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189:
12. *P.Ternouth, C.Garner, L.Wood and P.Forbes*, Key Attributes for Successful Knowledge Transfer Partnerships, Commissioned by the Technology Strategy Board and the Research

Councils, from [http://www.ncub.co.uk/index.php?option=com\\_docman&task=doc\\_download&gid=35&Itemid=](http://www.ncub.co.uk/index.php?option=com_docman&task=doc_download&gid=35&Itemid=)

13. *Technion Israel Institute of Technology*, TechCity21: Strategic Master Plan Until 2045, from <http://abat.net.technion.ac.il/files/2013/02/TechCity21.pdf>
14. *University of Strathclyde Glasgow*, Strategy for Innovation, from [https://www.strath.ac.uk/media/1newwebsite/documents/Innovation\\_Strategy\\_2015.pdf](https://www.strath.ac.uk/media/1newwebsite/documents/Innovation_Strategy_2015.pdf)
15. Austin Technology Incubator, <http://ati.utexas.edu/>; ATI Startup Library, <https://wikis.utexas.edu/display/asul/Home>; Global Startup Program <http://utenportugal.org/global-startup-program/>
16. *Европейская экономическая комиссия ООН*, Обзор инновационного развития Республики Армения. Организация Объединенных Наций. Нью-Йорк и Женева, 2014г., 202 с. <http://www.iatp.am/news/IPR-Armenia.pdf>
17. *Thomson Reuters*, 2016 State of Innovation Report: Disruptive, Game-Changing Innovation, <http://stateofinnovation.thomsonreuters.com/>
18. *A.Datta, R.Reed and L.Jessup*, Commercialization of innovations: an overarching framework and research agenda, *American Journal of Business*, Vol. 28, No. 2, pp. 147-191, 2013.
19. *P.N. Pattnaik, and S.C. Pandey*, University Spinoffs: What, Why, and How? *Technology Innovation Management Review*, 4(12), pp. 44–50. 2014.
20. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, «Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013, [http://www.noravank.am/upload/pdf/SPYURQI\\_GITAVERLUCAKAN\\_HANRUTYUNY.pdf](http://www.noravank.am/upload/pdf/SPYURQI_GITAVERLUCAKAN_HANRUTYUNY.pdf)

**ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ.  
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

**Վահե Օղարաշյան**

**Ամփոփագիր**

Նորարարական գործունեությունը և ինովացիոն տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում ոչ միայն հնարավորություն են ընձեռում ապահովելու բնակչության կենսամակարդակի բարձրացումը, լուծելու սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրները, այլև հանդիսանում են երկրների աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական հզորության ու անկախության կարևորագույն հիմնաքարեր: Հողվածում վերլուծվել են նորարարության զարգացման և ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծման հետ կապված Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակն ու խնդիրները: Միջազգային փորձի վրա հիմնվելով՝ ուղենշվել են այդ խնդիրների հնարավոր լուծումները, առաջարկվել են մի շարք անհրաժեշտ քայլեր այդ ուղղությամբ:

**НОВАТОРСТВО И ИННОВАЦИОННЫЕ ТЕХНОЛОГИИ:  
ПРОБЛЕМЫ И РЕШЕНИЯ***Vahe Odabashian*

Резюме

В современном мире инновационная деятельность и инновационные технологии не только предоставляют возможности повышения благосостояния населения, решения социальных и экологических проблем, но и являются важными краеугольными камнями геополитической, военной, экономической мощи и независимости государств. В статье проанализированы нынешнее состояние и проблемы связанные с развитием новаторства и созданием инновационных технологий в Республике Армения. Основываясь на международном опыте, очерчены возможные решения этих проблем и предложен ряд необходимых шагов в этом направлении.

**INNOVATION AND INNOVATIVE TECHNOLOGIES:  
PROBLEMS AND SOLUTIONS***Vahe Odabashian*

Resume

In the modern world innovation activities and innovative technologies not only provide an opportunity for increasing population's living standards, solving social and environmental issues, but also are important cornerstones for countries' geopolitical, military, economic might and independence. The article analyzes the current state and problems related to development of innovation and creation of innovative technologies in the Republic of Armenia. Based on international experience, possible solutions for these problems are outlined and a number of necessary steps are proposed in this direction.

**ՕՊԵԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԴԻՆԱՄԻԿԱՆ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ  
(պատմաքաղաքական վերլուծություն)**

*Արմեն Մանվեյան\**

*Բանալի բառեր*՝ նավթի համաշխարհային շուկա, ՕՊԵԿ անդամ պետություններ, գնագոյացում, նավթի ապացուցված պաշարներ, 1973թ. էմբարգո:

Նավթի արդյունահանումը և մատակարարումը, տնտեսական գործոն լինելուց բացի, միշտ էլ ընդգծված քաղաքական բաղադրիչ են եղել՝ պայմանավորված այդ ռեսուրսի նկատմամբ պահանջարկի անընդհատ աճով և, որպես հետևանք՝ նավթով հարուստ տարածաշրջանները վերահսկելու մեծ տերությունների ցանկությամբ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, արդյունաբերության բուռն զարգացման շրջանում, նավթը ձեռք էր բերել ռազմավարական նշանակություն, որի նկատմամբ հետաքրքրությունը շարունակաբար աճում էր: Էներգետիկ համաշխարհային շուկայում նավթի տեսակարար կշիռը հասել էր 70%-ի, իսկ արևմտյան տերությունների բուռն զարգացող տնտեսությունների կախվածության աստիճանն այդ ռեսուրսից շարունակաբար ավելանում էր: Այս պայմաններում հասկապես կարևորվում էր Պարսից ծոցի և ընդհանրապես Միջին Արևելքի դերակատարությունը՝ որպես նավթի արդյունահանման կարևորագույն կենտրոնների: Հետևաբար, հետաքրքրությունը տարածաշրջանի պետությունների՝ որպես նավթ արդյունահանող հիմնական երկրների նկատմամբ, աճում էր:

Նավթ սպառող հիմնական պետությունները նավթի արդյունահանման համար համագործակցում էին այսպես կոչված անդրազգային նավթագազային ընկերությունների հետ: Այդ ընկերություններին հաջողվել էր տեղ զբաղեցնել նավթով հարուստ պետությունների նավթագազային համակարգում և ազդել այդ պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության վրա: Նման կախվածությունը նվազեցնելու համար էլ 1960թ. նավթի արտահանմամբ զբաղվող պետությունները որոշեցին ստեղծել միջազգային կառույց, որը կպաշտպանի նրանց շահերն արևմտյան նավթագազային ընկերություններից և ընդհանրապես Արևմուտքի ազ-

\* ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, միջազգային անվտանգության և էներգետիկ աշխարհաքաղաքականության մասնագետ:

դեցությունից ու նրանց հնարավորություն կտա լինել ավելի ազատ և թելադրել սեփական քաղաքական կամքը նավթի ու գազի միջազգային շուկաներում:

Ազդեցությունը նավթի շուկայում հիմնականում նշանակում է վերահսկել նավթի գնագոյացման քաղաքականությունը, որը մինչ այդ կատարվում էր նավթ սպառող պետությունների կողմից: Պետք է նշել, որ նավթի գնագոյացման վրա ազդելու ցանկությունը միավորման այս գործընթացում ուներ առանցքային նշանակություն, քանի որ Նյու Յորքի և Լոնդոնի սակարաններն էին հանդիսանում նավթի գնագոյացման հիմնական կենտրոնները: Այս իրավիճակը ձեռնտու չէր նավթ արդյունահանող հիմնական պետություններին, որոնք էլ նախաձեռնեցին նոր միջազգային կառույցի ստեղծումը՝ հույսով, որ այն իրենց հնարավորություն կտա թելադրող դիրք զբաղեցնել նավթի համաշխարհային շուկայում՝ այդ թվում ազդելով այդ հումքի գնագոյացման քաղաքականության վրա:

1960թ. սեպտեմբերի 10-14-ը Իրաքի մայրաքաղաք Բաղդադում նավթ արդյունահանող պետությունների կազմակերպած կոնֆերանսում որոշում ընդունվեց ստեղծել Նավթ արտահանող պետությունների կազմակերպությունը (*Organization of the Petroleum Exporting Countries - OPEC*)<sup>1</sup>: Կազմակերպության հիմնադիրներն էին հինգ պետություն՝ Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Վենեսուելան: Հիմնադիր այս հինգ պետություններին հետագայում միացան նաև ինը այլ անդամներ՝ Կատարը (1961թ.), Ինդոնեզիան (1962թ.), Լիբիան (1962թ.), Արաբական Միացյալ Էմիրությունները (1967թ.), Ալժիրը (1969թ.), Նիգերիան (1971թ.), Էկվադորը (1973թ.), Գաբոնը (1975թ.), Անգոլան (2007թ.): ՕՊԵԿ նստավայրը Ժնևում էր, բայց հետագայում այն փոխադրվեց Վիեննա (1965թ. սեպտեմբերի 1):

Կազմակերպությունը ՄԱԿ-ում գրանցում ստացավ 1962թ. սեպտեմբերի 2-ին (ՄԱԿ N6363 որոշում), կանոնադրությունը հաստատվեց Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում 1961թ. հունվարին, հետագայում այն մի քանի անգամ վերանայվել է<sup>2</sup>: Կառույցի ստեղծման նախաձեռնողը Վենեսուելան էր, որը պայքարում էր անդրազգային նավթային ընկերությունների գերիշխանության դեմ և այդ պայքարում նրան դաշնակիցներ էին հարկավոր: Դժգոհություններն այդ ընկերություններից աճում էին նաև մերձավորարևելյան պետություններում, և կողմերը կարողացան համաձայնության գալ՝ ստեղծելով Նավթ արտահանող պետությունների կազմակերպությունը, որը, ըստ նրանց, պետք է թուլացներ այդ պետությունների կախվածությունն արևմտյան նավթային ընկերություններից:

<sup>1</sup> Brief History, [http://www.opec.org/opec\\_web/en/about\\_us/24.htm](http://www.opec.org/opec_web/en/about_us/24.htm)

<sup>2</sup> Ольга Вяземская, Россия и ОПЕК: нам по пути?, Электронный журнал энергосервисной компании «Экологические системы», N 1, январь 2007, [http://journal.esco.co.ua/2007\\_1/art123.htm](http://journal.esco.co.ua/2007_1/art123.htm)

Մինչև ՕՊԵԿ ստեղծումը, դեռ 1953թ., Իրաքը և Սաուդյան Արաբիան փորձել էին այս հարցում համաձայնության գալ՝ պայմանագիր կնքելով նավթային քաղաքականությունը համակարգելու մասին, իսկ 1959թ. Արաբական պետությունների լիգան հատուկ ժողով հրավիրեց՝ նվիրված նավթային խնդիրներին և նավթային քաղաքականությանը, որին հրավիրված էին նաև Իրանն ու Վենեսուելան:

Նշենք, որ ՕՊԵԿ-ը շարունակ ընդլայնում էր գործողությունների և հետաքրքրությունների շրջանակը և, բացի նավթային քաղաքականության կոորդինացման խնդիրներից, զբաղվում էր նաև գիտահետազոտական, կրթական, ինչպես նաև զարգացող պետությունների օգնության ծրագրերով: Մասնավորապես, 1975թ. Ալժիրում տեղի ունեցած հավաքի ժամանակ անդամ պետությունները որոշում ընդունեցին ստեղծել Միջազգային զարգացման հիմնադրամ, որը պետք է զբաղվեր աղքատ պետություններում սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացմամբ<sup>1</sup>: Սակայն, ինչպես նշեցինք, ՕՊԵԿ ստեղծման հիմնական նպատակն էր առաջին հերթին պաշտպանել նավթ արդյունահանող պետությունների շահերը, նվազեցնել նրանց կախվածությունը նավթային ընկերություններից ու մեծացնել ազդեցությունը նավթի շուկայում, հատկապես ազդել նավթի գնագոյացման քաղաքականության վրա: Սա, թերևս, կարևորագույն խնդիր էր ՕՊԵԿ-ի համար, քանի որ նավթի գնագոյացումը հիմնականում վերահսկվում էր արևմտյան տերությունների կողմից:

Ստեղծման առաջին օրից ՕՊԵԿ-ն իր առջև խնդիր դրեց համակարգել նավթ արտահանող պետությունների նավթային քաղաքականությունը՝ համակարգելով և համաձայնեցնելով այն, ձեռք բերել նավթի շուկայի վրա ազդելու և այն կայունացնելու լիարժեք լծակներ և ավելացնել այդ պետությունների նավթային եկամուտները:

Ստեղծման պահին ՕՊԵԿ անդամ պետություններն արդյունահանում էին աշխարհի նավթի 40%-ը, հետագայում այս թիվը մի քանի անգամ տատանվեց, այդ կառույցի անդամ պետություններն արդյունահանման գազաթնակետին հասան անցած դարի 70-ականներին, երբ նրանց հաջողվեց արտահանել աշխարհում սպառվող նավթի 55%-ը<sup>2</sup>: Նավթի գների նվազման հետ միասին ՕՊԵԿ բաժինը նավթի համաշխարհային շուկայում շարունակեց կրճատվել՝ 1980-ական թթ. նավթի ցածր գների պայմաններում հասնելով նույնիսկ 30%-ի: 2000-ականներին նավթի գների բարձրացման պայմաններում սկսեց նորից աճել


<sup>1</sup> Brief History, [http://www.opec.org/opec\\_web/en/about\\_us/24.htm](http://www.opec.org/opec_web/en/about_us/24.htm)

<sup>2</sup> Rasoul Sorkabi, The first oil shock, vol. 12, No 3, 2015, <http://www.geoexpro.com/articles/2015/06/the-first-oil-shock>

նավթ արտահանող պետությունների մասնաբաժինը համաշխարհային նավթի շուկայում՝ հասնելով մոտ 45%-ի (մանրամասն տե՛ս Նկար 1):

Նկար 1

ՕՊԵԿ նավթի արդյունահանման ծավալները 1960-2008թթ.<sup>1</sup>



Մակայն 2014թ. սկսված նավթի գների անկումը կասեցրեց ՕՊԵԿ անդամ պետությունների կողմից էներգետիկ համաշխարհային շուկայում իրենց դիրքերի ամրապնդման քաղաքականությունը: Այստեղ պետք է նշել, որ ՕՊԵԿ-ի համար խնդրահարույց են եղել հարաբերությունները ոչ միայն նավթային գերընկերությունների, այլև նավթ արդյունահանող մյուս պետությունների հետ, որոնք, չլինելով կառույցի անդամ, իրենց գործողություններով շատ դեպքերում խոչընդոտել են վերջինիս գործունեությանը:

ՕՊԵԿ-ը սկզբից նեթ իր առջև խնդիր դրեց նաև հարաբերություններ հաստատել ոչ անդամ պետությունների հետ, որոնք հանդիսանում են խոշոր նավթ արդյունահանողներ ու արտահանողներ: Իսկ արդյունահանման և արտահանման տեսակարար կշիռն աշխարհում փոխվում էր՝ պայմանավորված նավթի գների փոփոխմամբ, այդ գների բարձրացումը հանգեցնում էր նրան, որ նորանոր պետություններ սկսում էին ակտիվորեն զբաղվել նավթի արդյունահանմամբ, և սա նոր խնդիրներ էր ստեղծում ՕՊԵԿ-ի համար:

<sup>1</sup>Նույն տեղում:




Ինչպես նշեցինք, նավթ արտահանող պետությունները միասնաբար տիրապետում են համաշխարհային նավթի շուկայի միայն 40%-ին, սա՝ այն դեպքում, երբ նավթի ապացուցված պաշարներով այդ պետությունների միասնական մասնաբաժինը կազմում է մոտ 81%: Այսինքն՝ ՕՊԵԿ անդամ չհանդիսացող պետությունները՝ Կանադան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան և Մեքսիկան միասնաբար տիրապետում են նավթի ապացուցված պաշարների մոտ 20%-ին, սակայն արդյունահանում են նավթի համաշխարհային շուկայի պահանջարկի 50-60%-ը (մանրամասն տե՛ս *Նկար 2*): Նման իրավիճակը հանգեցնում է նրան, որ վերջին տարիներին ոչ անդամ պետությունների նավթի պաշարների սպառումն ավելի արագ է տեղի ունենում, քան ՕՊԵԿ պետությունների: Սա է պատճառներից մեկը, որ հատկապես վերջին տարիներին սպառող հիմնական պետությունները սկսել են կարևորել էներգիայի գներացման այլընտրանքային աղբյուրները՝ նավթային սեգմենտից կախվածությունը նվազեցնելու միտումով:

*Նկար 2*

*Ապացուցված նավթի պաշարներն աշխարհում  
և ՕՊԵԿ անդամ պետություններում<sup>1</sup>*

OPEC share of world crude oil reserves, 2013



OPEC proven crude oil reserves, at end of 2013 (billion barrels, OPEC share)

Venezuela	298.4	24.7%	Iraq	144.2	12.0%	Libya	48.4	4.0%	Algeria	12.2	1.0%
Saudi Arabia	265.8	22.0%	Kuwait	101.5	8.4%	Nigeria	37.1	3.1%	Angola	9.0	0.7%
IR Iran	157.8	13.1%	UAE	97.8	8.1%	Qatar	25.2	2.1%	Ecuador	8.8	0.7%

Source: OPEC Annual Statistical Bulletin 2014.

ՕՊԵԿ անդամ պետությունների նավթի ապացուցված պաշարները ներկայում կազմում են մոտ 1.265 տրիլիոն բարել, Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների պաշարները՝ մոտ 447 մլրդ բարել, Հյուսիսային Ամերիկայինը՝ 381 մլրդ բարել,

<sup>1</sup> Rasoul Sorkabi, The first oil shock, vol. 12, No 3, 2015, <http://www.geoexpro.com/articles/2015/06/the-first-oil-shock>

իսկ ՕՊԵԿ-ին չանդամակցող զարգացող այլ պետությունների միասնական պաշարները գնահատվում են 282 մլրդ բարել<sup>1</sup>: Այսինքն՝ ՕՊԵԿ անդամ չհանդիսացող պետությունները, չունենալով նավթի մեծ պաշարներ, կարողանում են ավելի շատ նավթ արդյունահանել, ինչը նշանակում է, որ այդ պետություններում նավթի արդյունահանման հզորություններն ավելի մեծ են, քան նավթ արտահանող կազմակերպության պետություններում: Նման իրադրությունն իր հերթին պայմանավորված է նավթի արդյունաբերության բնագավառում Արևմուտքի և Ռուսաստանի տեխնիկական առավելությամբ, ինչը վերջիններիս կողմից ակտիվորեն օգտագործվում է նավթի նորանոր պաշարների շահագործման համար:

Այստեղ կարևոր է նշել, որ նավթի գների փոփոխությունը և հատկապես բարձրացումը հանգեցնում են նավթի համաշխարհային շուկայում նավթի ապացուցված պաշարների անընդհատ վերանայման: Մասնավորապես, սկսում են արդյունահանվել նավթի նորանոր պաշարներ, որոնք նախկինում՝ ցածր գների պայմաններում, համարվում էին ոչ արդյունավետ: Օրինակ, Բրազիլիայի մուտքը նավթի համաշխարհային շուկա պայմանավորված էր, այսպես կոչված, ծանր նավթի արդյունահանմամբ, որը սկսվեց, երբ նավթի գներն անցան \$50-ը: Այսինքն՝ նավթի գների բարձրացումը նպաստում է, մի կողմից, ՕՊԵԿ անդամ պետությունների հարստացմանը, սակայն մյուս կողմից՝ հնարավորություն է տալիս նոր երկրների մուտք գործել նավթի համաշխարհային շուկա:

Նավթի համաշխարհային շուկայում դիրքերի ամրապնդման և կարգավորման համար ՕՊԵԿ-ը սահմանեց նավթի արդյունահանման քվոտաներ, որոնք փոփոխվում են՝ պայմանավորված նավթի շուկայի պահանջարկի, գների փոփոխությամբ և անդամ պետությունների արդյունահանման հզորությունների աճով կամ նվազմամբ: Քվոտաների բաժանումը և դրանցում ամեն մի պետության չափաբաժնի որոշումն էլ պայմանավորված են նավթի ապացուցված պաշարների քանակով և արդյունահանման հզորություններով, ինչի մասին զեկույցներով ամեն տարի հանդես է գալիս ՕՊԵԿ-ը<sup>2</sup>: Նմանատիպ զեկույցները նպաստում են նաև այդ քվոտաների տարեկան վերանայմանը: ՕՊԵԿ անդամ պետությունների միջև քվոտաների բաժանումը կատարվում է հիմնականում հետևյալ սկզբունքներով. Սաուդյան Արաբիա՝ 32.4%, Իրան՝ 14.6%, Վենեսուելա՝ 14.6%, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 8.7%, Նիգերիա՝ 8%, Քուվեյթ՝ 7.9%, Լիբիա՝ 5.3%, Ինդոնեզիա՝ 5.1%, Ալժիր՝ 3.1%, Իրաք՝ 3%, Կատար՝ 2.5%<sup>3</sup>: Հասկանալի է, որ այս

<sup>1</sup> BP Statistical Review of World Energy June 2016, <https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2016/bp-statistical-review-of-world-energy-2016-full-report.pdf>

<sup>2</sup> World Oil Outlook, [http://www.opec.org/opec\\_web/en/publications/340.htm](http://www.opec.org/opec_web/en/publications/340.htm)

<sup>3</sup> *Ольга Вяземская*, Россия и ОПЕК: нам по пути?, Электронный журнал энергосервисной компании «Экологические системы», N 1, январь 2007, [http://journal.esco.co.ua/2007\\_1/art123.htm](http://journal.esco.co.ua/2007_1/art123.htm)

քվոտաները փոփոխվում են՝ կախված նաև անդամ այս կամ այն պետության դեմ միջազգային պատժամիջոցների քաղաքականության փոփոխությունից:

Նման քվոտավորման նպատակն է վերահսկել նավթի առաջարկը համաշխարհային շուկայում և թույլ չտալ նավթի գների կտրուկ անկումն ու ընդհանրապես ազդել նավթի գնագոյացման վրա: Սակայն 2014թ. հետո նավթի գների կտրուկ անկումը համաշխարհային շուկայում մեկ անգամ ևս ապացուցեց, որ ՕՊԵԿ-ը կորցրել է նավթի գնագոյացման վրա ազդելու նախկին ռեսուրսը և կրկնել 1973թ. էմբարգոն նրան չի հաջողվի:

Այստեղ կարևոր է մեկ անգամ ևս հիշեցնել, որ նավթի շուկայում արդյունահանման հզորությանն ՕՊԵԿ-ը հասավ անցած դարի 70-ական թթ., երբ աշխարհում սպառվող նավթի 50%-ը պատկանում էր Նավթ արտահանող պետությունների կազմակերպությանը, և հենց այդ ընթացքում էր, որ վերջինս որոշեց այն օգտագործել որպես զենք Արևմուտքին իր քաղաքական կամքը թելադրելու համար: 1973թ. հունվարին սաուդյան նավթի մեկ բարելի գինը \$2.59 էր, սակայն արդեն նույն թվականի հուլիսին այն հասավ \$2.95-ի: 1973թ. սեպտեմբերին ՕՊԵԿ-ը հերթական հավաքն անցկացրեց Վիեննայում, և անդամ վեց պետություններ՝ Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Կատարը, Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն՝ այսպես կոչված Պարսից ծոցի վեցնյակը, որոշում ընդունեցին բանակցություններ վարել նավթային ընկերությունների հետ նավթի գների բարձրացման շուրջ<sup>1</sup>: Այսինքն՝ կարելի է ասել, որ նավթի գների կտրուկ բարձրացման քաղաքականությանը ՕՊԵԿ անդամ պետությունները ձեռնամուխ էին եղել մինչև արաբա-խարայելական հերթական պատերազմը, որը սկիզբ առավ 1973թ. հոկտեմբերին:

1973թ. հոկտեմբերի 6-ին հրեական Յամ Քիպուր տոնակատարության ժամանակ եգիպտական և սիրիական օդուժը հարձակում գործեց Իսրայելի վրա՝ նպատակ ունենալով դուրս մղել այդ պետությանը եգիպտական Սինա թերակղզուց և սիրիական Գոլանի բարձունքներից: Սակայն Իսրայելին հաջողվեց մեկ օրվա ընթացքում մոբիլիզացնել իր ուժերը՝ կասեցնել և ապա անցնել հակահարձակման՝ ռազմական գործողությունները տեղափոխելով հակառակորդի տարածք: Պատերազմի ընթացքում Եգիպտոսի նախագահ Անվար Սադատը, որը փոխարինել էր Նասերին, դիմեց Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալին՝ խնդրելով օգտագործել նավթային «զենքն» ընդդեմ այն պետությունների, որոնք սատարում են Իսրայելին: Ի դեպ, հենց այդ շրջանում Իսրայելի հիմնական դաշնակից ԱՄՆ-ը նավթի արդյունահանման հարցում լուրջ խնդիրների էր բախվել և նավթի սպառման աճի ֆոնին ստիպված էր սկսել նավթի ներմուծումն

<sup>1</sup> Rasoul Sorkabi, The first oil shock, vol. 12, No 3, 2015, <http://www.geoexpro.com/articles/2015/06/the-first-oil-shock>

արաբական երկրներից ու այս առումով դարձել էր բավական խոցելի: Էմբարգո հայտարարելու համար ֆորմալ առիթ հանդիսացավ 1973թ. հոկտեմբերի 14-ին ԱՄՆ-ի կողմից Իսրայելին զենքի մատակարարումը, որը կատարվում էր ինքնաթիռներով՝ ի պատասխան Խորհրդային Միության կողմից Եգիպտոսին և Սիրիային զենքի մատակարարման: Սակայն ռազմամթերքի այս մատակարարումները վերջնականապես բորբոքեցին հակաարևմտյան կրքերն արաբական երկրներում, ինչը, նախ, Վաշինգտոնի ջանքերով ընթացող զինադադարի գործընթացի տապալման և ապա՝ Պարսից ծոցի վեցնյակի կողմից նավթի գների բարձրացման (\$3.01-ից մինչև \$5.12) պատճառ հանդիսացավ (1973թ. հոկտեմբերի 16, այսինքն՝ մոտ 70%-ով երկու օրվա ընթացքում<sup>1</sup>):

Հաջորդ օրն արաբական պետությունների նավթի նախարարները որոշում ընդունեցին դադարեցնել նավթի մատակարարումն այն պետություններին, որոնք սատարում են Իսրայելին: Նավթի արտահանումը դադարեցրին առաջին հերթին դեպի ԱՄՆ, հետո Նիդերլանդներ, Պորտուգալիա, Ռոդեզիա և Հարավային Աֆրիկա: 1973թ. հոկտեմբերին նավթի արդյունահանումը սեպտեմբերի համեմատ կրճատվեց 5%-ով, որոշում ընդունվեց նաև այն շարունակ կրճատել ամսական 5%-ով՝ մինչև արաբական երկրների պահանջների կատարումը: Հոկտեմբերի 19-ին ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը հայտարարեց Իսրայելին մինչև \$2.2 մլրդ ֆինանսական և ռազմական օգնություն տրամադրելու մտադրության մասին: Դրանից անմիջապես հետո արաբական պետությունների մեծ մասը վերջնականապես ընդհատեց նավթի մատակարարումը ԱՄՆ-ին: Էմբարգոյին պաշտոնապես չմիացան միայն Իրանը և Իրաքը:

Հոկտեմբերի 22-ին ՄԱԿ միջնորդությամբ կնքվեց զինադադարի պայմանագիր, որը սկսեց գործել հոկտեմբերի 25-ից, բայց, չնայած դրան, նավթի գները համաշխարհային շուկայում շարունակում էին աճել, և 1973թ. դեկտեմբերի 2-ին Թեհրանում հրավիրված ՕՊԵԿ հերթական հավաքի օրերին նավթի գինը հասավ \$11.6-ի մեկ բարելի դիմաց: 1974թ. մարտին արաբական պետությունների նավթի նախարարները որոշում ընդունեցին դադարեցնել նավթի էմբարգոն ընդդեմ ԱՄՆ-ի, իսկ հուլիսին այն վերջնականապես դադարեցվեց նաև մյուս պետությունների հանդեպ, սակայն, չնայած դրան, նավթի գները հետագայում ևս շարունակեցին աճել, ինչն աննախադեպ եկամուտներ ապահովեց նավթային պետություններին: Եթե 1970թ. ՕՊԵԿ անդամ պետությունների եկամուտները կազմում էին ընդամենը \$7.7 մլրդ նավթի արտահանումից, ապա 1974թ. դրանք հասան \$88.8 միլիարդի<sup>2</sup>:


<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Rasoul Sorkabi, The first oil shock, vol. 12, No 3, 2015, <http://www.geoexpro.com/articles/2015/06/the-first-oil-shock>

1970-ական թթ. նավթի գները շարունակեցին աճել, սա իր հերթին ազդեց նաև այլ հումքի, մասնավորապես՝ գունավոր մետաղների գների աճի վրա, և ընդհանրապես, սպառողական բոլոր ապրանքների գները բարձրացան: ՕՊԵԿ անդամ պետությունների եկամուտներն իրենց հերթին աննախադեպ աճ արձանագրեցին 1973-78թթ., մասնավորապես Սաուդյան Արաբիայի տարեկան եկամուտներն աճեցին \$4.35 մլրդ-ից մինչև \$36 մլրդ-ի: Քուվեյթինը, օրինակ, \$1.7 միլիարդից հասավ \$9.2 մլրդ-ի, Իրաքի եկամուտներն աճեցին \$1.8-ից \$23.6 մլրդ-ի և այսպես շարունակ (մանրամասն տես *Նկար 3*)<sup>1</sup>.

Նկար 3

ՕՊԵԿ անդամ պետությունների ընդհանուր եկամուտները տարբեր տարիներին<sup>2</sup>



Նավթի գները որոշ չափով նվազեցին միայն 1970-ական թթ. վերջին, նավթի սպառման ծավալների նվազման հետ միասին, սակայն դա երկար չտևեց: 1978-79թթ. Իրանի իսլամական հեղափոխությունը նորից խթանեց նավթի գների աճը, և 1981թ. նավթի գինը կազմեց \$40 մեկ բարելի դիմաց: 80-ական թթ. երկրորդ կեսից նավթի գները նորից սկսեցին նավազել և արդեն 1986թ. հասան \$13-ի մեկ բարելի դիմաց: Այս գները նաև ԽՍՀՄ տնտեսական թուլացման պատճառով

<sup>1</sup> *Ольга Вяземская*, Россия и ОПЕК: нам по пути?, Электронный журнал энергосервисной компании «Экологические системы», N 1, январь 2007, [http://journal.esco.co.ua/2007\\_1/art123.htm](http://journal.esco.co.ua/2007_1/art123.htm)

<sup>2</sup> OPEC Net Oil Export Revenue in 2015 Drops to Lowest Level Since 2004 <http://www.fuelsnews.com/opec-net-oil-export-revenue-2015-drops-lowest-level-since-2004/>

հանդիսացան: Սակայն նույնիսկ ԽՍՀՄ փլուզումից հետո էլ նավթի գները բավական ցածր էին՝ տատանվելով \$15-18-ի սահմաններում՝ այսպիսով հերքելով նաև տարածված այն առասպելը, թե սատուներն են նավթի գինը նվազեցրել ԱՄՆ խնդրանքով՝ ԽՍՀՄ տնտեսությանը վնասելու համար<sup>1</sup>: Սաուդյան Արաբիայի և ՕՊԵԿ անդամ բոլոր պետությունների ջանքերը և բազմաթիվ գազաթափոդներն այդպես էլ չնպաստեցին նավթի գնի բարձրացմանը:

Նավթի գնի նոր և կտրուկ բարձրացումն սկսվեց միայն 2000 թվականից՝ պայմանավորված Չինաստանի տնտեսական աճով: 1999թ. այդ պետությունը դադարեց նավթի արտահանումը, քանի որ այն այլևս չէր բավարարում սեփական կարիքների համար, իսկ 2000թ. սկսեց նավթ ներմուծել Պարսից ծոցից և Ռուսաստանից: Չինաստանի տնտեսական աճը խթանեց նավթի գնի աննախադեպ բարձրացում, և 2011, 2012, 2013թթ. տարեկան միջին կտրվածքով նավթի գինը տատանվում էր \$110-115 չափով մեկ բարելի դիմաց: Նավթի գնի անկումը սկսվեց 2014թ. երկրորդ կեսից և շարունակվեց 2015-ից մինչև օրս՝ տարեկան միջին կտրվածքով կազմելով մոտ \$48: Նավթի գնի անկումը պայմանավորված է չորս հիմնական գործընթացով՝ Չինաստանի տնտեսական աճի դանդաղում, նավթի սպառման ծավալների նվազում և այլընտրանքային էներգիայի հզորությունների գործարկում, ինչպես նաև ԱՄՆ-ում թերթաքարային նավթի աննախադեպ շահագործում, ինչի արդյունքում վերջինս նույնիսկ հանեց հույս նավթի արտահանման արգելքը:

Այսպիսով, ՕՊԵԿ-ը, շարունակելով մնալ նավթի արդյունահանման խոշոր կազմակերպություններից մեկը, այնուամենայնիվ, կորցրել է նախկին ազդեցությունը նավթի համաշխարհային շուկայում, որն ուներ անցած դարի 70-ականներին: Պատճառներից մեկը, ինչպես նշեցինք, այն է, որ.

- ՕՊԵԿ անդամ չհանդիսացող նավթ արտահանող պետությունները, չունենալով այդ կազմակերպության անդամների նավթային ռեսուրսները, այնուամենայնիվ, արդյունահանման ծավալներով ավելի մեծ տեղ են զբաղեցնում նավթի համաշխարհային շուկայում:
- Հաջորդ պատճառը նավթի ընդհանուր դերի նվազումն է էներգետիկ համաշխարհային շուկայում՝ տեղը զիջելով գազին, որն ավելի էժան է և մատչելի:
- Էներգախնայողությունը և այլընտրանքային էներգիան հանգեցրել են նավթ սպառող հիմնական տարածքներում՝ Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում, նավթի սպառման ծավալների նվազման:

<sup>1</sup> BP Statistical Review of World Energy June 2016, <https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2016/bp-statistical-review-of-world-energy-2016-full-report.pdf>

- Նավթ սպառող նոր կենտրոններում՝ Չինաստանում և Հնդկաստանում, տնտեսական աճի էական դանդաղումը նույնպես նպաստել է այդ գործընթացին:
- ՕՊԵԿ անդամ հիմնական երկու պետությունների՝ Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև տնտեսական և քաղաքական հակասությունները շարունակում են խորանալ:
- Կազմակերպության սահմանած արդյունահանման քվոտաները շարունակ խախտվում են անդամ պետությունների կողմից:

*Մեպտեմբեր, 2016թ.*

**ՕՊԵԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ  
ՆԱՎԹԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ  
(պատմաքաղաքական վերլուծություն)**

*Արմեն Մանվելյան*

Ամփոփագիր

Նավթի արդյունահանումը և մատակարարումը, տնտեսական գործոն լինելուց բացի, միշտ էլ ընդգծված քաղաքական բաղադրիչ են եղել՝ պայմանավորված այդ ռեսուրսի նկատմամբ պահանջարկի անընդհատ աճով և, որպես հետևանք՝ նավթով հարուստ տարածաշրջանները վերահսկելու մեծ տերությունների ցանկությամբ: Հոդվածն անդրադառնում է նավթի համաշխարհային շուկայում ՕՊԵԿ ազդեցության դինամիկային: Նշվում է, որ ՕՊԵԿ-ը, շարունակելով մնալ նավթի արդյունահանման խոշոր կազմակերպություններից մեկը, այնուամենայնիվ, կորցրել է նախկին ազդեցությունը նավթի համաշխարհային շուկայում:

**ПРОБЛЕМЫ ОПЕК И ДИНАМИКА ЕЕ ВОЗДЕЙСТВИЯ  
НА МИРОВОМ РЫНКЕ НЕФТИ  
(историко-политический анализ)**

*Армен Манвелян*

Резюме

Добыча и поставка нефти всегда являлась не только экономическим фактором, но и выражено политической составляющей, в связи с возрастающим спросом на этот ресурс. Как следствие, крупные державы стремились контролировать регионы, богатые

нефтью. Статья исследует динамику влияния ОПЕК на мировой рынок нефти. Отмечается, что ОПЕК, оставаясь одной из крупнейших компаний по добыче нефти, тем не менее потеряла прежнее влияние на мировой рынок нефти.

**PROBLEMS OF OPEC AND ITS IMPACT DYNAMIC  
IN THE GLOBAL OIL MARKET  
(a Historical and Political Analysis)**

*Armen Manvelyan*

Resume

Oil extraction and supply has always been a political factor in addition to an economic one, because of the continuous increase of the demand for this resource, and hence, the desire of superpowers to control oil-rich regions. The article reviews the OPEC impact dynamic in the global oil market. OPEC still remains one of the largest oil producers, but has lost its past clout in the global oil market.



## ԳԻՏԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

### *Արեստակես Միմավորյան\**

*Բանալի բառեր*<sup>1</sup> գիտական սփյուռք, գիտություն, փոխգործակցություն, միջազգային փորձ, պետական քաղաքականություն, սփյուռքյան գիտական ցանցեր:

Ներկայում, առավել քան երբևէ, սփյուռք ունեցող երկրներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում արտերկրում բնակվող իրենց հայրենակիցների խնդիրներին՝ պետություն-սփյուռք հարաբերությունների ձևավորմանը, հայրենիքում ֆինանսական ներդրումների հնարավորություններին, կազմակերպչական հարցերին և այլն: Բացի վերը թվարկված ուղղություններից, արդիական է նաև գիտական սփյուռքի հետ փոխգործակցության հարցը: Ինչպես իրավացիորեն նկատում են խնդրով զբաղվող մասնագետները, «*պարտադիր չէ, որ ուժեղ սփյուռքը բազմաքանակ լինի: Ուժեղ է այն սփյուռքը, որտեղ ավելի շատ են հաջողության հասած մասնագետները, որոնք կարող են օգուտ բերել հայրենիքին: Որքան «հին» է սփյուռքը, այնքան ավելի արդյունավետ կարող է լինել համագործակցությունը: Մակայն համագործակցության արդյունավետությունն ավելի շուտ կախված է հայրենիքի գործընկերներից, քան սփյուռքի ներկայացուցիչներից*»<sup>1</sup>: Ուստի գիտական սփյուռքի հետ կայուն և արդյունավետ փոխգործակցության կամուրջներ հիմնելը սփյուռք ունեցող մի շարք պետությունների համար դարձել է հրամայական:

Հայրենական գիտակրթական համակարգի բարեփոխման, բարձր տեխնոլոգիաների և այլ ոլորտներում նրանց մասնագիտական կարողությունների ներդրման ու համագործակցության խթանման նպատակով մշակված տեսլականներն ամրագրված են պետական ռազմավարական փաստաթղթերում: Ստեղծվել են սփյուռքում բնակվող գիտնականների վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ, գնահատվել է նրանց ներուժը: Հաշվի առնելով այս հարցի հետ կապված սփյուռքի տեսակետներն ու մտահոգությունները՝ ուսումնասիրվել են գիտական սփյուռք-պետություն համագործակցության հնարավոր եղանակներն ու մեխանիզմները, այդ հարաբերությունների ստեղծման ճանապարհին ի հայտ

\* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

<sup>1</sup> *Дежина И.*, Русскоязычная научная диаспора: опыт, мотивация и перспективы сотрудничества с Россией, [http://iep.ru/files/persona/dezhina/rusdiaspora\\_Kugel2015.pdf](http://iep.ru/files/persona/dezhina/rusdiaspora_Kugel2015.pdf).

եկող խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ռազմավարական քայլերի ողջ համալիրը, փոխադարձ ակնկալիքները, միջազգային փորձը, հայրենադարձության և այլ հարցեր [1, p. 8; 2, pp. 1-16; 3, pp. 157-173; 4, c. 1-215]: Ըստ էության, այսպիսի քաղաքականության շնորհիվ դրվում են սփյուռքի հետ կապերի և համագործակցության նոր ձևաչափի հիմքերը, որի պահպանման համար անհրաժեշտ է երկկողմանի ջանքերի գործադրում:

### **Գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության գլխավոր դերակատարները**

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության ոլորտում առկա է սփյուռքի ինտելեկտուալ ներուժի ինտեգրման երկու միջոց. 1) գիտնականների և բարձր որակավորում ունեցող մասնագետների հայրենադարձման նախագծերի ռեալիզացում, 2) գիտական սփյուռքի հեռավար համախմբում տեղեկատվական ցանցերի միջոցով և գիտական համագործակցության այլ ձևերով [5, c. 364]: Վերոնշյալ ձևերի և միջոցների կիրառումը կախված է մի քանի դերակատարներից, որոնք էլ ձևավորում են համագործակցության քաղաքականությունը:

Առաջին դեպքում կարևոր դերակատարում ունեն սփյուռքի գիտական ներուժի համախմբման, գիտահետազոտական աշխատանքների համակարգման, ֆինանսական աջակցության նպատակով ստեղծված սփյուռքյան գիտական կառույցները (*Scientific Diaspora Organizations*): Դրանք հասարակական հիմունքներով ստեղծված նեղ մասնագիտական և տարբեր գիտաճյուղերի ներկայացուցիչներին մեկ հարկի տակ համախմբող միություններ ու ցանցային կառույցներ են, որոնք գործում են երկու մակարդակում՝ տեղական (օրինակ՝ ԱՄՆ-ում բնակվողների համար) և գլոբալ՝ անկախ բնակության վայրից ընդգրկում են ողջ սփյուռքի գիտական ռեսուրսները: Չնայած մասնագիտական տարբեր կազմերի և միմյանցից տարբերվող ռազմավարական նպատակների առկայությանը՝ կարելի է մասնանշել այն հիմնական ուղղությունները, որոնց շուրջ կառուցվում է սփյուռքյան գիտական ցանցերի քաղաքականությունը.

- սփյուռքյան մտավոր ռեսուրսների համախմբում և ներգրավում ցանցային (*network*) աշխատանքներում,
- գիտական սփյուռքի վերաբերյալ տեղեկատվական բազաների ստեղծում,
- գիտական միջոցառումների խթանում տարածաշրջանային մակարդակով,
- դրամաշնորհների որոնում և դրամահավաքային միջոցառումների անցկացում,
- նմանատիպ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ համագործակցություն,

- հայրենիքի գործընկերների հետ կապերի վերականգնում և ընդլայնում,
- մասնագիտական կարողությունների ներդրում հայրենական գիտակրթական և այլ ոլորտների զարգացման գործում,
- ֆինանսական և այլ կարգի աջակցություն արտերկրում կրթություն ստացող հայրենակիցներին:

Այսպիսի կառույցների գործունեության առաջին փուլի նպատակն է եղել համախմբել գիտական համայնքի ներկայացուցիչներին մի կառույցում, որը հնարավորություն կընձեռեր ծանոթանալ տարբեր պատճառներով հայրենիքից դուրս գտնվող, գիտությամբ զբաղվող հայրենակիցների խնդիրներին և գիտական ձեռքբերումներին: Ժամանակի ընթացքում զարգանալով և ձևավորվելով որպես ինստիտուցիոնալ կառույցներ՝ դրանք ընդլայնեցին իրենց գործունեության դաշտը: Հիշատակման արժանի են այն կառույցները, որոնք իրականացրել են համապետական նշանակության նախագծեր, օրինակ՝ *Brain Gain Network*-ի թիրախային խմբերը նախագծում են ինտեգրալ սխեմաներ, ֆիլիպինյան պետական քաղաքականության շրջանակներում սեփական գիտելիքներով և փորձով մասնակցում են հայրենի երկրի տեխնոլոգիաների և այլընտրանքային էներգետիկայի ոլորտների կայացմանը: Կամ «Գլոբալ կորեական ցանցը» (*Global Korean Network*), որն իրականացնում է ցանցի անդամների հետաքրքրությունների տիրույթում գտնվող նեղ մասնագիտական հիմնախնդիրներին նվիրված համաժողովներ և այլն:

Թեև նման կառույցների առկայությամբ պայմանավորված՝ ավելի դյուրին էր դառնում գիտական սփյուռք-պետություն փոխգործակցությունը, բայց և այնպես, ի հայտ էին գալիս համագործակցությանը խոչընդոտող ներքին և արտաքին պատճառներ, երբ բացակայում էին սփյուռքի գիտնականների մասնակցությամբ ռազմավարական նշանակության ոլորտների զարգացմանն ուղղված նախագծերը, պետական մակարդակով անտեսվում էր կամ, առնվազն, մեծ նշանակություն չէր տրվում գիտական սփյուռքի ներուժի օգտագործմանը, կամ գիտական սփյուռքն աչքի չէր ընկնում մոբիլությամբ, առաջին և երկրորդ հանդիպումներից հետո կորչում էր հետագա համագործակցության նկատմամբ հետաքրքրությունը և այլն:

Օրինակ, այնպիսի տրանսնացիոնալ սփյուռքյան գիտական ցանցեր, ինչպիսին էին *South African Network of Skills Abroad*-ը (*SANSA*) և *Colombian Researchers Abroad*-ը (*Red Caldas*), որոնք մի քանի ուղղություններով արդյունավետ համագործակցություն էին իրականացնում, ֆինանսական և այլ կարգի խնդիրների պատճառով անգործության մատնվեցին և փակվեցին [6, pp. 187-198]: Ըստ էության, նման միտումները բացահայտեցին սփյուռքյան գիտական ցանցերի փխրունությունը:

Երկրորդ դեպքում որպես դերակատարներ հանդես են գալիս պետական հաստատությունները՝ սփյուռքի գործերով նախարարություններն ու գործակալությունները, կրթության, գիտության, տնտեսության ոլորտների զարգացման գործի պատասխանատու մարմինները: Որպես համագործակցության խթանման, հարաբերությունների զարգացման և խորացման մեկնակետ՝ գիտական սփյուռքի հետ տարվելիք աշխատանքները կանոնակարգելու նպատակով տարբեր երկրներում ընդունվել են պետական որոշումներ և հայեցակարգեր: Անկախ նրանից, թե որոշումներում ամրագրված գաղափարներն ինչ մեխանիզմներով են կյանքի կոչվում, ինչ խոչընդոտների են բախվում, ինչ արդյունքներ են արձանագրվում, իսկ դրանք տարբեր երկրների սփյուռքյան առանձնահատկություններով պայմանավորված՝ նույնը չեն, ակնհայտ է, որ գիտական սփյուռքի հետ փոխգործակցությունը տարբեր երկրներում բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի:

Դրա մասին է վկայում և օրինակելի նախաձեռնությունն է Արգենտինայի նախկին նախագահ Նեստոր Կիշնեթի հովանավորությամբ Գիտության, տեխնոլոգիայի և արտադրական նորարարությունների նախարարության կողմից 2003թ. ստեղծված և սփյուռքի գիտական կադրերի համար նախատեսված *RAICES* («Արմատ») ծրագիրը, որի շրջանակներում 2016թ. հուլիսի 20-ի դրությամբ այդ երկիր է հայրենադարձվել սոցիալական գիտությունների, կենսաբանության, տեխնոլոգիաների և առողջապահության ոլորտներում աշխատող շուրջ 1295 գիտնական<sup>1</sup>:

Այս տեսանկյունից բացառություն չէ նաև Թուրքիան, որը վերջին տասնամյակում դեմքով շրջվել է դեպի սփյուռքը և արտաքին քաղաքականության ռազմավարության համաձայն՝ իրականացնում է գիտական սփյուռքին համախմբելու տարատեսակ միջոցառումներ: Թուրքիայում տարեցտարի ավելանում են գիտնականների թիվը և ներդրումները գիտության մեջ: Միայն 2007-2010թթ. ԵՄ յոթերորդ շրջանակային ծրագրով Թուրքիան գիտության զարգացման, տեխնոլոգիաների և ինովացիոն գործունեությունը խթանելու նպատակով ստացել է 1,5 մլրդ եվրո: Մարի Կյուրիի հետազոտական գրանտային ծրագրից օգտվող երկրների շարքում, որն աջակցում է «ուղեղների հետադարձ հոսքին», Թուրքիան հայտնվել է երկրորդ տեղում: Դեռևս 2007-2009թթ. այն գտնվում էր 5-րդ տեղում: Նույն ծրագրերի շրջանակներում գիտության թեկնածուի կոչման արժանանալուց հետո Թուրքիա է վերադարձել համակարգչային ինժեներիայի, աերոնավտիկայի, էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, քիմիայի և կենսաբանության ոլորտների 120 մասնագետ ԱՄՆ-ից, Կանադայից, Ճապոնիայից: Բացի այդ, 50 թուրք հետազոտող հնարավորություն է ստացել աշխատելու Եվրոպական միացյալ հետազոտական

<sup>1</sup> <http://www.raices.mincyt.gov.ar/>

կենտրոնում: ԵՄ յոթերորդ շրջանակային ծրագիրը մեկնարկել է 2007թ. և գործել մինչև 2013թ., բյուջեն 50 մլրդ եվրո էր: Այս ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում էր գիտական հետազոտություններ և տեխնոլոգիական մշակումներ կատարելու համար<sup>1</sup>: Չնայած նման զարգացումներին, համաձայն Թուրքիայի Գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի նախկին նախագահ Յուջել Ալթունբաշաքի, «Թուրքիայի նման երկիրը տարբեր ոլորտների համար ունի 250-300 հազար հետազոտողի պահանջարկ» [7, s. 52]:

Պահանջարկը մասամբ լրացնելու նպատակով վերջին հինգ տարիներին Թուրքիայի Հանրապետության Գիտության, արդյունաբերության և տեխնոլոգիայի նախարարության և Գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի (*TÜBİTAK*) կողմից կազմակերպվել է «Արտասահմանում բնակվող թուրք գիտնականները» խորագրով երեք համաժողով, որտեղ գնահատվել են սփյուռքի գիտական հանրույթի հետ համագործակցության, ներուժի և հայրենադարձման հնարավորությունները: Այս համաժողովներին մասնակցել է հումանիտար և բնական գիտությունները ներկայացնող 46 երկրների 1300 թուրք գիտնական: Միաժամանակ, թուրք հետազոտողներին հետ վերադարձնելու նպատակով ռազմարդյունաբերության, ավտոմոբիլաշինության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում գործունեություն ծավալող թուրքական հաստատությունների ներկայացուցիչները վերջին տարիներին հանդիպումներ են ունեցել ԱՄՆ-ում ապրող թուրք գիտնականների հետ: Աշխատանքների արդյունքում Գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի միջազգային կապերի վարչության աջակցությամբ 2013թ. դրությամբ Թուրքիա է վերադարձել 250 մասնագետ, որոնք աշխատանքի են տեղավորվել գիտատեխնիկական և արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում<sup>2</sup>:

Բավական ուշագրավ նախաձեռնությամբ են հանդես եկել չինացիները՝ իրականացնելով գիտական սփյուռքի նկատմամբ ստեղծագործական քաղաքականություն: Երկրի զարգացման գործում սփյուռքի ինտելեկտուալ ներուժի օգտագործման, հնարավորությունների հայեցակարգային հիմքերը դրվել են Դեն Սյաոպինի կողմից 1992թ. [8, c. 20]:

Արտերկրում կրթություն ստացած կամ երկար ժամանակ արտասահմանում աշխատող բարձրորակ գիտական կադրերին Չինաստան հայրենադարձելու նպատակով ՉԺՀ-ում գործի են դրվել մեծածավալ պետական ծրագրեր: «Վերադարձե՛ք և ծառայե՛ք հայրենիքին» կարգախոսից կառավարությունն անցում

<sup>1</sup> Türkiye, Avrupa projelerinde fark attı, <http://www.dunyabulteni.net/haberler/159725/turkiye-avrupa-projelerinde-fark-atti>

<sup>2</sup> 248 bilim adamı Türkiye'ye geri döndü, <http://www.dunyabulteni.net/haberler/258692/248-bilim-adami-turkiyeye-geri-dondu>.

կատարեց նոր կարգախոսի՝ «Ծառայե՛ք հայրենիքին»: Հայրենադարձմանն ուղղված նախաձեռնությունները հաջորդում են մեկը մյուսին՝ «100 տաղանդ», «1000 տաղանդ», «Անդրծովյան տաղանդները հայրենիքի ծառայության մեջ» և այլն [9, c. 144]: «100 տաղանդ» պետական ծրագիրն, օրինակ, ոչ միայն ապահովում է գիտնականներին բնակարանով, աշխատանքով և բարձր աշխատավարձով (3 տարվա համար ստանում են շուրջ 250.000 եվրո գումար), այլև մասամբ ֆինանսավորում է արտասահմանում կրթություն ստացած հայրենադարձված գիտնականների երեխաներին: Արդյունքում՝ այսօր ՉԺՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամների ուղիղ կեսը և առաջատար ինստիտուտների ղեկավարների մեկ երրորդը կազմում են հայրենադարձվածները [5, c. 365]: Իսկ ահա գիտատեխնիկական ոլորտի սփյուռքյան առաջատար մասնագետները Պեկինի քաղաքային վարչության հիմնադրած ուսանողական վենչուրային պարկերում հնարավորություն են ստանում ստեղծելու գիտատար սթարթափեր [10, c. 26]: Ֆինանսավորման խնդիրը լուծելու նպատակով 2004թ. ստեղծվեց «Բնական գիտությունների ազգային ֆոնդ» կազմակերպությունը, որի ֆինանսական կարողությունները հասնում էին \$451 մլն-ի (2004թ.): Կազմակերպությունն աջակցեց չինական ծագում ունեցող ամերիկաբնակ գիտնականներին՝ ներգրավվելու երկրի հետազոտական ծրագրերում: Հատկանշական է, որ ՉԺՀ-ն չսահմանափակվեց միայն մասնագետների հայրենադարձման պետական ծրագրերով, այլև խրախուսեց համագործակցության տարբեր եղանակների կիրառումը:

Կարելի է նշել նաև չիլիական օրինակը, երբ սփյուռքի գիտական ներուժն օգտագործվեց ավտորիտար պետությունում՝ Պինոչետի իշխանության տարիներին: Չիլիի տնտեսական զարգացման գործում նա ընտրեց կոշտ և ծայրահեղ մեթոդներ: Նա հրավիրեց և իր շուրջը համախմբեց չիլիացի այն երիտասարդներին (պատմության մեջ նրանք հայտնի են «Չիկագոյի տղաներ» անվամբ), որոնք տնտեսագիտություն ուսումնասիրելու էին մեկնել ԱՄՆ՝ Չիկագոյի համալսարան և չէին վերադարձել հայրենիք: 1974թ. սկսած՝ պինոչետյան ռեժիմում նրանք հասան ղեկավար դիրքերի՝ գլխավորելով տնտեսական պլանավորման բաժանմունքների մեծ մասը<sup>1</sup>: Եվ իզուր չէ, որ չիլիական տնտեսական հրաշքը կապվում է «Չիկագոյի տղաների» հետ:

Վերջին տարիներին գիտական սփյուռքի հետ կապված խնդիրները հայտնվել են նաև հետխորհրդային մի շարք երկրների (ՌԴ, Բելառուս, Մոլդովա, Ղազախստան) պետական կառույցների և գիտական շրջանակների ուշադրության կիզակետում: Սակայն, հաշվի առնելով հոդվածի ծավալների սահմանափակությունը, եզրափակվենք միայն վերը բերված օրինակներով:

<sup>1</sup> Кангас С., Чикагские мальчики и чилийское экономическое чудо, [http://scepis.net/library/id\\_557.html](http://scepis.net/library/id_557.html).

### **Հայաստանյան և սփյուռքյան իրողություններ. որոշ դիտարկումներ**

Ինչպես սփյուռք ունեցող այլ պետությունների պարագայում, մեզ մոտ ևս ՀՀ պետական կառավարման մարմիններն այս ուղղությամբ գործադրել են համապատասխան ջանքեր, որոնցից արժե հիշատակել 2009թ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը», որի իրականացման մեջ ներգրավված են ինչպես ՀՀ կառավարական գերատեսչությունները (Մփյուռքի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, ԿԳՆ ԳՊԿ), այնպես էլ Գիտությունների ազգային ակադեմիան: Ծրագիրը նախատեսում էր իրականացնել մի շարք միջոցառումներ.

- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների գիտական գործունեության մասին էլեկտրոնային տեղեկատվական բազայի տվյալների տրամադրում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին ու գիտական կազմակերպություններին,
- հայ գիտնականների համագործակցության միջավայրի ձևավորում՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում իրականացվող միջազգային ծրագրերին մասնակցության հնարավորությունների առավելագույն օգտագործմամբ,
- Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հայագիտական հետազոտական աշխատանքներում օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների ներգրավում, համատեղ հետազոտությունների իրականացում,
- Հայաստանի Հանրապետությունում գիտական ծրագրերի անկախ փորձագիտական համակարգում, միջազգային գիտակրթական ծրագրերում, գիտական գործունեության արդյունքների առևտրայնացման, գիտության ոլորտի մենեջերների պատրաստման ու գիտական կազմակերպություններում ժամանակակից մենեջմենթի ներդրման գործում օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներգրավում<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ այսպիսի նախագծերի իրականացման համար չափազանց մեծ կարևորություն է տրվում նեղ թեմատիկ գիտաժողովների անցկացմանը: Մասնավորապես, 2010թ. տարբեր երկրներից հրավիրված ռուսական ծագում ունեցող գիտնականների և ռազմավարական հետազոտություններ իրականացնող ինստիտուտների վերլուծաբանների անմիջական մասնակցությամբ Մանկտ

<sup>1</sup> [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2009/04/09\\_0459.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2009/04/09_0459.pdf).

Պետերբուրգում տեղի ուեցավ «Գիտական սփյուռքը և Ռուսաստանի գիտության ապագան» խորագրով գիտագործնական կոնֆերանս<sup>1</sup>: Կարծում ենք, այս կարգի գիտաժողովներ անցկացնելը Հայաստանում շատ նպատակահարմար է, քանի որ, որքան էլ փորձենք սփյուռքն ինտեգրել տարբեր ոլորտներին, անհրաժեշտ է նախապես պատրաստ լինել լսելու այդ հանրության կարծիքներն ու տեսակետներն այս հարցի վերաբերյալ: Մոլդովան, Ռուսաստանը, Բելառուսը և մի քանի այլ երկրներ հենց այս տրամաբանությամբ են շարժվում, քանի որ հետխորհրդային երկրներում պետական մակարդակով գիտական սփյուռքի վերաբերյալ ընդունված որոշումներում ամրագրված գաղափարները գործնական հարթության մեջ չեն դրվել՝ մի կողմից հաշվի չառնելով սփյուռքի կարծիքները, մյուս կողմից՝ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտական համակարգում առկա հիմնախնդիրները:

Ինչևէ, այս պահի դրությամբ կարող ենք արձանագրել, որ գիտական սփյուռք-պետություն համագործակցության շրջանակներում տարբեր մասնագիտությունների գծով (բժիշկներ, ճարտարապետներ, իրավաբաններ, քաղաքագետներ, հայագետներ և այլն) կազմակերպվել են մի քանի համահայկական համաժողովներ, որոնք գլխավորապես իրականացվել են ՀՀ Սփյուռքի նախարարության ջանքերով՝ այլ կառույցների հետ համատեղ: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ տարբեր ծրագրերի և միջոցառումների շրջանակներում համագործակցում են նաև ՀՀ ԿԳՆ-ն, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, Էկոնոմիկայի և առողջապահության նախարարությունները, ակադեմիական-բուհական հաստատությունները: ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով նաև իրականացվել են աշխատանքներ սփյուռքի գիտական ներուժի (անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում) գնահատման, համագործակցության հնարավորությունների և եղանակների վերլուծության ուղղությամբ [11, 12]:


Սփյուռքի գիտական հանրության համախմբման, համագործակցության մեխանիզմների մշակման և լուծումներ փնտրելու համար կարևոր է դիտարկել նաև սփյուռքյան իրողությունները: Ժամանակակից հայկական գիտական սփյուռքին (ասպիրանտներ, գիտության թեկնածուներ, դոկտորներ, ուսանողներ և այլն) դժվար է քանակական հստակ գնահատականներ տալ, քանի որ այն անընդհատ փոփոխության է ենթարկվում թե՛ որակապես, թե՛ մասշտաբներով, հետևաբար պետք է իրականացնել մշտադիտարկում: 2013թ. դրությամբ, օրինակ, մեր հավաքած տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ աշխարհի բազմաթիվ երկրներում գիտավերլուծական աշխատանքով զբաղվում է ավելի քան 500 հայ

<sup>1</sup> Գիտաժողովի զեկույցները տե՛ս Научная диаспора и будущее российской науки (конференция 2010), <http://www.lektorium.tv/course/?id=22763>.



մասնագետ, որոնք ներկայացնում են հումանիտար ոլորտի գրեթե բոլոր ճյուղերը: Ըստ էության, այս թիվը չի հավակնում ամբողջական լինել: Նրանց մեծ մասը գործում է երկու առանցքային երկրում՝ Ռուսաստանում և ԱՄՆ-ում, մնացածը՝ այլ երկրներում: Ինչ վերաբերում է մասնագիտություններին, ապա գիտավերլուծական աշխատանքով զբաղվող սփյուռքահայերի ամենամեծ խումբը կազմում են պատմաբանները, որոնց մեծ մասն ակադեմիական համակարգում գործող հայագիտական կենտրոնների աշխատակիցներ են (տե՛ս *Գրաֆիկ 1*): Գերակշիռ մեծամասնությունը գիտության դոկտորներ են, թեկնածուներ, ասպիրանտներ: Կան գիտական հաստատությունների, կառույցների վարչական և այլ օղակների ղեկավարներ:

*Գրաֆիկ 1*



Բնագիտության ոլորտում Սփյուռքի գիտական հանրույթը ներկայացված է տարբեր մասնագիտություններով՝ ֆիզմաթ գիտություններ, քիմիա, ճարտարագիտություն, երկրաբանություն, բժշկություն և այլն: Մույն ոլորտի ներկայացուցիչներն իրականացնում են և՛ տեսական, և՛ գործնական գործունեություն: Կան մասնագետներ, որոնք աշխատում են գիտատեխնիկական լաբորատորիաներում և գիտահետազոտական ինստիտուտներում (ռոբոտաշինություն, քիմիական և բժշկական տեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ, էլեկտրատեխնիկայի, ռազմարդյունաբերության և այլ ոլորտներ):

Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ մակարդակին՝ արտերկրում գործում են հումանիտար, գիտատեխնիկական ոլորտում աշխատող հայկական գիտական հանրույթները համախմբող, գիտահետազոտական գործունեություն իրակա-

նացնող, հայաստանյան գիտական կազմակերպություններին և անհատ գիտնականներին աջակցող կազմակերպություններ: Որպես հայկական սփյուռքի գիտական ցանցային կառույց աչքի է ընկնում Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը (*Armenian Engineers and Scientists of America-AESA*), որը հիմնադրվել է 1983թ. Գլենդելում (Կալիֆոռնիա): Հիմնականում կենտրոնացած է աշխարհասփյուռ հայ ճարտարագետների, գիտնականների, ձեռնարկատերերի և ճարտարապետների մասնագիտական, տեխնիկական և գիտական խնդիրների վրա: *AESA*-ն ԱՄՆ-ում ունի մի քանի մասնաճյուղեր Նյու Յորքում, Նյու Ջերսիում և Միչիգանում: *AESA*-ն կազմակերպել է Համաշխարհային հայկական գիտական երկու կոնգրես: Առաջին համաշխարհային կոնգրեսը կազմակերպվել էր Ֆրանսիայի «Արարատ» գիտությունների ակադեմիայի հետ, որը տեղի է ունեցել 1993թ., ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր վարչությունում՝ Փարիզում: *AESA*-ն կազմակերպել է նաև մի քանի սիմպոզիումներ, որոնց թվում՝ «Հայաստանի տնտեսական ռեսուրսիկուրիզացիան» (1991թ., Լոս Անջելես): Այն ներգրավել էր ավելի քան 200 մասնագետի ԱՄՆ-ից, Հայաստանից, Կանադայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և Ավստրալիայից: Նրանց թվում էր 16 հոգանոց պատվիրակությունը Հայաստանից, որի կազմում էին ակադեմիայի անդամներ և Հայաստանի նորաստեղծ կառավարության պաշտոնյաներ: Բացի այդ, կազմակերպությունը հովանավորել է տեխնիկական նախագծեր Հայաստանում և հայկական համայնքներում, կազմակերպել բազմաթիվ սեմինարներ և դասախոսություններ Հայաստանի էներգիայի, էկոլոգիայի, տրանսպորտի, տեղեկատվության մշակման խնդիրների վերաբերյալ<sup>1</sup>, Հայաստանի հետ համատեղ իրականացրել է *CRD (Cosmic Ray Division)* և *Care for Sevan* ծրագրերը [13, էջ 28]:

ԱՄՆ-ում գործող կառույցներից կարելի է հիշատակել «Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամը» և «Հայաստանի համար վերլուծությունների և պլանավորման *ARPA* ինստիտուտը»: *ARPA*-ն ԱՄՆ-ում բնակվող հայազգի ճանաչված գիտնականներով համալրված եզակի կառույցներից է, որը Հայաստանի անկախության առաջին տարիներից ի վեր համագործակցել է ՀՀ տարբեր նախարարությունների հետ, կատարել վերլուծություններ, հետազոտություններ, տրամադրել խորհրդատվություններ բազմաթիվ ոլորտների համար, ինչն այսօր էլ շարունակվում է<sup>2</sup>: Իսկ ահա Հայ օգնության հիմնադրամի (ՀՕՖ) շրջանակնե-

<sup>1</sup> Armenian Engineers and Scientists of America 32nd Anniversary Celebration, <http://asbarez.com/140454/armenian-engineers-and-scientists-of-america-32nd-anniversary-celebration/>

<sup>2</sup> 1992թ. ի վեր կառույցը կրթական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային համակարգերին, արտաքին քաղաքականությանը, Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, առևտրի և արդյունաբերության ոլորտներին առնչվող հետազոտություններ և առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը, <http://www.arpainstitute.org/About.html>:

րում 2000թ. ստեղծված Հայկական ազգային գիտակրթական հիմնադրամը (ՀԱԳԳՀ, *Armenian National Science and Education Fund-ANSEF*)՝ սկսած 2001թ., տարեկան շուրջ 25-ական դրամաշնորհ է տրամադրել Հայաստանում աշխատող գիտական խմբերին (2014-ին՝ 31, 2015-ին՝ 30, 2016-ին՝ 32): Մինչ օրս ՀԱԳԳՀ-ն տրամադրել է 419 դրամաշնորհ, որոնցից օգտվել է շուրջ 700 հայ գիտնական, այդ թվում՝ բազմաթիվ երիտասարդ գիտաշխատողներ: Դրամաշնորհներն օգտագործվում են աշխատավարձերի, սարքավորումների ձեռքբերման, գործուղումների և գիտական գործունեությունն ապահովող այլ ծախսերի համար<sup>1</sup>:

Եվրոպայում հայկական գիտական հանրույթները համախմբող կառույցներից աչքի է ընկնում Փարիզում 1986թ. հիմնադրված «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիան, որը համախմբում է հայ գիտնականների Հայաստանից, Եվրոպայից, Միջին Արևելքից, Ամերիկայից: Ակադեմիայի նպատակն է Հայրենիք-Սփյուռք կապերի սերտացումը, Հայաստանի գիտական և մշակութային հաստատություններին օժանդակելը<sup>2</sup>: Մեկ այլ կառույց՝ Բոխումում 2001թ. հիմնադրված Հայ ակադեմիականների միություն-1860-ը, ձգտում է միավորել գաղութահայ կյանքից կտրված նախկին հայաստանաբնակներին, նպաստել Գերմանիայի և Հայաստանի գիտակրթական հաստատությունների միջև համագործակցության զարգացմանը [14, էջ 37]:

Ինչպես տեսնում ենք, ինքնակազմակերպման առումով ԱՄՆ-ի և ԵՄ երկրների հայկական գիտական հանրույթները բավական ջանքեր են գործադրել ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման ուղղությամբ, ինչը չենք կարող ասել ՌԴ պարագայում:

Ինչպես՝ կարող է գիտական սփյուռքն օգտակար լինել Հայաստանին, և ի՞նչ են մտածում այս ուղղությամբ մեր հայրենակիցները: Ամերիկաբնակ հայ գիտնականների կարծիքով, «Հայաստանը պետք է զարկ տա ինտերնետի միջոցով կարգի ներգրավման ջանքերին, քանի որ սփյուռքի ամենալուսավոր ուղեղներից ոմանք գուցե հարմար չգտնեն Հայաստան տեղափոխվել, սակայն ուրախ կլինեն իրենց լուրման ներդրել հայրենիքի զարգացման մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, օրինակ՝ առցանց դասընթացներ վարելով կամ հետազոտական աշխատանքներին մասնակցելով ու խորհրդատվություն տրամադրելով» [15, էջ 183]: ԱՄՆ առողջապահության ազգային ինստիտուտի ազգային գրադարանի ենթակառույցում որպես կենսաինֆորմատիկայի գծով դրամաշնորհ տրամադրող գլխավոր գիտաշխատող Արթուր Պետրոսյանը նշում է. «Հայաստա-

<sup>1</sup> 5000-ական դոլար տրվեց Հայաստանում աշխատող 32 գիտական խմբերին, «168 ժամ», 27.01.2016, <http://168.am/2016/01/27/587677.html>

<sup>2</sup> <http://www.ararat-academy.org/association.html>.

նում ավանդական հզոր գիտահետազոտական համայնքի աջակցության հարցում Սփյուռքի ու նրա կենսական կապերի կարևորությունը հնարավոր չէ գերազնահատել: Այդքանով հանդերձ, հայ գիտնականների և հետազոտողների համար առայսօր գոյություն չունի որևէ կենտրոնացված շտեմարան գիտական հրատարակումների և փորձագիտական տվյալների բազայի համար»: Նա առաջ է քաշել Գիտության հայկական պորտալի գաղափարը և կատարել նախագծի իրականացմանն ուղղված աշխատանքներ: Նպատակն է, որ աշխարհի հայ գիտնականների համար ձևավորվի առանձին կայք, որտեղ գրանցվելով՝ հայագրի գիտնականները կարողանան ներկայացնել իրենց գիտական կարողությունները, հրապարակել գիտական հոդվածներ և այլն: 2007թ. հաջողվեց ձևավորել *Armenian Science Portal* կայքը, որը գործել է միայն երկու շաբաթ և փակվել է տեխնիկական պատճառներով [13, էջ 12-15]:

Ինչպես տեսնում ենք, անհատական և ինստիտուցիոնալ մակարդակով առկա են Հայաստանի հետ համագործակցության առանձին դեպքեր և ինքնակազմակերպման փորձեր, սակայն գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության դաշտում գոյություն ունեն հիմնախնդիրներ, որոնք մասամբ բնորոշ են այլ սփյուռքերին ևս: Քանի որ «ուղեղների հետադարձ հոսքը» կամ զանգվածային հայրենադարձությունը կարող է աշխատել միայն այն ժամանակ, երբ երկիրը, տնտեսապես զարգանալով, ֆինանսական ներդրումներ է կատարում գիտության և տեխնոլոգիաների ոլորտում<sup>1</sup>, ապա այս պահի դրությամբ հայկական սփյուռքի ինտելեկտուալ ներուժի ինտեգրման միջոցներից կարող են աշխատել հեռավար համախմբումն ու գիտական համագործակցության այլ ձևերը: Հաշվի առնելով մեր իրողությունները, նաև միջազգային փորձը՝ մասնակիորեն կարելի է խմբավորել համագործակցության հնարավոր ձևերը և դրանց խանգարող կամ խոչընդոտող հիմնական հանգամանքները:

### ***Համագործակցության ձևերը***

- անհատական հետազոտությունների պատվիրում (ՀՀ-ում, արտերկրում),
- կոլեկտիվ հետազոտությունների պատվիրում, որում ընդգրկված կլինեն Սփյուռքի մեկից ավելի գիտնականներ,
- տարբեր ձևաչափերով հանդիպում-քննարկումների կազմակերպում ընդհանուր և կոնկրետ խնդիրների շուրջ (ՀՀ-ում, արտերկրում),

<sup>1</sup> Այդպիսին էր Թայվանը 1990-ականների սկզբին, երբ երկրի զարգացմանը զուգահեռ, հազարավոր մասնագետներ, հետ վերադառնալով, աշխատանքի տեղավորվեցին համակարգչային տեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում, մասնակցեցին բնագիտությանն առնչվող հետազոտական նախագծերում: Նույն էր Հարավային Կորեայի, Հոնկոնգի, Սինգապուրի պարագաներում: Մանրամասն տե՛ս [16, c. 273-285]:

- առցանց դասախոսությունների, գիտաժողովների կազմակերպում ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ,
- հետազոտական նախագծերի կատարում (այդ թվում՝ միջազգային) Սփյուռքի և Հայաստանի գիտնականների ներգրավմամբ,
- համատեղ գիտական լաբորատորիաների/կենտրոնների հիմնում,
- հողվածների, դասագրքերի և գիտական հետազոտությունների գրախոսում,
- ասպիրանտների պատրաստում,
- ներգրավում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների կազմում (մեխանիզմների հստակեցման դեպքում),
- գիտահետազոտական նախագծերի փորձագիտական գնահատում,
- սփյուռքի գիտնականների կողմից ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունների գնահատում Հայաստանում, տվյալ տեխնոլոգիաների ոլորտներում մասնագետների վերապատրաստում,
- կրթական ծրագրերով (կարճաժամկետ/երկարաժամկետ) դասավանդում:

*Համագործակցության խթանման նպատակով արժե իրականացնել հետևյալ քայլերը.*

- ստեղծել սփյուռքի և հայաստանյան գիտնականներին միավորող համացանցային ռեսուրս՝ «Աշխարհի հայ գիտնականներ» կայքը, որի «Ով ով է» բաժնում կարտացոլվեն հայ գիտնականների/մասնագետների տվյալները, գիտական հետաքրքրությունների ոլորտները, գիտության ոլորտում ունեցած ձեռքբերումները և այլն: Կայքը կարող է ունենալ լայն ձևաչափով քննարկումների դաշտ,
- ընդլայնել սփյուռքում գործող հայ գիտնականներին միավորող գիտական ցանցերի աշխարհագրական ծիրը: Այդ դերում կարող են հանդես գալ Ամերիկահայ Ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը կամ «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիան՝ բացելով մասնաճյուղեր այլ երկրներում: Այս կառույցներում գիտնականներից և մասնագիտական տարբեր խմբերի ներգրավումից բացի՝ նախընտրելի է, որ ներկայացված լինեն տվյալ երկրներում բնակվող հայ գործարարները: Սփյուռքահայ ինտելեկտուալներին և գործարարներին միավորող այս կառույցներն էապես կարող են մեծացնել իրենց դերակատարումը՝ վերածվելով յուրօրինակ հենակետերի գիտական սփյուռք-պետություն հարաբերություններում,
- թեև ՀՀ սոցիալ-տնտեսական պայմանները բավարար չեն հայրենադարձման լայնածավալ ծրագրերի իրականացման համար, բայց կարելի է մշակել փոքր ծավալների հայրենադարձման ծրագրեր՝ ոլորտների հստակեցումից հետո, որտեղ կան կադրային խնդիրներ: Բնական է, որ պետք է հաշվի առնվեն

կազմակերպչական և իրավական մի շարք հարցեր (վարձատրման, բնակարանով ապահովման, ենթակառուցվածքների բավարար վիճակի, ժամանակակից սարքավորումների առկայության և այլ պայմաններ),

- քանակական և որակական ցուցանիշների վերհանման, համագործակցության հնարավորությունների և խոչընդոտների գնահատման ուղղությամբ իրականացնել միջոցառումներ և բնույթի հետազոտություններ,
- կազմակերպել հայկական գիտական սփյուռքի խնդիրներին նվիրված գիտաժողովներ:

Մինչդեռ այլ սփյուռքերի փորձն ուսումնասիրելով հանգում ենք այն եզրակացությանը, որ պետություն-գիտական սփյուռք համագործակցությանը խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնք մասամբ բնորոշ են մեր իրողություններին: Դրանք են.

- ֆինանսական միջոցների անբավարարությունը, ցածր վարձատրությունը,
- ենթակառուցվածքների անբավարարությունը, ժամանակակից սարքավորումների բացակայությունը,
- սփյուռքի գիտնականների մասնակցությամբ հետազոտական երկարաժամկետ նախագծերի բացակայությունը,
- գիտական արդյունքների չպահանջարկվածությունն արդյունաբերության մեջ,
- արդյունաբերության թույլ զարգացածությունը,
- գիտություն/արտադրություն/բիզնես հարաբերությունների ցածր մակարդակը,
- պետական հարկային քաղաքականությունը,
- կոռուպցիան և այլն:

Այսպիսով, կարող ենք նշել, որ գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության որոշ դեպքերում առկա են ամուր և կայուն հարաբերություններ, այլ դեպքերում գործադրվում են ջանքեր զարգացման և ամրապնդման ուղղությամբ, իսկ որոշ երկրներ հարաբերությունների ձևավորման ճանապարհին են: Սակայն, այս ամենով հանդերձ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ եթե չկան կայուն ֆինանսավորմամբ երկարաժամկետ աշխատանքային/հետազոտական նախագծեր, սփյուռքի գիտական հանրային հետ երկխոսությանը և համագործակցությանը միտված կենտրոնացված կառույցներ, տեխնոպարկեր կամ, առնվազն, դեկլարատիվ բնույթ չկրող, համախմբման և հայրենադարձման նպատակով ստեղծված առանցքային ծրագրեր, ապա գործընթացի հաջողության հնարավորությունները նվազագույն են:

*Հուլիս, 2016թ.*

## Աղբյուրներ և գրականություն

1. *Simavorian A.*, La diáspora, como potencial para el país: la experiencia internacional, «Sardarabad», Miércoles 12 de marzo de 2014.
2. *Marmolejo-Leyva R., Perez-Angon M. A., Russell J. M.*, Mobility and International Collaboration: Case of the Mexican Scientific Diaspora, Academic Editor: Vincent Larivière, Université de Montréal, Canada, PLOS ONE | DOI:10.1371/journal, June 5, 2015.
3. *Tejada, G., Varzari, V., Porcescu, S.*, Scientific diasporas, transnationalism and home-country development: Evidence from a study of skilled Moldovans abroad. *Journal of South East European and Black Sea Studies* 13 (2), 2013.
4. *Имамутдинов И.Н., Костина Г.Б., Медовников Д.С., Механик А.Г., Оганесян Т.К., Розмирович С.Д., Рубан О.Л., Савеленок Е.А., Точенов А.С.*, Исследование российской научно-технологической диаспоры в развитых странах: условия и возможности возвращения научных кадров и использование потенциала, Москва, Инновационное бюро «Эксперт», 2009.
5. *Артюхин М.И., Мееровская О.А.*, Научная диаспора как ресурс развития белорусской науки, Социологический альманах, Выпуск № 3, 2012.
6. *Chaparro F., Jaramillo H., Quintero V.*, Promise and Frustration of Diaspora Networks: Lessons from the Network of Colombian Researchers Abroad», *Diaspora Networks and the International Migration of Skills: How Countries Can Draw on Their Talent Abroad*, World Bank Institute Development Studies, 2006.
7. *Uygun A.*, ‘Yurt Dışındaki Türk Bilim İnsanları Kurultayı’ ilk kez İstanbul’da yapıldı, «Telepati», E-dergisi, Ağustos, sayı 203, 2012.
8. *Ларин А.Г.*, Китай и зарубежные китайцы, Москва, 2008.
9. *Душина С.А., Ащеулова Н.А., Ломовицкая В.М.*, Модели взаимодействия стран-доноров с научной диаспорой: от возвращения к сотрудничеству, *Наука та наукознавство*, № 3, 2012.
10. Дежина И., Развитие сотрудничества с русскоязычной научной диаспорой: опыт, проблемы, перспективы, доклад, № 23, Москва, 2015.
11. *Հարությունյան Գ., Միմալորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը, կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:
12. *Միմալորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, 2014:
13. *Նահապետյան Հ., Վերանյան Կ., Միմալորյան Ա., Ղանալանյան Տ.*, Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010:
14. *Ղանալանյան Տ.*, Հումանիտար ոլորտի գիտավերլուծական հանրությունը սփյուռքահայ համայնքներում. պատկերի ուրվագիծ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11, 2013:
15. *Մարաջյան Ա., Հարությունյան Ա.*, Լի Քվան Յուի դասերը Հայաստանի համար, «21-րդ դար», թիվ 4 (50), 2013:
16. *Егоров С.*, Диалоги с диаспорой, Отечественные записки, N 7(8), 2002.

**ԳԻՏԱԿԱՆ ՍՓՅՈՒՈՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՍՏԱԳՈՐԾՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

*Արեստակես Միմավորյան*

Ամփոփագիր

Սփյուռք ունեցող երկրները ներկայում ավելի մեծ ուշադրություն են դարձնում արտերկրում բնակվող իրենց հայրենակիցների խնդիրներին՝ պետություն-սփյուռք հարաբերությունների ձևավորմանը, հայրենիքում ֆինանսական ներդրումների հնարավորություններին, կազմակերպչական հարցերին և այլն: Մեր օրերում արդիական է նաև գիտական սփյուռքի հետ պետության փոխգործակցության հարցը, որի ուսումնասիրությանն էլ նվիրված է հոդվածը:

**О ВОПРОСАХ НАУЧНОГО СОТРУДНИЧЕСТВА  
ДИАСПОРА-ГОСУДАРСТВО**

*Арестакес Симаворян*

Резюме

Обладающие диаспорой страны сейчас обращают больше внимания на проблемы своих соотечественников, проживающих за рубежом: формирование отношений государство – диаспора, возможность финансовых инвестиций на родине, организационные вопросы и др. Сегодня также актуален вопрос научного взаимодействия диаспоры и государства, изучению которого посвящена статья.

**ON ISSUES OF COLLABORATION BETWEEN  
DIASPORA SCIENTIFIC COMMUNITY AND THE STATE**

*Arestakes Simavoryan*

Resume

Nations that have diasporas increasingly pay attention to the problems of their fellow countrymen living in foreign countries, including the forming of diaspora-state relations, opportunities for investments in the homeland, organizational issues, etc. Currently the problem of collaboration between diaspora scientific community and the state is also topical, and the article addresses it.



## ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂԲԵՋԱՆԻ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ 1920-1933ԹԹ.

### *Գարիկ սարկավազ Ասրյան՝*

*Բանալի բառեր՝* եկեղեցի, խորհրդային շրջան, բռնաճնշումներ, Արցախի թեմ, Ադրբեջան, այլատյացություն, կրոնական խտրականություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԽՍՀՄ:

1920թ. մայիսի 26-ին Արցախը հայտարարվեց խորհրդային, իսկ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ բռնակցվեց Ադրբեջանին: Այդպիսով խորհրդային Ադրբեջանի իշխանության տակ հայտնվեց նաև Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը: Թեմի անցած ճանապարհը հարուստ էր ամեն տեսակի, այդ թվում նաև ողբերգական իրադարձություններով, սակայն պատմական այս նոր փուլը, թերևս, ամենաողբերգական հանգրվանը դարձավ նրա համար: Արցախը բռնակցելուց հետո Ադրբեջանի համար պակաս կարևոր չէին նաև իր զավթողական ծրագրերի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող անձանց ու հաստատությունների չեզոքացումն ու ոչնչացումը: Եվ բնական է, որ սանձազերծված բռնությունների կիզակետում պիտի հայտնվեր Հայ Առաքելական եկեղեցին, որի բացառիկ դերն ու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում մանրամասն ներկայացման կարիք առանձնապես չէին զգում: Այդ համատեքստում ադրբեջանական իշխանությունների համար իրենց ազդեցության ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարվող և ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ ավանդույթներ ունեցող Արցախի թեմը, թերևս, վառողի տակառի հետ էր նույնականացվում: Իսկ այն փաստը, որ ողջ խորհրդային Միության տարածքում բառացիորեն պատերազմ էր հայտարարված կրոնի ու եկեղեցու դեմ [1, էջ 3-123], պարզապես անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականության համար: Ի հետևանս դրա՝ թեմի վիճակը կրկնակի էր վատթարանում, քանզի եթե «խորհրդային Հայաստանում եկեղեցին դիտվում էր որպես նոր կարգերին ընդդիմադիր ուժ, ապա Ղարաբաղում այն համարվում էր նաև հակաադրբեջանական շարժումը ոգեշնչող ու կազմակերպող գործոն: Ուստի և

*՝ ՀԱՆ Արցախի թեմի տեղեկատվական համակարգի տնօրեն:*

պատահական չէր, որ 1920թ. ամռանը ձերբակալված մի խումբ հայրենասերների շարքում եղան նաև հոգևորականներ» [2, էջ 230-231]:

Արցախի թեմի ծայրահեղ անմխիթար վիճակն առավել ծանրացնում էր նաև այն փաստը, որ այն Խորհրդային Ադրբեջանի իշխանության տակ էր անցել փաստացիորեն գլխատված վիճակում. թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը և թեմական վարչության անդամների մեծ մասը դաժանաբար սպանվել էին Շուշիի՝ 1920թ. մարտյան սոսկալի եղեռնագործության ժամանակ [3, էջ 747]: Երկու տարի շարունակ թեմը գրկված էր առաջնորդից և ղեկավարվում էր առաջնորդական փոխանորդների՝ Բյուզանդ ծայրագույն վարդապետի, այնուհետև Սուրեն արեղայի կողմից, և այդ ընթացքում հասել էր քայքայման եզրին [4, էջ 200]: Մայր Աթոռը Վահան սրբազանի սպանությունից միայն երկու տարի անց կարողացավ առաջնորդ նշանակել. 1922թ. մարտի 27-ին Գևորգ Ե-ի հայրապետական տնօրինությամբ Անանիա արքեպիսկոպոս Համագասայանը կարգվեց Արցախի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Վարանդայի Ավետարանոց գյուղ) [5, էջ 399]: Պատկերը, որին ակննատես է լինում նորանշանակ առաջնորդը, խիստ հեռու էր մխիթարական լինելուց. «պաշտոնավարության հենց սկզբից թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի՝ Էջմիածին ուղարկած զեկուցագրերից և նամակներից պարզվում է, որ Արցախի թեմը լրիվ կազմալուծվել էր խորհրդային իշխանության կողմից: Ըստ նրա հաղորդումների՝ 1922 թվականին թեմի մեջ մտնող 159 բնակավայրերից 27-ը չունեին եկեղեցի, քահանաներ ունեին միայն 39-ը» [4, էջ 200]: Չնայած խորհրդային իշխանությունների կողմից տարվող համատարած հակակրոնական պայքարին և եկեղեցականների ու հավատացյալների նկատմամբ ահաբեկչական քաղաքականությանը՝ Արցախի բազմաթիվ բնակավայրերից պարբերաբար համախոսական վճիռներ ու նամակ-խնդրագրեր էին ուղղվել Մայր Աթոռին ու թեմական իշխանությանը՝ իրենց համար հոգևոր հովիվներ ձեռնադրելու և նշանակելու [3, էջ 742-744, 751-758, 767-771], սակայն դրանք «խորհրդային իշխանութիւնների ջանքերով մնում էին անպատասխան, կամ հակառակ արդիւնքն էին ունենում» [5, էջ 399]:

Դրան զուգահեռ՝ հետևողականորեն շարունակվում էին թեմի քայքայմանն ուղղված քայլերը: Արցախի թեմի հոգևոր խորհրդի անդամ, Վարարակն ավանի նախկին հոգևոր հովիվ Զավեն քահանա Ադամյանը Անանիա արքեպիսկոպոս Համագասայանին 1923թ. օգոստոսի 19-ին գրած զեկուցագրով հայտնում է, որ Վարանդայի Ա գործակալության գյուղերի ժողովուրդը բարեպաշտությունից հիասթափված է, քահանաները գտնվում են տնտեսական սուղ պայմաններում և առանց բացառության բոլորն էլ պատրաստ են հրաժարվել իրենց հոգևոր կարգից և այլ գործով զբաղվել՝ մի կերպ գոյություն քարշ տալու համար, իսկ որոշ գյուղերի

քահանաներ արդեն իսկ կարգաթող էին եղել [3, էջ 827]: Նույն Չավեն քահանան օգոստոսի 30-ին մեկ այլ զեկուցագրով հայտնում է, որ Ստեփանակերտը Ղարաբաղի կենտրոն հայտարարելուց հետո իր նախկին ծխականներից օգոստոսի 13-ին հրավեր էր ստացել Աստվածածնի Վերափոխման տոնն իրենց մոտ նշելու: Հաջորդ օրը շտապում է Ստեփանակերտ և իր նախկին համայնքի հետ տեղի Ս.Գևորգ եկեղեցում հանդիսավորապես կատարում տոնական արարողությունները: Այնուհետև հայտարարում է, որ պատրաստվում է մի քանի օրից վերադառնալ իր նախկին ծուխը, իսկ դրանից հետո երևի Ղարաբաղի նոր կենտրոն կտեղափոխվեն նաև թեմի առաջնորդարանն ու թեմական խորհուրդը: Սակայն Ստեփանակերտից հեռանալուց մի քանի օր անց կրկին գրություն է ստանում իր ծխականներից, որոնք հայտնում են, որ կառավարությունը գրավել է եկեղեցին ու եկեղեցապատկան սենյակները. «Այնուհետև ես գնում եմ ստուգելու եւ գտնում եմ իմ սենյակները դարձրած արհեստանոց, իսկ եկեղեցին էլ պահեստատեղի, բայց վերջերս լսելով եկեղեցին ուզում են վերածել ժողովարանի: Ուստի այս առթիվ հայտնում եմ Ձերդ Սրբազնութեան ի գիտություն եւ խնդրում եմ բողոքել ուր հարկաւոր է»<sup>1</sup>: Երևի միամտություն կլինի տեղի ունեցածը պատահականություն համարելը: ԼՂԲՄ կազմավորելով՝ Ադրբեջանի իշխանությունները մարզկենտրոն հայտարարեցին ոչ թե Արցախի պատմական կենտրոն Շուշին, այլ այն ժամանակ դեռ անշուք Վարարակն ավանը: Բնականաբար, նման քայլի դրդապատճառը ճաշակի թելադրանքը չէր. «Ադրբեջանցի ազգայնամուլները համոզված էին, որ եթե Շուշին դառնար մարզի կենտրոն, ապա երկրամասի հայ բնակչությունը, մանավանդ նախկին շուշեցիները, կսկսեին վերադառնալ այնտեղ և կրկին կդառնար Արցախ աշխարհի տնտեսության, հոգևոր և վարչական կենտրոնը» [6, էջ 273]: Եվ ահա հանկարծ հոգևոր նոր կենտրոն դառնալու հայտ կարող էր ներկայացնել Ստեփանակերտը, ինչը բացարձակապես չէր բխում Ադրբեջանի հեռահար նպատակներից: Ուստի միանգամայն հասկանալի է կառավարության կողմից նման կայծակնային արագությամբ տրված արձագանքի նպատակը:

Թեմից ստացվող տազնապալի լուրերը խոր վրդովմունք են պատճառում Անանիա սրբազանին, և նա 1924թ. մարտի 12-ին նամակ է ուղարկում ԼՂԲՄ գործկոմի նախագահին՝ իր բողոքը հայտնելով եկեղեցու համար գանձվող նվիրատվություններն արգելելու, եկեղեցիների ունեցվածքը հափշտակելու, եկեղեցիները ժողովատեղիների կամ թատերական բեմերի վերածելու, քահանաների վրա դրված ծանր տուրքերի, եկեղեցին ծաղրուծանակի ենթարկելու դեպքերի և այլնի վերաբերյալ<sup>2</sup>: Սակայն թեմակալ առաջնորդի նամակին անգամ պատասխան չի տրվում:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 2:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 3-4:

1924թ. մայիսի 1-ին Գերագույն հոգևոր խորհրդին ուղարկված գրությամբ Անանիա սրբազանը ներկայացնում է այն ապօրինությունները, որոնց ենթարկվում է թեմը. Ստեփանակերտի եկեղեցուց ու քահանայի սենյակներից բացի բռնագրավվել էր նաև մի շարք եկեղեցիների վերանորոգման համար նախատեսված շինանյութը: Հաղորդում արգելվել էր թեմի համար կամավոր նվիրատվությունների հավաքումը: Կոմունիստներն իրենց հակաքրիստոնեական ելույթներն արդեն կատարում էին եկեղեցու խորանից [3, էջ 828]:

Հայ եկեղեցու՝ Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնվող մյուս թեմերն էլ, մեղմ ասած, բարվոք պայմաններում չէին գտնվում: Սակայն այն փաստը, որ Արցախի թեմում առավել ծանր իրավիճակ էր տիրում, փաստվում է նաև Գանձակի հայոց հոգևոր առաջնորդ Լևոն եպիսկոպոսի՝ Գերագույն հոգևոր խորհրդին 1924թ. փետրվարի 7-ին գրված զեկուցագրից, որտեղ, ներկայացնելով ադրբեջանական իշխանությունների բռնաճնշումներն ու կամայականությունները թեմի ու անձամբ իր նկատմամբ, Լևոն սրբազանն ավելացնում է. «Այս դրությունը ավելի տզեղ պատկերով կա Ինքնավար Լեռնային Ղարաբաղում ևս... Ընդհանրապես, Ղարաբաղից եկողները անհավատալի գույներով նկարագրում են տեղի եկեղեցական-հոգևորական կյանքը, որի համեմատությամբ երջանկություն համարելով այստեղի պայմանները» [7, էջ 48]:

Ի վերջո, պատկառելի տարիքում գտնվող Անանիա արքեպիսկոպոս Համագասայանը, այլևս անկարող լինելով աշխատել ստեղծված անտանելի ծանր պայմաններում, 1924թ. մայիսի 27-ին հրաժարական է ներկայացնում Մայր Աթոռին [3, էջ 828-829]: Գևորգ Ե Հայրապետը հարգում է նրա խնդրանքը և 1924թ. հունիսի 3-ի գրությամբ ազատում առաջնորդական պարտականություններից [3, էջ 830]:

Արցախի թեմը դարձյալ տևական ժամանակ մնում է առանց առաջնորդի: Առիթից օգտվելով՝ տեղական իշխանություններն ավելի սանձարձակ են դառնում իրենց գործողություններում: 1924թ. նոյեմբերի 3-ին Բաքվի և Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթեոս սրբազանն Արցախում տիրող իրավիճակի մասին ահազանգում է Գերագույն հոգևոր խորհրդին՝ խնդրելով արագացնել թեմի նոր առաջնորդի նշանակումը [7, էջ 55-56]:

1925թ. Գևորգ Ե կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանես ծայրագույն վարդապետ Հակոբյանը նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ և Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր (նստավայրը՝ Գանձասար): Նշանակման վկայականը նրան տրվում է փետրվարի 26-ին, իսկ հայրապետական կոնդակը՝ մարտի 5-ին [3, էջ 831-834]: Նորանշանակ առաջնորդն Արցախ է հասնում ապրիլի 7-ին և գտնում թեմը սոսկալի վիճակում, որտեղ «ոչ միայն որեւէ հոգևոր ներկայացուցչություն գոյութիւն չունէր, այլև

ամբողջ շրջաններ, քահանայք եւ ժողովուրդ դադարել էին եկեղեցական ծես եւ արարողություն կատարելուց, նոյնիսկ հայի համար ամենանուիրական տօներին՝ Ծննդեան եւ Զատիկին» [3, էջ 841]: «Թեմումս կան 162 հայ գիւղեր իւր 136 եկեղեցիներով, վերջիններս քարաշէն վայելուչ են, բայց դռները բաց, անտեր», - օգոստոսի 13-ին Գևորգ Ե-ին գրում է Վրթանես ծայրագույն վարդապետը: Երկու տարի առաջ եղած 88 քահանայից հրապարակայնորեն կարգաթող էր եղել 32-ը, վախճանվել էր 4-ը, ծերության կամ կուրության պատճառով չէր քահանայագործում 16-ը, մամուլով չէին հայտարարել, բայց փաստացի չէր քահանայագործում 9 քահանա. «մնացած 28 քահանաները թեմի ընդարձակության համեմատ այնքան քիչ են, որ կարելի է ասել, որ Արցախի թեմն առանց քահանաների է»: Տեղական իշխանությունները բռնագրավել էին Ստեփանակերտի, Մուշկապատի, Սիստոբաշենի, Հաղորտիի, Ղուշիշենի, Խնուշինակի, Նինգիի, Կուսապատի և այլ բնակավայրերի եկեղեցիները, ինչպես նաև Ամարասի ու Երից Մանկանց վանքերի և Ավետարանոցի եկեղեցու սրբություններն ու հնությունները [3, էջ 843-844]:

Չվիհատվելով դառն իրականությունից՝ Վրթանես ծայրագույն վարդապետը եռանդուն գործունեություն է սկսում թեմը վերակենդանացնելու համար: Վերոնշյալ գեկուցագրից հայտնի է դառնում, որ նա չորս ամսվա ընթացքում տարբեր կերպերով իր շուրջն է համախմբել մի շարք քահանաների, փորձել է լոյս հարաբերություններ ձևավորել իշխանությունների հետ, ստեղծել էր թեմական հոգևոր աստյան, թեմական խորհուրդ և 13 գործակալություն, հաշվառել էր բոլոր վանքերի գույքը, վանահոր պաշտոնակատար էր նշանակել Ամարասի վանքում, շրջել էր Խաչենի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գյուղերը և քարոզել ու հոգևոր միջոցառումներ կազմակերպել: Նախատեսում էր նաև հրավիրել թեմական պատգամավորական ժողով: «Կարելի է ասել, որ ժողովուրդը ներկայում մասամբ կազմակերպւած է իւր եկեղեցու շուրջը» [3, էջ 844-845]:

Գերագույն հոգևոր խորհուրդը գոհունակությամբ է ընդունում Արցախի թեմի առաջնորդի գործունեությունը և հանձնարարում «աշխատել ամեն կերպ փակւած եկեղեցիները վերաբանալ եւ թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել եւ յորդորել հոգեշունչ քարոզներով ու կապել եկեղեցու եւ նրա անբաժան նախնաւանդ ծէսերի եւ սովորութիւնների հետ» [3, էջ 846]:

Վրթանես ծայրագույն վարդապետ Հակոբյանի նշանակումն Արցախի թեմի առաջնորդի պաշտոնում թեկուզ ժամանակավոր, այդուհանդերձ, փրկություն էր թեմի համար: Մեծ գնահատանքի ու դրվատանքի են արժանի նրա հերոսական, գերմարդկային ճիգերն ընդդեմ թեմը դեպի անդունդ գլորող խորհրդային մեքենայի, քանի որ նրա անձնագոհ գործունեության շնորհիվ Արցախի թեմի գոյությունը երկարեց ևս մի քանի տարի: 1928թ. մարտի 1-ին Գերագույն հոգևոր խորհրդի

անդամ Բագրատ արքեպիսկոպոս Վարդագարյանին գրած նամակում Արցախի թեմի առաջնորդն արձանագրում է այն փաստը, որ իր առաջնորդության շրջանում «շատ եկեղեցիներ վերաբացուեցին եւ ամէն անգամ թեմ շրջագայելիս, քարոզչութեան հետեւանքով, շատ քահանաներ մեզ մեղայականներ ներկայացրին»<sup>1</sup>: «Շնորհիւ իւր եկեղեցական, քարոզչական, վարչական ունակութեան եւ անդուլ աշխատանքի, թեմումս վերականգնուեց աստուածապաշտական կարգը, շրջելով եւ քարոզելով բոլոր գիւղերը նշանակեց թեմական խորհուրդ, գործակալներ, հոգաբարձուներ, որով թեմիս հոգեւոր գործերն սկսան իրենց բնականոն հունի մէջ մտնել» [3, էջ 841],- դեռևս 1925թ. հունիսի 16-ին Գևորգ Ե-ին գրում են Արցախի թեմական խորհրդի անդամները՝ խնդրելով Վրթանես ծայրագույն վարդապետ Հակոբյանին եպիսկոպոս ձեռնադրել: Կաթողիկոսը հարգում է այդ խնդրանքն ու Արցախի թեմի առաջնորդի կատարած աշխատանքը և 1928թ. նրան եպիսկոպոս ձեռնադրում: Եպիսկոպոսական աստիճանը թեմակալ առաջնորդին հնարավորություն է տալիս ավելացնել թեմի քահանաների թիվը ոչ միայն մեղայական ներկայացրած տասնյակ քահանաների կրկին հոգևոր ծառայության ընդունելով, այլ նաև անձամբ քահանաներ ձեռնադրելով<sup>2</sup>:

Մայր Աթոռ ուղարկված գրությունները վկայում են, որ իր պաշտոնավարման ողջ ընթացքում Արցախի թեմի առաջնորդը գտնվում էր նյութապես ծայրաստիճան ծանր կացության մեջ, հաճախ բառացիորեն սովի մատնված վիճակում՝ ստիպված լինելով անընդհատ օգնություն խնդրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպեսզի կարողանար պահպանել ինչպես իր, այնպես էլ թեմի գոյությունը:

Ահավոր էր նաև թեմի քահանաների վիճակը, որոնց տնտեսական սուղ պայմանների մասին Գերագույն հոգևոր խորհրդին պատկերացում տալու համար թեմակալ առաջնորդը երկու օրինակ է բերում. «Մոխրաթաղի ծխատեր տ. Պետրոս քահանան 7 ռ. 50 կ. քահանայական հարկը չկարողանալով վճարել, Ջրաբերդից ոտքով Բագու է գնում եւ մուրողութեամբ է այդ գումարը ձեռք բերում: Առաջաձորի ծխատեր տ. Հովհաննէսը ունեւոր թուրք գիւղերում մշակութեամբ է իւր սեւ հացը վաստակում» [3, էջ 854]: Ըստ արժանվույն պետք է գնահատել այն փաստը, որ Մայր Աթոռը, նույնպես գտնվելով նյութապես ոչ բարվոք վիճակում և գոյատևելով թեմերից ստացված նպաստներով [3, էջ 868], շարունակում էր իր խիստ սուղ միջոցներից օգնություն հատկացնել Արցախի թեմին, առանց ինչի թեմի գոյությունը գրեթե անհնարին կլիներ:

Սակայն Արցախի թեմի փակման հարցը Խորհրդային Ադրբեջանի համար շարունակում էր մնալ օրակարգային, որի ի կատար ածումն ընդամենը ժամա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 4:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 32:

նակի խնդիր էր: Արմենակ Ղարազյոզյանի գլխավորությամբ գործող տեղական իշխանությունների օգնությամբ նրանք քայլ առ քայլ առաջ էին տանում թեմը խեղդամահ անելու և իսպառ վերացնելու նախորդ տարիներին սկսած քաղաքականությունը: 1925թ. սեպտեմբերի 5-ին Արցախի թեմի առաջնորդը հրավիրել էր թեմական պատգամավորական ընդհանուր ժողով՝ մասնակցությամբ 28 քահանայի ու 8-10 աշխարհականի: Պիտի կազմվեր թեմական բյուջե, մշակվեր եկամուտների գանձման ձև և հիմնվեր քահանայական ֆոնդ. «պալիտրֆիրոն ժողովականներին ցրեց, ասելով, թե՛ նախ մեզ պիտի յայտնեին այս ժողովի մասին եւ երկրորդ մեզնից ներկայացուցիչ պիտի լինի այդ ժողովում: Եկեղեցու ներքին կազմակերպչական գործերին միջամտելու, ինչպես եւ մեր հոգևորականներիս փոխարաբերութեանց մասին ազդեցութիւններ ցուցաբերելու առթիւ բողոքել եմ ժողկոմխորհին» [3, էջ 848],- կատարվածի մասին սեպտեմբերի 19-ին Գևորգ Ե-ին զեկուցում է Արցախի թեմի առաջնորդը: Նույնի մասին հոկտեմբերի 13-ին տեղեկացնում է նաև Գերագույն հոգևոր խորհրդին՝ ավելացնելով, որ իրեն անհայտ պատճառներով ժողովականներին մեկ առ մեկ հարցաքննության են ենթարկել, այնուհետև արձանագրում, որ տեղական իշխանությունների կատարածի հետևանքով թեմը զրկվեց եկամտի հնարավորությունից [3, էջ 850]:

Հետագա տարիներին էլ իշխանությունները շարունակում են իրենց եկեղեցահաված քաղաքականությունը, ի հետևանս որի շարունակվում են թեմից խլվել նորանոր եկեղեցիներ [3, էջ 869], և ստեղծված սարսափելի պայմաններում ավելանում է հարկադրաբար հրաժարական ներկայացրած քահանաների թիվը [3, էջ 861]: Ինքը՝ թեմակալ առաջնորդը, գտնվում էր իշխանությունների խիստ վերահսկողության տակ և պարտավոր էր իր բոլոր կատարածների և հետագա անելիքների մասին մանրամասն զեկուցել նրանց և ստանալ նրանց հավանությունը [3, էջ 866-867]: Ամեն ինչ արվում էր թեմի առաջնորդին զանազան խոչընդոտների առաջ կանգնեցնելու և նվաստացնելու համար. «Տեղական մարմինների՝ ինձ հասցրած (երբ թեմ եմ դուրս գալիս, կամ նորանից յետոյ) վիրաւորանքները եւ նեղութիւնները անասելի են» [3, էջ 869],- Գերագույն հոգևոր խորհրդին դառնացած հայտնում է նա իր գրություններից մեկում:

Կոմունիստների հակաեկեղեցական հերթական քայլերից է լինում այն, որ արգելում են եկեղեցական ծիսակատարությունները, հատկապես Մկրտությունը, հատուկ և հրապարակային ձևով կազմակերպում են «հասարակական կարմիր կնունք» [8, էջ 211]:

1929-1930թթ. ԽՍՀՄ-ով մեկ առավել լայն թափ ստացավ կոլեկտիվացման շարժումը, որը հարմար պատրվակ ծառայեց հոգևորականության նկատմամբ բացահայտ հալածանքներ սկսելու համար [9, էջ 7]: Համատարած բնույթ ստա-

ցան եկեղեցիների գրավումը և դրանք «կոլտնտեսությունների կարիքներին ծառայեցնելը, մանավանդ պահեստներ և շտեմարաններ դարձնելը» [4, էջ 213]: Եկեղեցին ոչնչացնելու համար քահանաների վրա հսկայական եկամտահարկեր դրվեցին՝ քաջ գիտակցելով, որ «ոչ մի քահանա չէր դիմանա հարկերին, որովհետև նրա ընտանիքը պարզապես կմնար առանց հացի» [1, էջ 71]: Ստալինյան բռնապետության մեքենան սկսեց նոր թափ հավաքել՝ դուռ բացելով 30-ականների սոսկալի մղձավանջին:

Խորհրդային իշխանությունների կողմից ինչպես Արցախում, այնպես էլ այլ թեմերում Հայ եկեղեցու փաստացի ոչնչացմանը միտված ապօրինությունների առավել զանգվածային բնույթ ստանալն ու գերակտիվացումն ավելի են խորացնում Գևորգ Ե կաթողիկոսի տազնապը, ով 1929թ. մարտի 4-ին մի ծավալուն բողոք-դիմում է հղում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս.Տեր-Գաբրիելյանին: Վեհափառն ամենայն մանրամասնությամբ ու փաստարկված ներկայացնում է հակաեկեղեցական բոլոր անօրինականությունները, որոնք «մեղանշում են պետական օրենքի հիմնական երեք սկզբունքների դեմ, այն է՝ խղճի ազատության, կրոնական պրոպագանդայի ազատության և հակակրոնական պրոպագանդայի համար պետականորեն ծրագրված գործելակերպի դեմ» [7, էջ 173-178]:

Որպես հետաքրքրական գուգահեռ նշենք, որ վերոնշյալ դիմումին գրեթե միաժամանակ՝ մարտի 6-ին, Ադրբեջանի կոմկուսի 9-րդ համագումարում Բաքվի վարչախմբի առանցքային դեմքերից Ասադ Կարանն իր զեկույցում շեշտում է. «Այն մզկիթները, որոնք փակված են ոչ կամովին, պետք է հենց հիմա վերադարձնել»<sup>1</sup>: Հ.Աբրահամյանն ընդգծում է, որ Ադրբեջանում «ազատ և անարգել գործել են մուսուլմանական մեջիդներն ու մզկիթները: Խորհրդային իշխանության տարիներին այնտեղ մոլլաները զանգվածային բռնաճնշումների չեն ենթարկվել և ոչ մի մեջիդ չի փակվել» [4, էջ 208]:

Իսկ Արցախում լայն թափով շարունակվում էին հակաեկեղեցական բռնաճնշումները: Արդեն 1929թ. սեպտեմբերի 20-ին թեմի առաջնորդը հայտնում է Գերագույն հոգևոր խորհրդին, որ թեմի գրեթե բոլոր եկեղեցիները փակվել են, իսկ քահանաների մեծ մասը թողել է իր կարգը [3, էջ 885]: Մնացյալ քահանաների վրա էլ շարունակվում էր անմարդկային ճնշում գործադրվել՝ հարկադրելով համարել հրաժարական տվածների շարքերը:

Արցախի թեմում մոլեգնող բռնաճնշումների ալիքն ի վերջո հասավ ամենավճռական հանգրվանին՝ վերջնական հարվածի սլաքն արդեն ուղղելով անմիջապես թեմի առանցքային անձին. «Արցախի թեմի փակման ազդանշանն եղաւ 1930

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 664, թ. 1:



թվականի փետրուարի 7-ին Վրթանես եպիսկոպոսի ձեռքադրությունն ու արգելափակումը Շուշիի բանտում» [5, էջ 415]: Շինծու մեղադրանքներով ձեռքադրված Վրթանես եպիսկոպոս Հակոբյանը շուրջ մեկ տարի ստիպված է լինում Շուշիի բանտում սպասել իր դատին՝ բանտարկության ողջ ընթացքում ենթարկվելով ծայրահեղ գրկանքների ու նվաստացումների, ինչի վկայությունն են Մայր Աթոռ ուղարկված գրությունները, որոնցով նա պարբերաբար ստիպված էր նյութական նպաստ և առաջին անհրաժեշտության իրեղեն (հագուստ, սպիտակեղեն, օճառ և այլն) խնդրել [3, էջ 891, 893-894]: 1931թ. հունվարի 9-ին շուշեցի Թալիշ Հովհաննիսյանը գրում է Մայր Աթոռ, որ հունվարի 19-ին նախատեսված է Վրթանես սրբազանի դատը, և խնդրում է փաստաբան ուղարկել<sup>1</sup>: Նույն անձը հունվարի 27-ին ուղարկված գրությամբ տեղեկացնում է, որ հունվարի 19-23-ը Ստեփանակերտում տեղի է ունեցել Վրթանես եպիսկոպոսի դատը, նրան առաջադրված որևէ մեղադրանք չի հաստատվել, սակայն սրբազանին կալանքից դեռևս չեն ազատել, դատախազը գործն ուղարկել է վերաքննության, և հունվարի 25-ին Վրթանես եպիսկոպոսին կրկին տարել են Շուշիի բանտ<sup>2</sup>: Նույն թվականի հոկտեմբերի 25-ին Գերագույն հոգևոր խորհրդին ուղարկված ոմն Սարգիս Սաֆարյանի նամակից տեղեկանում ենք, որ Արցախի թեմի առաջնորդը շարունակում է բանտում մնալ, չնայած այն փաստին, որ լիովին արդարացվել է իրեն առաջադրված մեղադրանքներից: Նամակագիրը նշում է. «Նրան կալանքի տակ են պահում ոչ թե նրա համար, որ ինչ-որ բանում մեղավոր է, այլ որովհետև հավատացյալ եպիսկոպոս է»<sup>3</sup>:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ողջ ընթացքում իր ուշադրության ներքո է պահում Արցախի թեմի առաջնորդի շուրջ կատարվող իրադարձությունները՝ միաժամանակ հնարավորինս բերելով ինչպես բարոյական, այնպես էլ նյութական աջակցություն<sup>4</sup>: 1931թ. նոյեմբերի 7-ին Գերագույն հոգևոր խորհուրդը դիմում է ՀԽՍՀ քաղվարչության նախագահությանը. «Ղարաբաղի թեմի առաջնորդ տ. Վրթանես եպիսկոպոսը երրորդ տարին է ինչ գտնում է Շուշու ուղղիչ տանը: Թե Վրթանես եպիսկոպոսից եւ թե ուրիշներից ստացած տեղեկություններից երեւում է, որ նրա դատը տեղի է ունեցել, եւ նա արդարացել է եղած մեղադրանքներից: Գերագույն հոգևոր խորհուրդը յայտնելով վերոգրեալը, խնդրում է նախագահութեանդ՝ բաւ համարել Վրթանես եպիսկոպոսի կրած նեղութիւնները եւ միջնորդութիւն յարուցանել ուր հարկն է, նրան կալանքից ազատելու եւ Էջմիածին վե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2736, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 12:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 4:

րադառնալու համար» [3, էջ 895]: Միաժամանակ նույնպիսի գրություն է ուղարկվում նաև Բաքվի և Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսին՝ հանձնարարելով «Վրթանես եպիսկոպոսին կալանքից ազատելու մասին միջնորդություն յարուցանել համապատասխան վարչութեան առջև» [3, էջ 895]:

1932թ. հունվարի 1-ին Արցախի թեմի առաջնորդը վերջապես ազատվում է կալանքից: Ազատվելուց հետո նրա առաջնահերթ անելիքն է լինում նախ շրջել թեմում և սեփական աչքերով տեսնել առկա կացությունը, որից հետո մեկնում է Մայր Աթոռ՝ մի փոքր կազդուրվելու տանջալից բանտարկությունից հետո: Հենց Մայր Աթոռում էլ ապրիլի 12-ին ներկայացնում է զեկույց, որից ակնհայտ է դառնում իրականությունն իր ողջ ահավորությամբ. «Մինչև 1930 թի փետրուար ամիսը թեմումն գոյություն ունեին եկեղեցիներ, թեմական խորհուրդ, քահանայություն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական այլևայլ հաստատությունների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառութեան հրաժարուել են, է՛, որ իրենց կոչումից, եւ է՛, քահանայագործությունից ու պարապում են իրենց տնտեսութեամբ եւ կամ ծառայում են որպէս ուսուցիչ, պետական ծառայող կամ կոլխոզնիկ» [3, էջ 896-897]:

Այլ կերպ ասած՝ Արցախի թեմն արդեն գրեթե գոյություն չունէր, և աղբբեջանական իշխանություններին, թեմը վերջնականապես փակելու համար, մնացել էր թեմակալ առաջնորդից մեկընդմիշտ ձերբազատվելու հարցը լուծել:

Վրթանես եպիսկոպոս Հակոբյանի՝ Արցախի թեմում իրականացրած առաջնորդական գործունեության վերջին քայլը եղավ 1932թ. հուլիսին թեմական պատգամավորների ընտրությունների կազմակերպումը՝ նոյեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Հուլիսի 22-ին և 28-ին Վրթանես եպիսկոպոսը Գերագույն հոգևոր խորհրդին զեկուցում է կայացած ընտրությունների և դրանց արդյունքների մասին [3, էջ 897-902]:

Խորհրդային իշխանություններն անգամ խոչընդոտում են Արցախի թեմի՝ կաթողիկոսական ընտրությունների առիթով գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովին մասնակցության հրավերը ստանալուն. «արտասահման ուղարկված հրավերները տեղ հասան, իսկ ահա ԽՍՀՄ-ի ներսում գտնվող հայոց թեմերից ոչ բոլորը ստացան հրավերներ: Այսպես, Ստեփանակերտ՝ Արցախի հայոց թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսին ուղարկված հրավերը կորավ: Այսպիսով, սկսվեց աղբբեջանական իշխանությունների ճնշումը Արցախի հայոց հոգևորականության վրա: Սարսափելի ավարտի սկիզբը՝ հայ հոգևորականության արտաքսումը, բոլոր հայ եկեղեցիների փակումը Արցախում» [1, էջ 91]: Իրականում սա սարսափելի ավարտի սկիզբը չէր, այլ գրեթե վերջը:

1933թ. ապրիլի 4-ին Խորեն Ա կաթողիկոսին գրված Վրթանես եպիսկոպոսի հայտարարությունից հստակ է դառնում, որ Արցախի թեմի փակումն արդեն կայացած փաստ է. «Ամսոյս 4-ին մասնաւոր գործով գնացել էի Գեորգ Սրբազանի մօտ. մեր խոսակցութեան միջոցին ի միջի այլոց յայտնեց, որ ինքը Երեւանի պետքադարչութեան հետ բանակցել է իմ թեմ գնալուս մասին եւ անյաջողութեան է հանդիպել, յայտնեց նաեւ, որ Դուք կանչելու եք ինձ այդ մասին յայտնելու: Նոյն օրը Վեհարան հրաւիրուեցի եւ ներկայանալով Ձեզ, հետեւեալը յայտնեցիք. «Խորհրդակցութիւն ունեցանք այստեղ, Արսէն եպիսկոպոսին Բագու ուղարկեցինք, որ քեզ ընտրել տայ Բագուի թեմի առաջնորդ՝ մնալով միեւնոյն ժամանակ նաեւ Ղարաբաղի թեմի առաջնորդ: Քո՛ւ Ղարաբաղի թեմը գնալու առթիւ Գեորգ Սրբազանը Երեւանի պետքադարչութեան հետ բանակցութիւն է վարել, եւ ինչպէս երեւում է նրա գլխաւոր զեկուցումից, Ձեզ թոյլ չի տրւում Ղարաբաղի թեմը գնալու...» [3, էջ 903]: Արխիվային փաստաթղթերից մեկում պահպանվել է Խորեն Ա Մուրադբեկյանի՝ Վրթանես սրբազանի հետ զրույցի առավել մանրամասն պատկերը<sup>1</sup>, որից կարելի է պատկերացում կազմել իրադարձությունների ողջ ընթացքի մասին: Ամենայն հավանականությամբ, կաթողիկոսական ընտրություններից հետո Ադրբեջանի իշխանություններն ուղղակի արգելել էին Վրթանես սրբազանի վերադարձն Արցախ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը չորս-հինգ ամիս շարունակ ամեն կերպ փորձել էր առաջնորդին վերադարձնել իր թեմ և այդպիսով պահպանել թեմի գոյությունը, սակայն ապարդյուն. «Դեկտեմբեր ամսից Մեր պատուէրով, Տ. Գեորգ Արքեպիսկոպոսը բանակցութիւններ է վարում Կառավարութեան հետ Ձեր Ղարաբաղի թեմը վերադառնալու համար: Իհարկէ համոզուած պիտի լինիք, որ թէ Մեր եւ թէ Գերագոյն Խորհրդի անդամների ցանկութիւնն է, որ թեմերը թափուր չը մնան, ուստի եւ անհրաժեշտութիւն է եղել մեզ համար, որ Դուք գնաք Ձեր թեմը: Այդ է պատճառը, որ Տ. Գեորգ Սրբազանը ստացած մերժումներից Մեր անունից նոր պահանջներ է արել, խնդրելով նոր միջնորդութիւններ Ադրբեջանի եւ Թիֆլիզի Կառավարութիւններին անելու: Վերջին անգամ նոյն իսկ առաջարկ է եղել, որ Դուք ժամանակաւորապէս կեցունի վայր ունենաք Գանձակը, մինչեւ որ Գանձասարի վանքի խնդիրը կը կարգաւորուի: Դժբախտաբար վերջին անգամ կտրականապէս յայտնել են, որ Ադրբեջանի Կառավարութիւնը անկարելի է համարում Վրթանես Եպիսկոպոսի Ղարաբաղ վերադարձը: Յայտնում եմ, որ վարած բանակցութեանց հետեւանքով այդ հարցը Մեզ համար փակուած է եւ Դուք ազատ եք Ղարաբաղի թեմից: ... Այո ցաւալի է, որ

<sup>1</sup> Փաստաթուղթը թվագրված չէ և չունի նշված հասցեատեր ու ստորագրություն, սակայն բովանդակությունից միանգամայն պարզ է դառնում, որ այն Վրթանես սրբազանի հիշատակած հանդիպման առավել մանրամասն պատկերն է, որը, ամենայն հավանականությամբ, Խորեն Ա կաթողիկոսը ներկայացրել է Գերագույն հոգևոր խորհրդին:

չեն թոյլ տալիս Ձեզ վերադառնալ Ձեր թեմը: Եթե Մենք փակուած ենք համարում այդ հարցը ուրեմն սպառուած ենք համարում բոլոր միջոցները եւ անօգուտ»<sup>1</sup>:

Վրթանես սրբազանի՝ ապրիլի 4-ի վերոնշյալ հայտարարությունից այն տպավորությունն է, որ նա որևէ կերպ չի կարողանում հաշտվել կատարվածի հետ և կարծես չի ցանկանում հավատալ, որ այն իրականությունն է. «Ինչպէս Ձեզ յայտնեցի, ես չեմ հրաժարուել Ղարաբաղի թեմի առաջնորդական պաշտօնից, ու այդ թեմի առաջնորդն էլ մնում եմ: Յայտնեցի նաեւ, որ ոչ մի պատճառ չկայ, իմ՝ թեմն չգնալու, սակայն ես չգիտեմ ինչպիսի բանակցութիւն է վարուել, որի հետեւանքով արգելոււմ է ինձ իմ թեմն գնալը» [3, էջ 903]:

Սակայն կատարվածն իրոք անշրջելի իրողություն էր. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որն աստիճանաբար ինքն էր կանգնում փակման լրջագույն սպառնալիքի հանդիման, անգոր էր որևէ բան անել Ադրբեջանի սանձարձակ իշխանությունների կամայականությունների դեմ: Ապրիլի 7-ին Գերագույն հոգևոր խորհուրդը Վրթանես եպիսկոպոսին վերջնականապէս հայտնում է. «Գեր. հոգ. խորհուրդը իւր ամսոյս 5-ի թ. ԻԲ նիստի մէջ լսեց Հայրապետական լիագոր եւ խորհրդիս անդամ Գերաշ. տ. Գեորգ արքեպիսկոպոսի ամսոյս 3-ի գրաւոր զեկուցագիրը, որից ի միջի այլոց երեւում է, որ Հայրապետական լիագորը Նորին Սրբութեան կարգադրութեամբ անցեալ թուի դեկտեմբերից սկսած բանակցութիւններ է վարել ամենահնարաւոր միջոց գործ դնելով Ձեր՝ Ղարաբաղի թեմ վերադառնալու համար: Նոյն զեկուցումից երեւում է, որ Ադրբեջանի կառավարութիւնը ընդհանրապէս ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտօնավարութիւնը Ադրբեջանում: Վերոգրեալը հաղորդելով Ձեզ, Գերագույն Հոգևոր խորհուրդը Ձեր Արցախի թեմ գնալու վերաբերութեամբ բանակցութիւնները վերջացած է համարում» [3, էջ 904]:

Սրանով իրոք ամեն ինչ ավարտվում է. Արցախի թեմի փակումը կանխելու բոլոր միջոցներն սպառված էին: Ելնելով վերոնշյալ վերջին գրության ամսաթվից՝ պայմանականորեն 1933թ. ապրիլի 7-ը կարող ենք համարել Արցախի թեմի փակման օր, թեպետ, ինչպէս արդեն նշեցինք, փաստացիորեն դա ավելի վաղ կայացած իրողություն էր: Յավալի ճակատագիր ունեցավ նաև Վրթանես եպիսկոպոս Հակոբյանի հետագա կարգավիճակի հարցը: Նրան որևէ թեմում պաշտոնի նշանակելու Մայր Աթոռի ջանքերը կտրականապէս մերժվեցին խորհրդային իշխանությունների կողմից, և այդպէս էլ մինչև իր կյանքի վերջը՝ 1943թ., Վրթանես սրբազանը զուրկ մնաց հոգևոր ասպարեզում որևէ էական դերակատարություն ունենալու հնարավորությունից [5, էջ 418-419]:

*Օգոստոս, 2016թ.*

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2689, թ. 6:

### Աղբյուրներ և գրականություն

1. *Ս.Ստեփանյան*, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:
2. *Վ.Բալայան*, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011:
3. Վաերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), կազմեց և առաջաբանը գրեց Սանդրո Բեհբուդեանը, Երևան, 2001:
4. *Հ.Արքահանյան*, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, 2009:
5. *Է. Դանիելեան*, Գանձասարի պատմութիւն, Երևան, 2005:
6. *Հ.Արքահանյան*, Մարտնչող Արցախը, գիրք Ա, Երևան, 2003:
7. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1920-1938թթ.), կազմեց՝ Սանդրո Բեհբուդյան, Երևան, 1994:
8. *Ս.Բալայան*, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009:
9. *Ա.Մանուկյան*, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երևան, 1997:

### ԱՐՑԱՒԻ ԹԵՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂԲԵՋԱՆԻ ԲՈՒՍԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ 1920-1933ԹԹ.

#### Գարիկ սարկավազ Ասրյան

#### Ամփոփագիր

Արցախի խորհրդայնացումից և Ադրբեջանին բռնակցվելուց հետո սկսվեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի պատմության ծանրագույն փուլերից մեկը: Երկրամասը հայաթափելու և վերջնականապես բռնայուրացնելու համար Ադրբեջանի տեսակետից պակաս կարևոր չէին նաև իր զավթողական ծրագրերին պոտենցիալ վտանգ ներկայացնող անձանց ու հաստատությունների չեզոքացումն ու ոչնչացումը: Այսպիսով ԽՍՀՄ իշխանությունների որդեգրած հակակրոնական ու հակաեկեղեցական լայնածավալ պայքարին գումարվեց Ադրբեջանի ազգայնամուլական քաղաքականությունը՝ կրկնակի ծանրացնելով Արցախի թեմի վիճակը, որը հայտնվել էր բռնությունների կիզակետում: Եկեղեցիների ու եկեղեցական գույքի բռնագրավմանը, հավատացյալների ահաբեկմանը, հոգևորականների նկատմամբ բռնաճնշումներին հետևեց թեմի փակումը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը մեկ տասնամյակից ավելի հնարավոր բոլոր միջոցներով պահպանում էր Արցախի թեմի գոյությունը, այլևս անկարող եղավ դիմագրավել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ամենաթողության և լիակատար աջակցության պայմաններում սանձազերծված ադրբեջանական իշխանությունների կամայականությանը: Արցախի թեմի փակման ժամկետ պայմանականորեն կարելի է համարել 1933թ. ապրիլի 7-ը:

**АРЦАХСКАЯ ЕПАРХИЯ В ЦЕНТРЕ РЕПРЕССИЙ  
СОВЕТСКОГО АЗЕРБАЙДЖАНА В 1920-1933ГГ.***Дьякон Гарик Асрян*

Резюме

С советизацией Арцаха и его принудительным включением в состав Азербайджана начался один из тяжелейших этапов в истории Арцахской епархии Армянской Апостольской церкви. С точки зрения Азербайджана, для истребления армянского населения области и окончательной аннексии не менее важными были нейтрализация и уничтожение лиц и предприятий, представляющих угрозу для их захватнических планов. Таким образом, к антирелигиозной и антицерковной масштабной борьбе властей СССР прибавилась националистическая политика Азербайджана. Состояние Арцахской епархии, оказавшейся в центре репрессий, вдвойне ухудшилось. За конфискацией церквей и церковного имущества, запугиванием верующих и насилием над духовенством последовало закрытие епархии. Первопрестольный Святой Эчмиадзин, больше десятилетия сохранявший существование Арцахской епархии всеми возможными методами, оказался не в состоянии противостоять произволу Азербайджана в условиях политики вседозволенности и полной поддержки центральных властей СССР. Условной датой закрытия Арцахской епархии можно считать 7-ое апреля 1933г.

**ARTSAKH DIOCESE AS A TARGET  
FOR REPRESSIONS OF SOVIET AZERBAIJAN IN 1920-1933***Deacon Garik Asryan*

Resume

The Sovietization of Artsakh and its forced annexation to Azerbaijan marked one of the most difficult stages in the history of Artsakh Diocese of Armenian Apostolic Church. In Azerbaijan's view, the neutralization and elimination of individuals and organizations potentially hindering its occupation plans, was of a no less importance. Thus, the Artsakh Diocese, which had become a target for repressions, suffered also the nationalistic policy of Azerbaijan, in addition to the extensive anti-religious and anti-clerical campaign led by USSR authorities. The confiscation of churches and church property, intimidation of the faithful, repressions of the clergy were followed by the shutdown of the Diocese. The Mother See of Holy Etchmiadzin, which had used every possible mean to preserve the existence of the Artsakh Diocese for more than a decade, was no longer able to confront the wayward acts of Azerbaijan's authorities unleashed and fully supported by USSR central authorities. April 7, 1933 can be considered as the date of the shutdown of the Artsakh Diocese.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

### *Վաչիկ Բրուտյան\**

*Բանալի բառեր*<sup>1</sup> տեղեկատվական հասարակություն, կրթության փիլիսոփայություն, մանկավարժություն, երևութաբանական փիլիսոփայություն, կրթության մեթոդաբանություն:

Սոցիալական, քաղաքական, գիտական համընդհանուր փոփոխություններով բնորոշվող 21-րդ դարը նորի փնտրտուքի մեջ է նաև կրթության ոլորտում. այդ են պահանջում տեղեկատվական հասարակության զարգացման արդի միտումները: Մակայն կրթության ոլորտի արդիականացումը դժվարությունների է հանդիպում և հաճախ զիջում է գիտության, տնտեսության, մշակույթի զարգացման, սոցիալական հարաբերությունների և հասարակական գիտակցության փոփոխությունների մակարդակներին: Սոցիալական փիլիսոփայությունը, ինչպես նաև նրանում առկա կրթության փիլիսոփայության խնդիրները կրթության զարգացման հարցերը դարձրել են արդի գիտական հետազոտությունների գլխավոր առարկան:

Կրթության փիլիսոփայությունը, որը որպես ինքնուրույն գիտակարգ ձևավորվել է XX դարի երկրորդ կեսին, փիլիսոփայության և կրթական փորձի «գավակն» է: Այն ծնվել է փիլիսոփայական բազմաթիվ հոսանքների և կրթության երկարատև փոխազդեցությունների, ինչպես նաև այն բազմաթիվ մտածողների ստեղծագործական ջանքերի շնորհիվ, որոնց համար կրթությանն առնչվող հարցերը ժամանակի համար մտահոգիչ ու կարևոր էին. այլ կերպ ասած՝ կրթության փիլիսոփայությունը ձևավորվել է կրթական փորձի և դրան վերաբերող փիլիսոփայական խորհրդածությունների մշտական փոխազդեցության շնորհիվ [1, c. 7-8]:

Կրթության և փիլիսոփայության համակարգերի ազդեցությունը միշտ փոխադարձ է եղել: Չի կարելի նույնացնել կրթության դասական հարացույցը գիտության լուսավորչական ձևի, համընդհանուր, միասնական բանականության լուսավորչական գաղափարների, լուսավորության փիլիսոփայության հետ: Կրթության համակարգը միշտ հիմնվում է գիտության որոշակի հայեցակարգի վրա: Լուսավորությունը, կառուցելով միասնական կանոնարկող ձև, շարունակել

<sup>1</sup> Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ:

է կրթության միջնադարյան գիտակարգային մեխանիզմները՝ նույնացնելով ուսուցման հետ, և ավելին՝ նույնիսկ ուժեղացրել է դրանք, քանի որ գիտակարգային կազմակերպվածությունը տարածված է եղել կրթության թե՛ բովանդակության, թե՛ ձևի, ինչպես նաև գիտական մտքի կառուցվածքի վրա:

Կրթության դասական հարացույցը պատմության ընթացքում ստացել է տարբեր հիմնավորումներ, նրա գաղափարներն ու նորմերն արդիականացվել են, համալրվել և փոխակերպվել: Ընդհանրական կրթության կողմնորոշումը, որը մարմնավորվել է տարրական և միջնակարգ կրթության համակարգում, հետագայում համալրվել է այլ, մասնավորապես՝ անձի բնական իրավունքների գաղափարներով, այդ թվում՝ կրթության իրավունքի: Այսօր ակնհայտ է դառնում, որ կրթության դասական մոդելը գործնականորեն սպառել է իրեն: Այն այլևս չի համապատասխանում արդի հասարակության՝ կրթությանը ներկայացվող պահանջներին: Շատ մասնագետների կարծիքով՝ հարկ է փնտրել մանկավարժական և փիլիսոփայական գաղափարների նոր համալիր, որոնք կստեղծեն կրթության համակարգի բանական հիմք: Հենց այս պատճառով էլ ամենատարբեր քայլեր են առաջարկվում կրթության համակարգի վերակազմավորման ուղղությամբ: Ներկայումս աշխարհում առաջարկվում են կրթության նոր հայեցակարգեր, մշակվում են ծրագրեր, որոնվում են գիտության կազմակերպման նոր ձևեր՝ ուղղված կրթության համակարգի վերաձևավորմանը:

Պատահական չէ, որ վերջերս ձևավորվել է կրթության փիլիսոփայության գիտակարգը, որի ներսում նորովի են քննարկվում մանկավարժության հիմնարար գաղափարները, դիտարկվում են մանկավարժական համակարգերի պատմությունը, փիլիսոփայության ազդեցությունը կրթության վրա: Չէ՞ որ փիլիսոփայության միջոցով է ժողովուրդն իմաստավորում սեփական ճակատագիրը, ուրվագծում հնարավոր ապագայի կենսաձևը:

Կրթության փիլիսոփայությունը դիտարկում է, թե մշակութային միջավայրում ինչպես է տեղի ունենում մարդու մտավոր և բարոյական զարգացումը, և այդ ընթացքին ինչպես կարող է նպաստել կրթության համակարգը: Այդպիսի խնդիրներ քննարկելիս հարկ է լինում անդրադառնալ փիլիսոփայության արմատական հարցերին: Տարբեր փիլիսոփաներ և փիլիսոփայական դպրոցներ ջանում են մշակել գիտելիքի ըմբռնման նոր, արդյունավետ եղանակներ, ինչպես նաև կրթական գործընթացի կառուցվածքներ: Նրանք փորձում են առաջադրել գաղափարներ, որոնք հնարավորություն կտան խորապես ըմբռնել և նպաստել անհատական մշակույթի ձևավորմանը: Ընդամին, մանկավարժության՝ որպես կրթության գուտ տեսական փիլիսոփայության առավել էմպիրիկ գիտակարգի մարդաբանական գիտությունների հարացույցում շարունակում է արդիական



մնալ դրանց փոխկապվածության և փոխհարաբերության հարցը:

Փիլիսոփայությունն ու մանկավարժությունը վաղեմի առնչություններ ունեն: Մանկավարժական առաջին մտքերն ու տեսությունները ձևավորվել են հենց փիլիսոփայական հայեցակարգերի հենքով. համոզվելու համար բավական է հիշել անտիկ պատմությունը, միջին դարերը կամ Վերածննդի դարաշրջանը: Եվ այդ գիտությունների ընդհանուր հիմքով ձևավորված գիտական ոլորտը ստացել է «կրթության փիլիսոփայություն» անվանումը:

Փորձենք դիտարկել այդ հասկացությունները և գիտակարգերը՝ ըստ դրանց փոխկապվածության:

Մանկավարժությունը կրթության, դաստիարակության և ուսուցման միջոցով մարդու կատարելագործման գիտություն է և արվեստ: Ըստ Բիմ-Բադի մեկնաբանության [2, էջ 13-14]՝ մանկավարժական գիտությունը ներառում է երեք հիմնական ոլորտ.

1. **Մանկավարժությունը՝ որպես գիտություն և արվեստ:** Մանկավարժությունը՝ որպես գիտական տեսության և փորձառության ոլորտ, կոչվում է մանկավարժության փիլիսոփայություն կամ ընդհանուր մանկավարժություն: Մանկավարժության փիլիսոփայությունը պատասխանում է հետևյալ գլխավոր հարցերին. անհրաժեշտ է արդյոք մանկավարժությունը որպես կրթության և դաստիարակության գիտական իմացություն; եթե անհրաժեշտ է, ապա ինչպիսի՞ հնարավորությամբ; ինչպիսի՞ն է մանկավարժության բնույթը, որով այն առանձնանում է այլ գիտություններից և արվեստի տեսակներից: Մանկավարժության՝ որպես կրթության և դաստիարակության գիտության, ինչպես նաև արվեստի բնույթն ածանցված է կրթության և դաստիարակության բնույթից, դրանց էության ըմբռնումից: Ըստ այդմ՝ մանկավարժության փիլիսոփայության հիմքում ընկած է կրթության, դաստիարակության և ուսուցման տեսությունը:
2. **Կրթության, դաստիարակության և ուսուցման տեսություն:** Սույն տեսությունը պատասխանում է կրթության, դաստիարակության և ուսուցման, դրանց անհրաժեշտության հարցերին: Առարկան ուսուցման և դաստիարակության գործընթացն է: Մարդու կրթությունը, դաստիարակությունը և ուսուցումը կախված են նրա բնույթի ըմբռնումից, նրա հնարավորությունների և զարգացման սահմանների իմացությունից: Դրա համար էլ դաստիարակության հիմքում ընկած է մարդու՝ որպես դաստիարակվող և դաստիարակող էակի իմացությունը:
3. **Մանկավարժական մարդաբանությունը՝ որպես մանկավարժական ողջ շինվածքի հիմք:** Մանկավարժության բաժինը, որ զբաղվում է մարդու՝

որպես դաստիարակող և դաստիարակվող էակի ճանաչողությամբ, կոչվում է մանկավարժական մարդաբանություն: Այն պատասխանում է մարդու և մարդկային համակեցության բնույթի, դաստիարակվող և ուսուցվող մարդու և մարդկանց խմբերին վերաբերող հարցերի:

Կրթության փիլիսոփայությունը խնդրահարույց ընդհանուր տեսական հետազոտությունների, նպատակների և կրթության արժեքային հիմնավորվածության, նրա բովանդակության և ուղղվածության ձևավորման սկզբունքների գիտական բնագավառ է [1, շ. 9]: Կրթության փիլիսոփայությունը դիտարկում է կրթության գործընթացի բոլոր երևույթների էությունն ու բնույթը՝ ի՞նչ է կրթությունն ինքնին (կրթության գոյաբանություն), ինչպե՞ս է այն իրականանում (կրթության տրամաբանություն), ինչպիսի՞ն են կրթության արժեքայնության բնույթն ու աղբյուրները (կրթության արժեքանություն), ինչպիսի՞ն է և ինչպիսի՞ն պետք է լինի կրթության գործընթացի մասնակիցների վարքը (կրթության վարքականոն), ինչպիսի՞ն են և ինչպիսի՞ն պետք է լինեն կրթության գործընթացի մեթոդները (կրթության մեթոդաբանություն): Կրթության գործի դրվածքի այս կամ այն ամբողջական մոտեցման հիմք կազմող գաղափարների խմբերը կարող են դիտարկվել նաև առանձնաբար (կրթության գաղափարաբանություն):

Նման մոտեցման դեպքում ծագում է կրթության փիլիսոփայության և բուն փիլիսոփայության փոխհարաբերության հարցը: Բնականաբար, դրանց միջև մեծ անջրպետ չկա: Կրթության փիլիսոփայության իմաստը փիլիսոփայական անդրադարձն է մշակույթի այն բաղադրիչներին, որոնք մարդու կրթության մեջ թույլ են տալիս սեփական մեկնաբանություն: Ընդ որում՝ կրթության փիլիսոփայությունը դրսևորվում է որպես մարդու կենսափիլիսոփայություն՝ աղերսված այն մշակույթին, որն անհրաժեշտ է իր էական ուժերի իրացման համար: Փիլիսոփայությունը գիտելիքի հատուկ ձև է: Նրա սահմաններում մարդն արժեքանական անդրադարձ է կատարում իրեն, աշխարհում զբաղեցրած իր տեղին: Ինչ-որ առումով արդարացված է այն պնդումը, ըստ որի՝ եթե մշակույթը մարդու էական ուժերի իրացման պոտենցիալ միջոց է, ապա փիլիսոփայությունը կապված է մշակույթի ինքնագիտակցման հետ:

Փիլիսոփայության մեջ կա կրթության համար հատուկ արժեք ունեցող ներուժ՝ պայմանավորված նրա մշտապես խնդրահարույց հարցողական բնույթով, բազմափոփոխակ պատասխանների թույլտվությամբ, իմացության գործիքակազմի նկատմամբ անդրադարձ հարաբերությամբ, տրամաբանականության և հետևողականության պահանջով: Այդ ամենը փիլիսոփայության գործիքակազմը դարձնում է ինքնատիպ և անփոխարինելի՝ առանց դոգմաների, ճկուն, համա-

տեքստային և միաժամանակ՝ խիստ ու ապացուցողական մտածողության հմտությունների մշակման համար [3, с. 34-35]: Փիլիսոփայական կարգերի համընդհանրությունը դպրոցականի ընկալման համար հնարավորություն է տալիս վերացնել դպրոցական իմացության դրվագայնությունը, դարձնել կապակցված և իմաստավորված: Կյանք մտնող մարդուն փիլիսոփայության գիտակարգային սահմանները հնարավորություն են տալիս մտորել ամենատարբեր կենսականորեն կարևոր խնդիրների շուրջ, օգնում՝ հենց դրանով անդրադարձաբար, ոչ տարերայնորեն կողմնորոշվել: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է տալիս որոնել այդ կողմնորոշիչները համընդհանուր, ոչ տեղային մակարդակում, որը նվազ կարևոր չէ ժամանակակից հարափոփոխ հասարակության համար: Փիլիսոփայության ադապտացիան վեկտորները դեպի նոր կրթական հարացույց արդեն նշանակված են գրականության մեջ: Եվրոպական կրթության փիլիսոփայության շրջանակներում ձևավորվել են բանական-վերլուծական, գործաբանական, անհամաչափ-քողարկված, բիհեիտրիստական և այլ հայեցակարգեր: Փիլիսոփայության և կրթության փոխհարաբերության բացահայտմանը միտված մտքի ընդհանուր տրամաբանությունը հետևողական շարժումն է դեպի փիլիսոփայության և կրթության փոխհարաբերության ելակետային՝ անտիկ մոդելները, դեպի այդ փոխհարաբերության բեկման աստիճանի և բնույթի որոնումը՝ դասական փիլիսոփայության և կրթության ներսում տվյալ թեմայով արդի խնդիրների բացահայտման հեռանկարով:

Ինչպես նշում են հետազոտողները [4], փիլիսոփայության արդի վիճակն ամբողջությամբ կարելի է անվանել *անցումային*, երբ փիլիսոփայելու դասական մոդելների գերակշռությունից աստիճանաբար անցում է կատարվում դեպի ոչ դասական գերակշռություն: Դասական փիլիսոփայության մեջ գործնականորեն մշակված էր հակազդման ավարտուն մեխանիզմ կրթական բոլոր ճգնաժամերի համար: Կրթությունը միայն փիլիսոփայական հիմնական արդյունքների բացահայտման ոլորտ էր: Չջանալով թափանցել բուն կրթության բնույթի խորքը՝ փիլիսոփայությունը նրա առջև շրջել է նպատակադրման կողմնորոշիչները, բովանդակության սահմանումը, ձևերի մշակումը և կազմավորման մեթոդները: Փոխվել է փիլիսոփայությունն ինքը, դարձել բազմակի, բազմակարծ, պարականոն: Փիլիսոփայությանը զուգընթաց և մասնակիորեն նրանից կախված՝ փոխվել է նաև կրթությունը:

Խիստ հազվադեպ տեղի է ունենում կրթության փիլիսոփայության գաղափարների մշակում երևութաբանական (ֆենոմենոլոգիական) փիլիսոփայության հիման վրա: Քանի որ երևութաբանական փիլիսոփայության խնդրահարույց կենտրոնը մարդկային գիտակցությունն է, ապա ուսումնական գործընթացում նրա կիրառությունը կրթության նկատմամբ կապված է անհատականացված

խմաստների և նշանակությունների բաղադրման հետ: Կրթության ավանդական մեթոդաբանությունը ելնում է դրական մոդելից, երբ դիդակտիկական սկզբունքները հանդես են գալիս որպես բնագիտական իմացության օրինակափոխության նմանակ: Շնորհիվ դրա՝ մանկավարժական գիտության մեջ հաստատվել է աքսիոմների, սկզբունքների և հասկացությունների շարք՝ կողմնորոշված դեպի ճշգրիտ գիտության չափորոշիչները: Բազմաթիվ գիտական աշխատություններում վեր են հանված անձի անհատական մտքերի, պահանջների անտեսման դեպքում կրթության և դաստիարակության համակարգի անարդյունավետությունն ու անգիտակությունը: Դրանից ձերբազատված է կրթության երևութաբանությունը, որը հիմնվում է հասարակական ճանաչողության մոդելի վրա և իր առաջնությունը կառուցում է գոյություն ունեցող իրականության անհատականացված նշանակությունների և իմաստների հիմքով: Դրանով այն պատասխան է հղում արդի մարդասիրական մանկավարժության պահանջներին՝ ուղղված երեխայի անհատականությանը, նրա զգայական աշխարհին, ցանկություններին ու հետաքրքրություններին: Որպես «գիտակցության փիլիսոփայություն»՝ երևութաբանությունը կարող է մանկան գիտակցական աշխարհի հետազոտության արդյունավետ մեթոդ դառնալ, հետևաբար և մանկավարժության մեթոդաբանական գաղափարների մեջ ունակ է զբաղեցնելու կարևոր տեղ [5]:

Կրթական գործընթացների երևութաբանական ըմբռնումը ենթադրում է փիլիսոփայության և մանկավարժության երկխոսություն, որի ընթացքում ձևավորվում է հատուկ տեսակի գիտելիք, որ հայտնի է «կրթության մեթոդաբանականություն» (մեթոդոլոգոս) անվանմամբ [6, c. 29]: Այն ենթադրում է կրթության բնույթին ուղղված քննադատական հայացք՝ ելնելով մանկավարժական և փիլիսոփայական կուտակված փորձից, և հանդես է գալիս ելակետային դրվածքների համախմբմամբ ու կրթական փորձառության սկզբունքներով՝ ձևավորված երևութաբանական փիլիսոփայության հիման վրա: Ինչպիսի՞ք են դրանք:

Առաջին՝ մանկավարժության մեջ երևութաբանական մոտեցումը պետք է նկատի առնի խոր կապերը բոլոր կենդանի երևույթների հետ:

Երկրորդ՝ արդի մանկավարժության համար կարևոր է մարդու կյանքի անհատական գենեզիսը, որի ընթացքում տեղի է ունենում նրա անձնային հատկանիշների զարգացումը:

Երրորդ՝ առանցքային է դառնում ուսուցչի և աշակերտի՝ որպես ինքնատիպ, ինքնակա անհատների երկխոսության գաղափարը:

Չորրորդ՝ մանկավարժական երևութաբանության կարևոր չափանիշ է մարդու՝ որպես արարքի սուբյեկտի՝ սեփական կյանքի ստեղծարարի դաստիարակությունը:

Վերջապես՝ կյանքի երևութաբանական տեսանկյունից նոր լույսով է երևում աշակերտի բանական, բարոյական և գեղագիտական ունակությունների բնույթը: Երևութաբանական մանկավարժությունը՝ մանկավարժամեթոդաբանական հայեցակետով՝ 1) մշակույթ է կյանքի նկատմամբ դրա կառուցողական շրջադարձի ընթացքում, 2) մշակույթ է մանկան անհատականության բացահայտման և զարգացման, 3) մշակույթ է աշակերտի ստեղծագործական մտածողության ձևավորման՝ լուսաբանված գեղագիտական, բանական և բարոյական զգացումների դրական հատկությամբ:

Ինչպիսին էլ լինի փիլիսոփայությունն այսօր, կրթության շուրջ փիլիսոփայելը նրա նախկին՝ դասական ըմբռնման սահմաններում փիլիսոփայել է նշանակում առավելապես այլ կրթության, քան նրա առկա կացության շուրջ: Այսօր ինչպես կրթությանը, այնպես էլ բուն փիլիսոփայությանը նույնքան անհրաժեշտ կրթության փիլիսոփայական վերլուծությունը կարող է սկսվել միայն դրանց փոխադարձ դիրքավորումից, որը ենթադրում է բուն իսկ փիլիսոփայության և կրթության փոփոխությունների, ինչպես նաև մոդելների՝ միմյանց նկատմամբ ունեցած փոփոխության որոշարկում:

Կրթության ժամանակակից համակարգն իր հիմնական գծերով ձևավորվել է փիլիսոփայական և մանկավարժական գաղափարների որոշակի ազդեցությամբ: Դրանք ձևավորվել են XVIII դարավերջին և XIX դարասկզբին՝ որպես կրթության «դասական» համակարգի կամ մոդելի հանրագումար [7, с. 307-308]: Թեև այդ մոդելը գործառել է երկու դարի ընթացքում, իր հիմնական բնութագրերով (այսինքն՝ կրթության նպատակների և բովանդակության, դասավանդման ձևերի և մեթոդների, մանկավարժական գործընթացի և դպրոցական կյանքի կազմակերպման եղանակների առումով) այն մնացել է անփոփոխ: Դասական հարացույցը հաջողություններ է ապահովել եվրոպական կրթության համար: Տարրական և միջնակարգ կրթության ընդհանուր և պարտադիր համակարգը, որ ձևավորել են մի ամբողջ շարք մտածողներ, գործնականորեն մարմնավորվել է ոչ միայն նախկին խորհրդային տարածքում, այլ նաև բոլոր եվրոպական երկրներում:

Այսպիսով՝ կրթության նոր փիլիսոփայության առանցքում հայ հասարակության համար տեսական մանկավարժության հանգուցային խնդիրը պետք է լինի գործնական մանկավարժության վերակողմնորոշումը դեպի անձի հոգևոր-արժեքային հայեցակետեր, դեպի մարդասիրական սովորույթների վերածնունդ, դեպի անձի արժեքային-իմաստավորված գործունեության ձևավորում:

*Մեկստեմբեր, 2016թ.*

## Աղբյուրներ և գրականություն

1. *Гусинский Э.Н., Турчанинова Ю.И.*, Введение в философию образования, М., «Логос», 2000.
2. *Бим-Бад Б.М.*, Антропологическое основание теории и практики современного образования: Очерк пробл. и методов их решения, М., 1994.
3. Философия образования. Сб. науч. статей / Ред. А.Н. Кочергин, М., 1996.
4. *Соколова Л.Б.*, Философия образования как сущность мировоззренческих оснований образовательного процесса //Теоретический журнал «Credo», 1997, см. <http://credonew.ru/content/view/18/49/>
5. *Куренкова Р.А.*, Феноменология образования: вопросы теории и практики (опыт сотрудничества), Владимир, ВГПУ, 1999, с. 138-193.
6. Философия образования: связь науки и практики, М.-Тверь, 2002.
7. *Наторп П.*, Избранные работы / Сост. В.А. Куренной, М., Изд. дом «Территория будущего», 2006.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆԸ

### *Վաչիկ Բրուտյան*

#### Ամփոփագիր

Հոդվածում հիմնավորվում է կրթության փիլիսոփայության գիտակարգի ձևավորման անհրաժեշտությունը, նորովի քննարկվում են մանկավարժական հիմնարար գաղափարները, դիտարկվում են մանկավարժական համակարգերի պատմությունը, փիլիսոփայության ազդեցությունը կրթության վրա:

## ПЕДАГОГИКА И ФИЛОСОФИЯ ОБРАЗОВАНИЯ

### *Вачик Брутян*

#### Резюме

В статье обосновывается важность формирования научной категории – философии образования, по-новому обсуждаются основополагающие идеи педагогики, рассмотрены история педагогических систем и влияние философии на образование.

## PEDAGOGY AND PHILOSOPHY OF EDUCATION

### *Vachik Brutyan*

#### Resume

The article substantiates the necessity of forming the discipline of Philosophy of Education. The fundamental pedagogical concepts are discussed in a new way, while the history of pedagogical systems, and the influence of philosophy on education are reviewed.

## ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնասխնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

### Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
  - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
  - *Շարիպովա Ք.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
  - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

*Խմբագրություն*

**«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես**  
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ Արդարադատության նախարարության  
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.  
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [21dar@noravank.am](mailto:21dar@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46  
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղդասյան

Հանձնված է տպարան 01.11.2016թ.  
Թիվ 5 (69), 2016թ.  
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16  
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen  
Տպագրվել է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում